



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

323.1(-99.99)

2-70







598.5 (91.542) ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ն-70

# ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՐԲՈՅԿ Ա.

Էն բեղատըն է, որ իրան ազգը  
չի ծանաչում. էն հարածաղան է,  
որ ծնողաց պատիւը չի պահում.  
Հայ Ինչ:

Բ. Ռ. ԱՌԿՐՈՑՈՅԷ

## Очерки изъ армянской жизни

Первая часть.

Выпускъ I.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1904



11.07.2013

393.1(2).99

26 SEP 2006

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

15 JAN 2010

# ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գրքով Ա.

Էն բեղաւորն է, որ իրան ազգը  
չի ծանաչում. էն հարամզաղան է,  
որ ծնողաց պատիւը չի պահում.

Հայ Թիւր

1908  
2007

Դ. Մ. ԱՌԿՐՈՍՈՅԵՅ

## Очерки изъ армянской жизни

Первая часть.

Выпускъ I.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1904

4.11.13



17.500/25

1903 года 12-го апрѣля

г. Самаркандъ.



Милостивая Государыня,  
Магда Павловна Нейманъ.

Въ концѣ прошлаго года Вы обрадовали меня сообщеніемъ, что мой дорогой дядя Г. Н. Никоговъ, по Вашему настоянію, рѣшилъ, наконецъ, опубликовать сохранившіеся у него документы, съ интереснымъ содержаніемъ которыхъ Вы были добры познакомить меня. Въ послѣднемъ-же Вашемъ письмѣ Вы говорите, что изданіе этихъ документовъ отошло на второй планъ и что Григорій Николаевичъ успѣлъ уже написать цѣлый томъ на армянскомъ языкѣ, который Вы собираетесь выпустить въ свѣтъ. Я чрезвычайно этимъ обрадованъ и изъявляю Вамъ мою искреннюю благодарность за столь горячее участіе въ литературномъ предпріятіи моего дяди, давно уже переставшаго, къ сожалѣнію, писать по армянски.

Хорошо знакомый съ условіями жизни литературныхъ тружениковъ вообще, а, въ особенности, нашихъ армянскихъ, я убѣдительно прошу Васъ, Милостивая Государыня, не отказать мнѣ въ правѣ исполнить мой непремѣнный долгъ по отношенію къ человѣку, отдавшему всю свою жизнь на служеніе благу своего народа. Тѣмъ болѣе мнѣ пріятно исполнить этотъ долгъ, что уважаемый мой дядя—воспитанникъ моего покойнаго отца Мартироса Тумановича Ахумова. Мой отецъ возлагалъ большія надежды на своего бывшаго любимца, который такъ блистательно ихъ оправдалъ впоследствии.

Въ полной увѣренности, что Вы разрешите мнѣ взять на себя всѣ расходы по изданію книги моего дяди, прошу принять увѣреніе, Милостивая государыня, въ моемъ глубокомъ къ Вамъ уваженіи.

*Аветисъ Ахумовъ.*

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 4 Ноября 1903 года.



„Пушкинская Скоропечатня.“ Лештуковъ, 4



## ՅԱՌԱՉԱՐԱՆ

Այս աշխատութեան մէջ ռուսահայերիս բարոյական, մասամբ էլ մտաւորական վիճակն է թէք քննադատութեան առարկայ ծառայում, բայց սա աւելի մի սրտաբաց խօսակցութիւն է մեր չարգելի ազգայինների հետ, զգացումների և մտածումների գեղում, վշտերի և իղծերի արտայայտութիւն, բան թէ քննադատութիւն՝ բռնի բուն իմաստով: Իսկ աշխատութեան կցուած նամակները ներկայացնում են մի տեսակ վկայեալ հաշիւ մեր քսանուհինգամեայ հասարակական գործունէութեան \*):

«Տեսութիւնների» մէջ աւելի շահագրգիռ մասը, կարծում ենք, թէ պատկանում է հայ ժողովրդին, որի հոգեկան-բարոյական պատկերը ներկայացնում է ժողովրդի մայրերից մէկը իւր խրատներով, առածներով և հայեացքներով՝ զրքի առաջին զխում:

Հաւատարիմ մնալով այդ ժողովրդի զաւակի ունեցած պարտաւորութիւններին, խոչնդոտներով և

\*) Հաշուելով 1878 թուի մարտի 7-ից, երբ մեր առաջին թղթակցութիւնը, Ուտեացի ստորագրութեամբ, երևաց «Մշակի» №34ի մէջ: Փետրվարի 17ին գրուած այդ գրութիւնը ուղարկուած էր Օլթուց, ուր գնն. Շօլիօվնիկովը նշանակած էր մեզ Օլթուցի նւորական շրջանապետի (начальникъ военного округа) օգնական:



գրկանքներով լի մեր գործունէութեան ընթացքում՝ մեր շանքերի ու ճիւղերի մէջ կէտ նպատակի է եղել հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը և նորա արժանեաց շատագոյնութիւնը, ծղտելով այգու նորա մէջ գիտակցութիւն արթնացնել և առաջնորդող դասակարգը՝ ինտելլիգենցիան զգաստացնել, թէ ի՞նչ եղանակով նա պիտի վարէ ժողովրդի առաջադիմութեան գործը: Մինչև զրականութեան ամբողջովին անձնատուր լինելը, պաշտօնական ասպարէզի մէջ ևս, Տանկահայաստանում և Ռուսաստանում, ո՛չ մի առիթ բաց չենք թողել առ ժողովուրդն ունեցած մեր պարտաւորութիւնները կատարելու, ինչպէս կը տեսնէ ընթերցողը «Տեսութիւնների և Նամակների» մէջ:

Գործունէութեան ընդարձակ ասպարէզ ներկայացել է մեզ Կ.Պոլսում, 1881 թուից սկսած: Երիտասարդութիւնն է եղել պատճառը, թէ՛ տաք սեմպերամենտը, բայց խոստովանում ենք, որ ժողովրդասիրական զգացումների ազդեցութեան տակ՝ այնտեղի հայ ինտելլիգենցիան, ազգային մարմիններն ու այլևայլ ընկերութիւնները լրագրաց մէջ հարուածելիս՝ ծայրայեղութիւններից զերծ չենք եղել: Բայց տաճկահայ ինտելլիգենցիան զնահատելով մեր զգացումների անկեղծութիւնը, ներեց մեզ այդ ծայրայեղութիւնները, լիուրի զոհացում տալով մեզ էական խնդիրների մէջ, որոնց մասին 1881-1883 թուականներին շատ է խօսուել Կ.Պոլսի հայ թերթերի, նոյնպէս և «Մշակի» էջերում:

1891 թուին վերադառնալով Ռուսաստան,

բնական էր, որ մեր ձգտումը և նպատակը միևնոյնը պիտի մնային— ստանձնելով այս անգամ հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը մայրաքաղաքի ռուս մամուլի մէջ, որին աշխատակցած էինք արդէն 1880 թուականին Ս.Պետերբուրգում, իսկ յետոյ Կ.Պոլսից: Իժնդակ պարագաները սակայն բաւական ժամանակ արգելք եղան Ս. Պետերբուրգի մամուլի մէջ ինչպէս հարկն է աշխատելու: Բայց մի կերպ ազատուելով ծանր ճգնաժամներից, յաջողուեց անձնատուր լինել զրական զբաղումներին \*): Ի միջի այլոց 1899 թուին լոյս տեսաւ զերմանացի գրագիտուհու՝ օրթ՝ Մագդա Նէյմանի «Армяне» աշխատութիւնը, որին բաւական նիւթեր մատակարարելու առիթն ունեցանք \*\*): Ռուս հասարակութեան աչքում բարոյապէս ընկած, չարաչար զրպարտուած և նախատուած չարաբախտ հայ ժողովրդի պաշտպանութիւնն եղաւ այդ աշխատութեան ձեռնարկելու նպատակը: Այս առիթով հարկ է ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանդամանքի վրայ:

Բազմիցս անիծեալ Բիւզանդիոնի անկումից

\*) 1892 թուից մինչև այսօր Հայ ազգութեան վերաբերեալ մեր գրածները՝ „Русская жизнь“ „Новости“, „Мировые Отголоски“ և „С.-Петербургскія Вѣдомости“ լրագիրների մէջ մի մեծ հատոր կը կազմեն, որը մտադիր ենք առանձին հրատարակութեամբ լոյս ընծայել, եթէ միջոց գտնուի:

\*\*) Այդ գրքի երկու առաջին մասերը նախ գերմաներէն գրուեցին և հրատարակուեցին Ս.Պետերբուրգում «Neue Revue» շաբաթաթերթի մէջ:



յետոյ չարանենդ յոչն կրօնաւորները խուճբ խուճբ ցրուեցին Ռուսաստանի չորս կողմերը և՛ բոչն դնելով ռուսաց վանքերի և եկեղեցիների մէջ, գէպի հայերը տաժած իրանց պատմական ատելութիւնը սկսեցին արծարծել կրօնապաշտ ռուս ժողովրդի բոլոր խաւերում, ներկայացնելով հայերին իբր Սրիոսին հետևող հերետիկոսներ, Քաղկեդոնի ժողովր չճանաչող հերձուածողներ, չարագրգիւ, նենդ, խաբերայ և ապականուած մի ժողովուրդ: Յերիւրեցին ամեն տեսակ առասպելներ այն առասպելների նման, որ յերիւրում են չինացիները եւրոպացիների մասին: Ասում էին, օրինակ, թէ հայերը՝ ինչպէս Աստուծուց անիծուած և ուղղագաւան սուրբերից նզովուած արարածներ, մօր արգանդից այնպէս հոտած և կեղտոտ են ծնւում, որ նորածինների դարչահոտութիւնը կտրելու համար մի մատ աղով ծածկում են նորանց ամբողջ մարմինը: Թէ հայերը հրէից նման սոխով և սխտորով ապրող մարդիկ են, ուստի նորանց բերանից միշտ դէշ հոտ է գալիս, և այլն և այլն: Եւ այսպէս, ատելութիւն ու զգուանք ներշնչելով ռուս ժողովրդին գէպի հայերը, այդ ատելութիւնն արծարծուելով արծարծուեց և խոր արմատ ձգեց պարզամիտ ռուսների սրտի մէջ: Հայերին սկսեցին ամենուրեք անուանել «տրիկլեատից և սալեօնի արմեաշկայ» — երիցս անիծուած և աղած դարչելի հայ, կամ սովորաբար «պրօկլեատից (անիծուած) արմեաշկայ» \*):

\*) Հայերին անուանարկելու և գէպի մեզ անվտա-  
հութիւն, զգուանք ու ատելութիւն ներշնչելու մէջ փոքր

Ռուս հասարակութիւնն այդ նախապաշարու-  
մներով վարակուած, իւր մեծամասնութեան մէջ  
մնաց հայատեսաց, թէև վերագրելով իւր ատե-  
լութիւնը — մանաւանդ վերջին ժամանակներում —  
ուրիշ և բոլորովին անհիմն պատճառների: Ատելու-  
թեան բուն շարժառիթը զգացմունքի մէջն էր.  
«Եթէ ատելութեան աչքով հրեշտակին նայես,  
հրեշտակը սատանայ կ'երևայ. իսկ սիրոյ աչքով  
սատանային նայես, սատանան հրեշտակ կը դառ-  
նայ», ասում է Սաադին:

Ռուսաց բարձրագոյն դպրոցներն աւարտող  
հայ ինտելլիգենցիան, փոխանակ իւր ազգի պատուոյն  
նախանձախնդիր, պաշտպան կանգնելու և կարողա-  
ցածին չափ յիշեալ նախապաշարումների դէմ մա-  
քառելու, ո՛չ միայն տնտարբեր մնաց գէպի այդ  
պարտաւորութիւնը, այլ տմարդի և վատշուեր  
ընթացք բռնելով՝ սկսեց ըստ տեղին հայատեսաց  
ձեւանալ, «երիցս անիծուած արմեաշկաներից» ջո-  
կուելու համար: Ուստի, մեր դիպլոմաւոր ինտելլի-  
գենտները ռուսաց համարման արժանանալով, ընկան  
«կարգին մարդկանց» շարքը՝ «խսկական արմեաններ»  
— հայեր ճանաչուելով. իսկ անլիզու, անծայն և ան-  
պաշտպան խեղճ հայ ժողովուրդը մնաց նոյն «անի-  
ծուած արմեաշկաներից» բաղկացած:

մաս չեն ունեցել — ցաւալի է ասել — և վրացիք, որոնք  
կատարել են սիստեմատիբաբար այդ տղեղ դերը 1800  
թուականից իվեր, երբ Աբաստանը կցուեց Ռուսաստանին  
յիշեալ թուականի դեկտ. 22ին ստորագրուած կայսերական  
Տրովարտակով:



հակահայկական պրօպագանդան մայրաքաղաքի մամուլի մի քանի օրգաններում մեծապէս սաստկացաւ՝ Ճանկահայաստանում տեղի ունեցած վերջին շարժումների ժամանակ: Այդ շարժումների մէջ ռուս մամուլի մի ազդեցիկ մասը նկատուեալ էր հակահառափարական ծրուածներ, և հայերի դիւսին բարձուեալ էր խիստ ծանր ամբաստանութիւններ, զրպարտութիւններ, վերագրուեալ էր դաւադրական պէսպէս միտումներ և թշնամական նկրտումներ: Հայ ժողովուրդն իւր ընդհանրութեան մէջ նախատուեալ էր, անարգուեալ և տղմի մէջ թաթախուեալ:

Ազդի համար այսչափ ծանր հանդամանքների մէջ կարելի էր արդեօք հայ ինտելլիգենցիայի վրայ յուսալով լուռ կենալ և պէտք չէր արդեօք հրապարակ դուրս գալ՝ ռուս ինտելլիգենցիայի հետ հիմնաւորապէս խօսելու և ապացուցանելու, թէ նա գատելով և գատափետելով հայ ժողովուրդը՝ «ամենափոքր գաղափար իսկ չունի նորա մասին, և Ամերիկայի բիզոններին ու Աֆրիկայի թռչուններին թերևս շատ աւելի է ճանաչուեալ, քան թէ իւր քթի տակ ապրող հայերին» \*). թէ «ռուս ինտելլիգենցիան առհասարակ ո՛չ շնորհք ունի Ռուսաստանի մէջ ապրող ազգերն ուսումնասիրելու և ո՛չ հակուեալ անաչառութեամբ ու արդարութեամբ նորանց մասին գատելու» և այլն \*\*):

Բայց այսչափը հերիք չէր, այլ պէտք էր վեր հանել հայ ժողովրդի պէսպէս բարեմասնութիւնները,

\*) Տես «Армяне» էջեր 134

\*\*) Տես «Армяне» էջեր 170—176

ռուս և ուրիշ ազգերին նորա մատուցած մեծամեծ ծառայութիւնները, նորա կատարած քաղաքակրթական դերը եւրոպական և ասիական մի քանի ազգերի պատմութեան մէջ \*): Միանգամայն անհրաժեշտ էր հայերի պատմական անցեալը պարզել և առատ փաստերի վրայ հիմնուեալ խիստ վերլուծութեամբ քննել ու ցոյց տալ նորա անչափ փալլուն կողմերը, և ընդհանուր մարդկութեան համար պատուաբեր երևոյթներն ու իրօգութիւնները, և այլն \*\*):

Գալով մեր դիպլոմատը, երկդիմի, ամարդի և եսական ինտելլիգենտներին, պէտք էր չալտնել և ապացուցանել, թէ «երիցս անիծուած արմեաշկաները» հէնց այդպիսիներն են, այլ ոչ թէ ռուսերէն չիմացող կամ քիչ իմացող հայ ժողովուրդը \*\*\*):

Ինչ կը վերաբերի ռուսահայ մամուլի օրգաններին, նորանց մեծադոջն մասը, ազգային պահպանողական ուղղութեան պատճառով, ռուս ինտելլիգենցիայի կողմից ճանաչուեալ էր ընդհանրապէս «չարամիտ, չարազրգիւ, խառնակիչ և վնասակար»: Իսկ ո՛չ եկեղեցի, ո՛չ ազգութիւն, ո՛չ պատմութիւն, ո՛չ աւանդութիւն ճանաչող և Գրիգոր Սրժբունու «լուսամիտ ու կրթիչ» ուղղութեան հետևող «ազատամիտ և կոսմոպոլիտ»-աշխարհաքաղաքացի օրգան «Մշակը» ճանաչուեալ էր «բարեմիտ, համակրելի և քաջալերութեան արժանի...»:

Պէտք էր այդ մասին ևս խօսել և բոլորովին

\*) Տես «Армяне» էջեր 1—61 և 132—197

\*\*) Տես «Армяне», էջեր 68—131

\*\*\*) Տես «Армяне» էջեր 198—204



հակառակն ապացուցանել, ինչպէս որ ցոյց տրուեց  
այնչափ շախշախիչ փաստերով, թերևս փոքր ինչ  
բուռն եռանդով\*):

Ամենայն համարձակութեամբ ռուս ինտելլի-  
գենցիայի հետ այսպէս խօսելուց յետոյ, ռուսահա-  
յերի զարգացած դասակարգից և զիպլոմաւոր ին-  
տելլիգենցիայի այն մասից, որը սերտ կապ է պա-  
հել իւր ազգութեան հետ, շա՛տ աւելի մեծ համակ-  
րութիւն էինք սպասում «Армяне», գրքին, քան  
թէ նա ցոյց տուեց. թէ և չէ կարելի ուրանալ, որ  
այդ համակրութիւնը շատերի կողմից յայտնուեց՝  
օր. Նէյմանին գրած բազմաթիւ քաջալերական և  
երախտագիտական նամակներով և գրքերի յաջող  
տարածմամբ\*): Այսուամենայնիւ մեզ համար լիովին  
պարզուեց այն տխուր իրողութիւնը, թէ ռուսա-  
հայ ժողովրդի զարգացած դասակարգի մէջ իսկ՝  
ազգային գիտակցութիւնը դեռ շատ ստոր մակար-  
դակի վրայ է կանգնած. մինչդեռ ազգային գոյու-  
թեան պահպանման տեսակէտից՝ այդ գիտակցու-  
թիւնը խիստ անհրաժեշտ է և էական պայման է  
համարուում:

Ահա այս հանգամանքը, ո՛չ սակաւ և օր.  
Նէյմանի եռանդուն յորդորները զրգեցին մեզ  
այս աշխատութեան ձեռնամուկ լինելու \*\*\*):

\*) Տես «Армяне» էջեր 204—279

\*\*\*) Այդ, ինչպէս և մի քանի նշանաւոր օտարազգիների  
կողմից գրուած քաջալերական և համակրական նամակները  
պահուած են օր. Նէյմանի մօտ, և թերևս մի օր լԾԿ  
կ'ընծայուին առանձին հրատարակութեամբ:

\*\*\*) Օր. Նէյմանը սիրայօժար յանձն առաւ հրատարա

Աշխատութեան հիմնական միտքը և գլխաւոր  
նիւթը մեր ազգային գոյութեան խնդիրն է: Չնայե-  
լով այս խնդրի կարեւորութեան, մենք մեզ բնաւ  
չենք օրօրում այն յուսով, թէ գրքով—այն էլ  
հայերէն գրուած—հնարաւոր է սթափեցնել ռու-  
սահայերին և նորանց մտքերի մէջ մի չեղաշրջում  
առաջ բերել:

Նախ՝ որ ռուսահայերիս մէջ գիրք կարդալն  
ընդունուած սովորութիւն չէ և ընդհանրապէս  
համարուում է «սլարապ մարդկանց գործ». իսկ կար-  
դացողը կը կարգաւ սոսկ այն մասը կամ այն տս-  
ղերը, որոնք ո՛րէէ առնչութիւն ունին իւր անձնա-  
կանի հետ. մնացածը նա չի կարգաւ, թէկուզ աշ-  
խարհիս բոլոր գովեստները կամ պարսաւները ընդհան-  
րութեան վրայ թափուած լինին: \*)

Ցաւալի է ասել, թէ ազգային գոյութեան  
խնդիրը՝ մեր յարատեւութեան կամ կորստեան

կութեան միջոցների և աշխատութիւնը տարածելու մա-  
սին հոգալու, որը մեր ամենօրեայ գրական զբաղումների  
մէջ, ինչպէս աշխատակցի „С-Петербургскія Вѣдомости,“ ի՛  
բիչ թեթևութիւն չէ:

\*) Այսպէս, օրինակ, ռուսահայ համալսարանական ին-  
տելլիգենցիան, մանաւանդ «ազատամիտ և կոսմոպոլիտ»  
կարգին պատկանողը կարդաց «Армяне» գրքի միայն չորրորդ  
մասը, բնաւ չօղջելով հետաքրքրուել հայ ժողովրդի ան-  
ցեալով և ներկայով: Եւ դա շատ բնական է. այդ անագի  
ինտելլիգենցիան ո՛չ ազգութիւն է ձանաչում և ո՛չ ազ-  
գային պատմութիւն, այլ իբր թէ մարդկութիւն գաւա-  
նելով՝ մարդիկ է խաբում, շահաւոր ասպարէզի մէջ առա-  
ջանալու համար:



նկատմամբ, հայի անձնականի հետ ասես թէ ոչինչ կապ չունի. սորա պատճառն այն է, որ հայր չունի ազգային ես, այլ ունի սոսկ անհատական ես, ինչպէս այդ պիտի բացատրենք մեր «Տեսութիւնները» մէջ: Ուստի, կորուստ բառը մեր մէջ հասկացուած է սոսկ անհատապէս տուժելու իմաստով, այն էլ նիւթական առմամբ. ինչպէս և պարտաճանաչութիւն բառը հասկացուած է փողի պարտքը խոստացած ժամանակին հատուցանելու մտքով:

Այս իսկ պատճառներով խիստ դժուար է և գրեթէ անյուշալի, որ ազգային կորստեան և պարտաճանաչութեան վրայ արած մեր խօսքերն ո՛րք է իրական արդիւնք ունենան, որի մասին խորապէս ցաւում ենք: Բայց և այնպէս պարտաւորութիւն ենք համարում պարզել էական նշանակութիւն ունեցող ինչ-ինչ հարցեր: Օրինակ, մեր ազգային մարմինը վարակուած չէ՞ արդեօք դժուարաբոյժ ախտերով և պատած չէ՞ վտանգաւոր վերքերով, թէ լիովին առողջ է՞ դեռ. ընդ երկար ապրելու ընդունակ: Իրա՞ն է, որ լերան գլխից տեղատարափ հեղեղ է փրթել և սրբնթաց մօտենում է մեզ սրբելու տանելու համար, թէ դա ծառերը միմեանց զարնող անցողական մրրիկ է, որից ոչինչ վտանգ չկայ մեր տները և անձերի համար: Մեր գոյութեան հիմքը քարի և ապառաժի վրա՞ն է հաստատուած, թէ աւազի և փխրուն հողի: Որո՞նք են արդեօք մեր զօրաւոր և տկար կողմերը: Ազգային զիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնը որ աստիճան է զար-

գացած հայերիս մէջ: Ի՞նչ վճիռներ են արձակուած այլևայլ մարդիկ մեր ազգային գոյութեան մասին. ի՞նչ կարծիքներ են յայտնուած հայատեաց օտարները և դասայլիբ հայերից շատերը մեր ազգի բարոյական յատկութիւնների վերաբերմամբ: Պիտի կարողանա՞նք արդեօք չարատեւել մեր գոյութեան մէջ, թէ այլևս ճակատագրապէս դատապարտուած ենք կորստեան և արդէն կորստեան ծանապարհի վրայ ենք ու խօր անդնդի ափին կանգնած, և այլն:

Քննելով և վեր հանելով այս ամենը, մեր նպատակն է, ասում ենք, քիչ թէ շատ զիտակցութիւն արթնացնել ուսահայերի գէթ առաջաւոր դասակարգի մէջ և մղել այդ դասակարգի մարդկանց մտքերը դէպի պարտակատարութիւն և ինքնապահպանութեան միջոցների ձեռնարկում:

Շատ բարեբախտ պիտի համարենք մեզ, եթէ չաչողուի հէնց մի փոքր հասնել մեր նպատակին. հակառակ դէպքում պիտի վա՛յ տանք մեր գլխին, ողբանք որ հայ ենք ծնուել և իսպառ չուսահատ անցկացնենք մեր կեանքի մնացորդը՝ ինչպէս կորած ազգի անդամ: Տա՛յ Աստուած, որ այսպէս չլինի....

Իսկ թէ ինչպէս պիտի վերաբերուի մեր աշխատութեան կոսմոպոլիտ դասակարգը, ի՞նչ ազմուկներ պիտի բարձրացնէ, ի՞նչ վախասուն արձակէ նորա օրգանը, ո՞րչափ հայհոջանքներ և լուտանքներ պիտի թափէ մեր գլխին, ի՞նչ նոր զրպարտութիւններ պիտի չերիւրէ և առասպելներ հնարէ ու ձեռքի տակից տարածէ պարզամիտների մէջ — դա մեզ համար բոլորովին միևնոյնն է, որովհետև



Թէ՛ կոսմոպոլիտների և Թէ՛ մեր վաղմի այլ հակառակորդների ու բաղձաթիւ Թշնամիների բարբառանքներն ու գործ դրած վատութիւնները չեն կարողացել և չպիտի կարողանան մի մազի չափ իսկ ծռել մեզ ուղիղ զծից, որով ընթացել ենք անշեղ, անսպթաք և պիտի ընթանանք, քանի որ մեր սրտի մէջ աղբի սէրը եւ ճշմարտութեան զգացումը չեն հանգել, և որոնք պիտի հանգին մի-միայն մեր վերջին շնչի հետ:

\* \* \*

Ընթերցողների ներողամտութիւնն ենք խնդրում «Տեսութիւնների» մէջ ընդհանուր նշանակութիւն չունեցող շեղումների համար, որոնք կրում են անձնական բնավորութիւն, վեր հանելով մեր անհատական կեանքից մի քանի դէպքեր և միջադէպեր: Կարծում ենք, թէ հինաւորաց մարդուն առհասարակ չատուկ մի թուլութիւն է, որ երբ նա խօսում է ընդհանուր գործերի մասին, մէկ մէկ շեղում է բուն խնդրից և սկսում է լիշէլ իւր գլխով անցածները. մանաւանդ այնպիսի հասարակութեան հետ խօսելիս, որի անդամներին նա համարում է իւր հարազատները—եղբայրներն ու քոյրերը:

Շատ բառերի բացատրութիւնը փակագծի մէջ գնելով, նկատի ենք ունեցել ինչպէս ռուսահայ ընթերցողներին, այնպէս և արտասահմանի ազգայիններին՝ Թիւրքիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլուր:

«Մենք» և «ես» գերանունները գործ են ածուած թէև ըստ տեղին, բայց ուղիղն ստա՞ծ սիրով խոյս կը տալինք անախորժ հնչող այդ բառերի գործածութիւնից, եթէ միայն հնարաւոր լինէր:

Սյս գիրքը բաղկացած է 9 գլուխներից և 15 նամակներից: Սկզբում որոշել էինք ամբողջ գիրքը միանգամից հրատարակել, բայց մի քանի պատճառներով փոխեցինք այդ որոշումը և սկսում ենք զբրբայրկներով լոյս ընծայել:

Ռուսերէն վերնագիրը զրուած է ռուս գրափաճառների գիւրութեան համար:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

17 մայիսի 1903 թ.

Ս. Պետերբուրգ:

1002  
1003  
8

Յ. Գ. Համոզուած լինելով, որ մեր պարբերական մամուլի մեծագոյն մասը, ըստ իւր բարի սովորութեան, կամ լռութեամբ պիտի անցնի մեր զրութեան վրայից, կամ պիտի ծաղրէ ու հաչիոյէ, և թերուզէ՞մ խօսողների ձայնը խեղդէ՛ չտպագրելով նորանց յօդուածները, խնդրում ենք մեզ համակիր, նոյպէս և հակակիր գտնուողներին չաչանել իրանց կարծիքները մասնաւոր նամակներով, որպէսզի կարողանանք այդ նամակներն առանձին հրատարակութեամբ լոյս ընծայել — եթէ հեղինակների թոյլտուութիւնը լինի—կամ թէ հրատարակել հետեւեալ զբրում:

Լուսանկարը զրուած է բարեկամների ցանկութեամբ:



Մեր աշխատութիւնը՝ ճանաւանդ լեզուի կողմից՝ շատ թերութիւններ պիտի ունենայ, որի համար գրագէտ մարդկանց ներողամտութիւնն ենք խնդրում:

Գ. Ն.

Եթէ Աստուած գոյութիւն իսկ  
չունենար, պէտք էր Նորան Տարել:

Աստուծուն հաւատալն ազատում է մարդկանց անդունդի ակից:  
Վօլտեր:

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿՆԿԱՅ ԽՐԱՏՆԵՐԸ, ԱՌԱՆՆԵՐԸ  
ԵՒ ՀԱՅԵԱՑԻՆԵՐԸ:

## I.

Կեանքիս աշնան մէջ հայերից հեռու, բայց հայութեան միշտ յարած, չիշեցի դարունն ու ամառը և ուղեցի հաշիւ տալ ինձ՝ թէ ի՛նչպէս դարձան այդ երկու շրջանները, ի՛նչ յօյսերով ու իղձերով սկսուեց դարունը և ի՛նչպէս անցաւ ամառը:

Կենցաղավարական պէսպէս դիւրութիւնների և վաչելչութիւնների կողմից երկուսն էլ անցան, որպէս դառնաշունչ, ձմեռ. — շարունակ կռիւ՝ և՛ գոյութեան և՛ ձգտումների համար. կռիւ՝ կամքերի, կրքերի և կարծիքների դէմ. կռիւ՝ զօրաւոր անհատների և դասակարգերի հետ. կռիւ՝ ազգի անունով խօսող վատերի և խարեբանների, զոգերի և աւագակների հետ. ճիգեր՝ ազգօգուտն ազգալինասից զատելու. ննզք, սուտք, վատք, դաւք, չարն երեւան հանելու, չարիքը խափանելու, բարիքն առաջացնե-



լու տենչով: Մէկ խօսքով՝ շարունակ պայքար նպատակի, գաղափարի, ազգային սիրոյ և բարօրութեան համար:

Այսպէս է անցել կեանքիս մեծագոյն մասը:

Այս երկար ու դժնդակ ասպարէզի մէջ շատ չարիք և շատ էլ բարիք տեսնելով, հասաչ այն եզրակացութեան, թէ հայ կիներ՝ Գրիգոր Արծրունու «խաւարածիտ, չետագէժ և բարոյականից զուրկ»<sup>\*)</sup> համարած ժողովրդի մայրերից մինը բոլորովին իրաւացի է եղել, կրկնելով ստէպ հետեւեալ խօսքերը:

\* \* \*

Ո՛րդի-չան, չարութիւնը աշխարհումս շատ աւելի է, քանց բարութիւնը, բայց մարդ եթէ մտքովը մի բարի նպատակ դնի և ուզի էդ նպատակին ճշմարտութիւնով և արդարութիւնով հասնիլ, բարութիւնը միշտ չաղթող կ'ինի չարութեան վրայ: Էդպէս մարդը օձերի և դադանների մէջից անցկենալով, գողերին և աւազակներին հանդիպելով, ոլոր-մոլոր և անչայտ ճանապարհների մէջ շուարուելով, մութ անտառներ և վարար գետեր պատահելով, էլի չի կորչիլ, այլ ամեն փորձանքներից և պատուհասներից սաղ-սալամաթ (ողջ ու անվտանգ) կը պրծնի և իրան ուխտին կը հասնի: Աստուած միշտ օգնող է ճշմարիտ խօսողին, արդարութիւնով վարուողին, ուրիշի ցաւը քաշողին, խիղճ ու գութ ունեցողին, բարիք անողին և երախտիք ճանաչողին:

\*) Տես «Մշակ» 1880 թ. № 25

Տուած խրատներիցս մի՛ նեղանալ. ասած խօսքերիս վրայ մի՛ ծիծաղիլ. մայրական պատուէրը մի՛ արհամարհիլ. փորձուած մարդիկների խօսքերը զուլաղ-արդի (ականջի ետև) մի՛ անիլ: Գլխիդ վրայ կը փորձես, ուրիշների վրայ կը տեսնես, այն ժամանակ կը հասկանաս, որ հօրանց խօսքերը զորդ (ճշմարիտ) են իլել (եղել), նրանց ասածները կեանքի փորձառութիւնից և Աւետարանի ճշմարտութիւնից են վեր առած իլել:

Դէ՛, լսի՛:

Չարութեան վերջը կործանուածն է: Յափշտակողի ապրանքը շուտ կը փտի: Հարամ (անարդար) վաստակը սէլը (հեղեղը) կը տանի: Չալըմի (բռնակալի) զլխին քարը միշտ կախ կ'ինի: Անխղճմտանքի պատիժը ետքիցը ման կը գայ: Անօրէնին հրեղէն սուրը (կայծակը) շուտ կը գտնի. անօրէնի դատաստանը մարդիկ էլ չանեն, Աստուած կ'անի: Եթիմի (որբի) արտասուքը լացացնողին աղու (թօյն) կը դառնայ. եթիմին օր չտուողը սեւ օրի կը հասնի. եթիմի տէրն Աստուած է, զալըմի առաջնորդը՝ սատանան, կը տանի, կը տանի ու մին բա՛-ա՛-ցիւր (բարձր) դայի (ժայռի) զլխից բռունչ կը տայ (կը հրէ), վեր կը գցի: Աստուծու պահածը կիւլը (զայլը) չի ուտիլ: Հարամ օչաղը շուտ կը հանդչի: Շնացող մարդը շան պէս կը սատկի:

Ոչ ով իրան զլխի վրայ թող չի ապաւինի. ողորմածիողի հէրս ասու՛մ էր՝ խորհուրդ մարդկանց,



կամք Աստուծոյ: Ոչ ով չասի՝ ե՛ս եմ, ե՛ս, մի օր կը մնայ սեւերես: Իրան զլուխը շատ հաւանողը, վերջը զլուխը կը թակի: Երախտիք չիմացողը անօրէնն է. անօրէնի զիւանը Աստուած կ'անի:

Հաւատը մարդին սկի չի խաբիլ, եթէ համբերութիւնը չի կորչի: Հաւատացողի կեանքը արդար պիտի ինի: Հաւատ չունեցողը ելքեանսրդ (առանց առաջատի) գեամիին (նաւին) կը նմանի, ամեն քամիից գէսուղէն կը ծռուի ու շուտ կը խորտակուի: Տանջանքների մէջ էլ քաղցրութիւն կայ, եթէ տանջուողը հաւատացող է. միաքը միշտ գէպի Աստուած կ'իւնի և յոյսով կ'ապրի. լէն օրին համեմելիս էլ՝ Աստուծու գորութիւնը աւելի լաւ կը ճանաչի: Տանջանքի վերջը բախտաւորութիւն է \*):

Էն բեղասրլն է (վատազգին, վատացեղը), որ իրան ազգը չի ճանաչում. էն հարածղազան է (ապօրինածինը, պռունկիորդին), որ ծնողաց պատիւը չի պահում. ազգի պատիւը չի պահողը՝ ծնողաց պատիւը չունց կը պահի, երբ ծնողաց ծնողը ազգն է: Օտարի առաջին քեզ պատուով պահի, որ ազգիդ պատիւը վէր չի բնկնի: Օտարի հետ ազգիդ վրայ խօսելիս՝ վատ մի՛ խօսիլ, քեզ վատացրած կ'իւնես \*\*):  
Սզգի կեանքը մին ծով է, զրաղից (ափից) մտիկ տալիս՝ խորութիւնը չես իմանալ \*\*\*):

\*) Вѣрнѣйшій путь къ счастью лежитъ черезъ страданіе.

Ռուս հեղինակ.

\*\*\*) Լսում ես, զիպլոմաւոր ինտելլիգենտ:

✓ \*\*\*\*) Բայց Գրիգոր Արծրունին ափից խկ չնայած՝ խորութիւնն իմացաւ:

Արժանաւոր մարդի արժանիքը չիմացողն արժանիք չի ունենալ: Ուժից բնկած տղամարդին (քաջին) արհամարհողը՝ նամեարդ (ամարդի, փոքրոգի) է: Աստուած մեարդին (վեհանձն և առատասիրտ մարդուն) նամեարդին կարօտ չի անի: Նամեարդի օրը փիտտեղ կը մթնի: Նամեարդի նամուար մի՛ քաշիլ, առաջի թշնամիդ նա՛ կը դառնայ. նամեարդի հետ բարեկամութիւն մի՛ անիլ, խէր չես տեսնիլ: Լաւանդի (ստախօսի, կեղծաւորի, շաղակրատի) խօսքին մի՛ հաւատալ. թուրքը անօրէն է, խօսքը օրինաւոր. — թուրքն ասում է՝ լաւանդըն սէօղի՛ փալուդըն քէօղի (լաւանդի խօսքը նոյնն է, ինչ կազնու կրակը, որն՝ ինչպէս չայտնի է, շուտ կը հանդչի): Լաւանդի և նամեարդի հետ բարեկամութիւն անելիս՝ զգուշութիւնը ձեռքիցդ մի՛ թողիլ, նա զլխիդ օչին կը բերի (խող կը խաղայ): Եթէ լաւանդը ես (կամ) նամեարդը քեզ խաբեն, մի՛ նեղանալ. խաբուողը չի խաբեբան, խաբողն է: Ամեն մարդին դալադիւզ (նենգ, խաբեբայ) համարողը, դալադիւզը կ'իւնի: Ազնիւ մարդը շուտ կը խաբուի, ամենքին էլ իրան նման ազնիւ համարելով: \*)

Փորձուած մարդի խրատները լսի՛, պակասութիւնները մի՛ տեսնիլ: Խելօք ու աշխարհք տեսած մարդին խելք մի՛ սփորացնիլ, թեթեւամտութիւն է: «Ամեն բան զիտեմ» ասողի խելքը պակաս կ'իւնի.

\*) Чѣмъ челоуѣкъ честнѣе, тѣмъ менѣе подозрѣваетъ онъ другихъ въ безчестности.

Ռուս հեղինակ.



որչափ էլ մարդ շատ բան իմանայ, արախայից (երեխայից) էլ, պելից (խենթից) էլ նոր բան կը լսի \*):

Իմաստուն մարդը իրան չի գովիլ, իմաստութիւնը մէջդան կը հանի \*\*): Շնորհք ունեցողը չի ասիլ՝ թէ Ս. Կարապետ եմ գնացել. Սասուած մարդին եթէ շնորհք չի տուել, Ս. Կարապետն ի՞նչ անի: Զուրր ծանապարհը կը գտնի, շնորհքն էլ իրան տեղը: Շնորհքով մարդը ուրիշին էլ շնորհք կը սփորացնի: Անշնորհքը քիչ արածը մեծ բան կը համարի: Տիւնարով մարդը (քաջը, կտրիճը) տեղը նստած՝ «քեաստարամ, բասարամ» (կը շարդեմ, կը փշրեմ) չի ասիլ, հիւնարը մէջդանուծ նշանց կը տայ: Շատ եարգներ (զէնքեր) կապելով մարդ քաջ չի ինիլ, քաջութիւնը սրտի մէջ է: Աղա մարդը չի ասիլ՝ թէ «պպս աղազագայ էր», իրան աղաչութիւնը նա գործով նշանց կը տայ \*\*\*): Անուանի՛ քաջը եւ աշրդը ինքը իրան մեծ անուն չի դնիլ, ուրիշները կը դնեն էդ անունը \*\*\*\*):

\*) ա. Հանձարը կարող է չիմանալ շատ բաներ, որ դպրոցական աշակերտն իսկ կարող է իմանալ: Լեսսինգ.

բ. Հանդիպած ամեն մարդ որեւէ կէտի մէջ իմ վարպետս է: Էմրսոն.

\*\*) Ինտելլիգենտն էլ հանուած է, էլի, դիպլոմը ցոյց տալով:

\*\*\*) Մեծ մարդիկ պէտք չունին նախնեաց անունով պարծենալու. Վոլտեր.

\*\*\*\*) Ականջը կանչի մեր խեղճուկ մամուլի մէջ փրուն ծածկանուններով յոխորտացող Ախապագունների, Քաջագունների, Բոցունիների, Այցծունիների, էլ չեմ ասում խաչագողերի.

Զրո (այլասերուած) և անշնորհք մարդը պարծենկոտ կ'ինի: Բեզասրլից ասրլգագայ չի ինիլ. էշից քէօհլան (նժոյգ) չի դառնայ, բոշայից՝ փաշայ, գեագա աղջկանից՝ խաթուն: Մեծ մարդը խոնարհ կ'ինի, քաջ մարդը՝ համեստ:

Թիւնդ քացախը ամանին կը վնասի, թիւնդ մարդը՝ իրան շանին: Ծճարիտ խօսողի գլուխը ծակ կ'ինի (աչսինքն՝ շատ կը ծեծուի): Ծճարիտ խօսողի ծին միշտ պատրաստ պիտի ինի, (որ փախչի հալածողներէ): Անմեղին որչափ աւելի գրպարտեն, Աստուած նրան աւելի կ'օգնի: Որչափ աւելի չկամներ ունենաս, Աստուած գործդ աւելի կը յաջողի: Չկա՞մութիւնը տկարութեան նշան է, նախանձը՝ չարութեան: Նախանձոտի սիրտը ալակոշկոշի (ալակոշկոշ կամ մաշկատիկալ ուտիերէն նշանակուած է չղջիկ, летучая мышь, chauve souris) եւ բալդուշի (բուր) աչքերին կը նմանի. ինչպէս որ սրանց աչքերը լիւսը կը ծակի, էնպէս էլ նախանձոտի սիրտն՝ ուրիշի յաջողութիւնը, բարի անունը և լաւ գործերը: Չարանախանձ մարդը գողից էլ փիս է. դողը մեհօտաչութիւնից (կարիքից ստիպուած) է գողութիւն անուծ, իսկ նախանձոտը վատութիւն է ցոյց տալիս ո՛չ պէտք և ո՛չ օգուտ ունենալով: Նախանձոտ մարդի գործը սկի յաջողակ չի դնալ. դնալ էլ՝ ժամանակուտը կ'ինի: Լաւ է ունենալ տասը ձեարդ (մեծահողի, վեհանձն) թշնամիներ, քանց մին նախանձոտ բարեկամ: Զեծարդ (բացսիրտ, ա-



աատածեան) մարդը չար նախանձ չի ունենայ, նրա սիրտը և ձեռքը ամենքի համար էլ բաց կ'ինի, նա ամենքի էլ լաւութիւնը կ'ուզի:

Նախանձը մարդի սրտի մէջ թագ կացած կարիճ է. մօտեցողին կը խփի<sup>\*)</sup>: Նախանձը մարդի սրտից բղխող վահր (ժահր) է. հա՛մ իրան է հօտեցնում, հա՛մ ուրիշների սիրտը խառնում: Նախանձը շատերին է խանձել, շատերի տունը քանդել, շատ մարդիկ ու ազգեր փչացրել: Նախանձը եթէ նախանձ ասել է, ինչի՞ քու անձիդ համար ուղածը՝ ուրիշի համար էլ չի պիտի ուզես, ինչպէս ասում է Սուրբ Աւետարանը:

\* \* \*

Որդին որ ջրռանում է (այլասերում է), մեղքը ծնողացն է. վարդը ժանդեալոտում (վալրի բոյսերի մէջ) չեն անկել: Էշը էշի կշտին կապես, ես վարդը կ'առնի, ես բարոցը: Որդին որ ազգից խորթանում է, յանցանքը մօրն է, որ նրա սրտի մէջ լաւ սերմեր չի գցել: Լաւ մօրիցը ազան ես աղջիկը չի վախիլ, այլ կը քաշուի: Լաւ հէրը աղին «շանորդի» չի ասիլ, «բալա-ջան» կ'ասի: Ննազանդ ու պարկեշտ աղին եթէ շատ անառակ ասես, անառակ կը դառնայ:

\*) Ահսոս, կենդանի չես, որ հարցնեմ՝ իրա՞ւ է արդեօք, թէ հայերիս սրտի մէջ թագ կացածը միայն կարիճ չէ, այլ կարիճ, օձ, մողէս, տարանտուլա, ֆալանգա միասին բուն դրած:

Լաւ կնիկը տուն կը շինի. փիս կնիկը տուն կը քանդի: Լաւ կնիկը մարդի (ամուսնու) անունը չի կտարիլ: Կնիկը որ մարդի գործին խառնուեց, տակիցը մին փիս բան դուս կը դալ: Տան գործերին մարդը չի պիտի խառնուի. առածը ասում է՝ կնիկը տանը, դուրսը բանը: Ախպօրցը միմեանցից բաժանողը կնիկը կ'ինի. փիս և լեաչառ (անզգամ) կնկանից Աստուած հեռու տանի: Եթէ սիրուն կնիկ ունենաս՝ կեղծաւորներից հեռու պահի. կնկայ խելքը մին քիչ կարծ կ'ինի, ամեն խօսքին շուտ կը հաւատի:

Եադ (օտարազգի) աղջիկ մի առնիլ, կեանքդ դառը կ'անցնի. եադ աղջիկ առնողին Աստուած զաւակ չի տալ: Աղջիկ առնելիս՝ մօր վարքին և օջաղի հալալութեան մտիկ տու. աղջկայ վրայ առած փողը քամին կը տանի:

Եթէ մարդամէջ ինես, ուրիշի ցաւից, ուրիշի ուրախութիւնից խօսի. քու խօսքդ մէջ մի՛ գցիլ, լսողների զահլան կը դնայ (կը ձանձրանան): Դարդօտի ցաւին լաւ ականջ դիր. զարիբի (պանդխտի) ախր լաւ հասկացիր: Սիրտ ունեցողին սիրապ բաց, ցաւ հասկացողին ցաւդ տաս՝ \*):

Խելօք մարդը և ասըլ (խկական, ազնուատոհմ) հաչը եթէ ցաւ հասկացող չ'ինի, սիրուն հարսին կը նմանի, որի մին աչքը շիլ է: Ազնուութեան առաջի նշանը

\*) Ի՞նչ ես խօսում, մայր, չեմ հասկանում. մեր ժամանակները սիրտս որն է, ցաւս որն է, երբ ամենքի ցաւը միայն իւր եսն ու շահն է:



ուրիշի ցաւը հասկանալն է և նրա դարդին դար-  
ման ասնելը: Կեղծաւորութիւն մի անիլ, զգուելի  
կ'ինես. կոպիտ մի վարուել, ատելի կը դառնաս \*):

Անօգնականը, եթէ թշնամիդ էլ ինի, ձեռքիցդ  
եկած օգնութիւնը մի խնայիլ: Ոչ ովի հացին մի  
դիպչիլ, մի օր ինքդ հացի կարօտ կը մնաս: Սովածի  
զլխին քարոզ մի խօսիլ, օգնութիւն արա՛. Աղքատի  
ոչ հաւատը հարցրու, ոչ ազգութիւնը, ողորմութիւն  
տու: Ողորմութիւն ապիւս, կոպէկները հեսար (հա-  
շիւ) մի անիլ:

Բարիք չանողը բարիք չի տեսնիլ. գութ չու-  
նեցողը չաջողութիւն չի գտնիլ: Արած լաւութիւնդ  
չաւ մի անիլ (մի տարածաչնիլ), դեադայութիւն է:  
Եթէ մէկին լաւութիւն անես, վրան միննաթ (պար-  
տաւորութիւն) մի դնիլ, չարչիութիւն կ'ինի:

Եթէ զոնաղներ (հիւրեր) ունենաս՝ ամենքին էլ  
մին աչքով մտիկ տու \*\*): Ղոնաղին չեն հարցնիլ՝  
իշտահ (ախորժակ) ունե՞ս: Թորենի (թոնրի) լաւ  
հացը զոնաղի առաջին կը դնեն:

Եթէ մէկից զիր ստանաս, պատասխանը շուտով  
տու, որ աչքը ճանապարհին չի մնայ, աչքը ճանա-  
պարհին պահելը մարդավարութիւն չի \*\*\*): Եթէ մին

\*) Իսկ եթէ սուտ ազգասիրութիւն և խաչագողու-  
թիւն անել սիրելի Տօ կարելի՞ է դառնալ:

\*\*) Բա, հապա շահի աչքով մտիկ տալը որ տեղ կը  
մնայ, թէ գու ուղղումես՝ եւրոպական կամ լեռնական մար-  
դավայել վերաբերութիւն սովորեցնել մեզ. զո՛ւր փափագ...

\*\*\*) Հը՛մ, մարդավարութիւն. ուսում ինչո՞ւ են ստա-  
նում, որ մարդավարութիւն էլ ունենան:

բան չի պիտի կարողանաս կատարել, խօսք մի տալ.  
խօսքը չկատարողի իրեսը սև կ'ինի (ասել կ'ուզէ՝  
ամօթապարտ կը մնայ, խիղճը հանգիստ չի լինիլ—  
եթէ միայն խիղճ ունենայ, ի հարկէ):

Մին բան որ կարող ես ինքդ անել, ուրիշին  
մի յանձնիլ: Էս օրուան անելիքը էզուցուան մի  
զցիլ: Մին գործ զլուխ չի եկած՝ չաւ մի անիլ:  
Ամեն առաւօտ «Նայր մեր» շատողի գործը յաջողակ  
չի դնալ: Եթէ սարսափելի արագ (երագ) տեսնես,  
առաւօտը իրեսդ իրեք հետ (անգամ) խաչակնքի և  
չերմեռանդութեամբ «Նայր մեր» ասի: Աստուած  
չի ճանաչողը մոլթանի է \*), ալօթք չանողը՝ մալ-  
քամուտ (°) է: Նարած վաստակով ժամ չեն շինիլ:  
Ժամի կշտին սատանայից չեն խօսիլ \*\*):

Անզգամի հետ զլուխ մի՛ դնիլ, պատիւդ կը

\*) Մոլթանի կոչուող մոնղոլական ցեղի մնացորդ-  
ները Անատոլայի նահանգումն են ապրում: Թէև վաղուց  
հետէ մոլթանիները (МУЛТАНБИ) ուղղափառութիւն են ըն-  
դունել, բայց գաղտնապէս պահած են կոպաշտութիւնը,  
և նորանց բերած մարդկային զոհերը պարբերաբար ուս  
մամուլի զբաղմանց առարկայ են դառնում:

\*\*) Իսկ ժամի մէջ յաւերժահարսերից, թղթախաղից,  
բէֆից, անային և առևտրական գործերից կարելի է խօսել,  
ինչպէս որ խօսում են շարունակ Պետրբուրգի հայոց եկե-  
ղեցում և ձերերը, և երիտասարդները, և ինտելի-  
գենտները, և վաճառականները, շատ անգամ հայհոյական  
բառեր և լիտի խօսքեր բարձրաձայն գործածելով «Ի Սրբու-  
թիւն Սրբոց»ի ժամանակ:



կորցնես: Յիմարի հետ գլուխ գնողը չիմարը կ'ինի: Գիժին ու անխելքին խրատ մի տալ, եթէ կարող ես՝ շան—ջանով (գուրգուրալով) եօլայ տար (կառավարէ). առածը ասում է՝ սեխն սապոնը ի՞նչ անի, պելին խրատը ի՞նչ անի: Կուղից, կաղից, շիլից միշտ զգուշացիր, գլխիդ խաթայ (վտանգ) կը բերեն \*):

Սրա, նրա վրայ փոթ գնողը մասխարան կ'ինի: Ուրիշի վրայ քեզ բամբասողը, քեզ վրայ էլ ուրիշին կը բամբասի: Բամբասելը և խռովելը կնկայ փեշակ է \*\*): Հայր հայից չի պիտի խռովի, ախպերութիւնը կը քանդուի: Հայր հային աղա չի պիտի ասի, ախպէր պիտի ասի և ախպերութիւնը սրբութիւնով պիտի պահի, որ սէր ու միութիւն ինի: Մին օշաղի մէջ որ միութիւն չ'ինի, շուտ կը քանդուի. մին ազգի մէջ որ սէր չ'ինի, շուտ կը կործանուի:

Խելօք մարդը եթէ թալիմ (կրթութիւն) չ'ունի, կէս մարդ է: Ուսում առած մարդը, եթէ թալիմսրդ (անկիրթ) է, քեօհլան ձիին կը նմանի՝ էշի փալանով (համէտով). ուսումը առանց թալիմի անալի կերակուրի պէս է, որչափ էլ լաւ կերակուր ինի՝ ուտողը համ չի տեսիլ. ամմա կերակուրը աղ կ'անուի, իսկ թալիմսրդ ուսումնականը կը մնայ

\*) Վաղը, շիլը չգիտեմ, բայց ազգի գլխին խաթայ բերած երեք կուղերին երեք բաղաբներում լաւ եմ ճանաչել:

\*\*) Լսում էք, անհաշտ կուսակցութիւնների պարագլուխ կանգնող («տղամարդիկ»):

անհամ: Լուս օշաղի զաւակը անթալիմ չի պիտի ինի:

Մարդամէջին շվշվողը եա հաղ ասողը (երգողը) սազանդարը կ'ինի, եա տաւարածը \*): Մարդի հետ նստած խօսելիս՝ օտը օտի վրայ չեն դնիլ, եքեախանութիւն (ամբարտաւանութիւն) եա թաշախուստ ծախել (напустить на себя важность) կ'ինի: Յօրանչելիս ձեռքդ բերանիդ ասը, ճանն կը մտնի. յօրանչելիս ձեռքդ բերանիդ տար, որ մարդիկ չ'ասեն թէ անխրատ ես: Թքելիս «աղ, թօն» մի անիլ, կշահնդ կը զգուի: Հաց ուտելիս՝ «ժրրպ-ժրրպ» և ջուր ու չայ խմելիս՝ «զուրթ-զուրթ» մի անիլ, կ'ասեն թէ սարից ես վէր եկել:

Ուրիշի խօսքը կտրողին ու մէջ ընկնողին կոտրուած գդալ կ'ասեն: Անտեղի հոհոողին էշի քուռակ կ'ասեն: Յիմար բանի վրայ ծիծաղողին ցանցար (թեթևսուղիկ) կ'ասեն: Բեղերը շատ ոլորողին լողվա (սնապանծ, fat) կ'ասեն: Հիլիին (հայելուն) շատ մտիկ տուողին Բիբի-խանում (ժաղրական անուն սեթևեթուող պառաւ թուրք կանանց) կ'ասեն: Աչքով-ունը լվ խօսողին Նազու-բաջի կ'ասեն: Բղաւելով-ճղաւելով խօսողին քառ (խուլ) Օվանէս կ'ասեն \*\*): Աչքի առաջ վէր ընկած զատը չտեսնողին քօռ Բաբախան կ'ասեն \*\*\*): Բանսարկուին, փոր-

\*) Իսկ ինտելլիգենտը չէ:  
 \*\*) Երևի թէ Վարդաշէնում եղել է այս անունով և այս յատկութիւններով մի մարդ:  
 \*\*\*) Նուխուայ խաներից մինն է եղել աչազուրկ այդ խանը:



փորձին շէլթան (սասանայ) Մարտիրոս կ'ասեն: Չեռքը պինդ և աչքը ծակ մարդին զով Բեասպար կ'ասեն: Թոյլ, վախկոտ և սկարամբիա մարդին Թիւնի-ապեր կ'ասեն: Գամիզուխ և ցանցար մարդին հաշախլի կ'ասեն: Կապրկաուր և անվաջել խօսող մարդին կինոօ կ'ասեն: Բացբերանին և ամեն մին խօսքին «հր՛, հր՛» ասողին կովլիկ կ'ասեն: Ամեն գործի մէջ խառնուողին և ամեն գործ մուստաուողին՝ մառանի կամ աղի մուկ կ'ասեն: Ծնողի խօսքը չի լսող, ծոյլ և անպէտք աղին մուհալ կ'ասեն \*): Պինդ իրեսին բուլղարի կաշի կ'ասեն \*\*): Պարզամիտ մարդին թիւլք կամ թիւրք կ'ասեն: Չարասիրտ, անգուլթ և նենգաւոր մարդին չար Յուլիանոս կ'ասեն: Թարս (հակառակ, կամակոր) մարդին լէզգի կ'ասեն: Խիստ մարդին և կծող շանը սարթ կ'ասեն (սրգեօք միջին Ասիայի սարթ ցեղի անունից չէ՞): Ոչ ովին չլսող, իրան ուզածը անող, իրան պուխը աղատ պահող մարդին՝ եօզէզի (ուզբէկ) կամ օղդան (չերքէզ իշխանների կոչումը) կ'ասեն: Կեղծաւոր, նենգ և ստախօս մարդին զզրլբաշ (պարսիկ) կ'ասեն: Փեանդ-քիթ (հնարամիտ) և ուստայ (վարպետ) մարդին Ֆեանդ կ'ասեն: Կուպիա, էշ և եարանի (վայրենի)

\*) Մուղալ կամ մոզոլ արհամարհական բառն է, որով կոչում են Կովկասի լեռնաբնակներն Ատրպատականի թուրքերին:

\*\*\*) Աւելցայի ափերից 7-րդ դարում Հայաստանով Բալխանեան թերակղզին անցած և սլաւների հետ ձուլուելով իրանց անունը արդի բուլղարներին տուած վուլգար

մարդին թարաքեամայ (թափառական թուրք ցեղ Անդրկովկասում) կ'ասեն: Աներես, դժուծ և կեղտոտ մարդին զարաչի կամ բոշայ կ'ասեն: Բարի, արդար և պարկեշտ մարդին հայ-քրիստոնեայ կ'ասեն:

Գիւրջին (վրացին) թիւնդ (կրքոտ, դիւրաբորբ) կ'իսի, ամձա սիրտը բարի: Լէզգին թարս կ'իսի, ամձա հաւատարիմ: Թուրքի լիւղիւն քաղցր կ'իսի, ամձա սիրտը խաչին (նենգ): Ռուսը փափուկ-փափուկ «բասիւշկա, մատուշկա» կ'ասի, ամձա իրան ասածը առաջ կը տանի: Օսմանլուէն չեանգ (պատերազմ) շատ կը սիրի, ամձա մեարդ (վեհանձն) կ'իսի:

\* \* \*

Ո՛րդի-շան, աշխարհքիս աղգերին ու մարդիկներին ճնանչելու համար՝ պիտի իմանաս, որ նրանք մեր բաղի (այդու) ծառերի նման են: Տես, բաղի մէջ է՝ սչափ ծառեր կան, ամձա տանձի ծառի պտուղը ուրիշ է, խնձորինը՝ ուրիշ, շմբալուլթինը (շադանակի ծառի)՝ ուրիշ, ճղոպուրինը (ընկուզենու)՝ ուրիշ, զկեռինը՝ ուրիշ, զողալի (հոնի) ծառինը՝ ուրիշ, շաֆտալինը (դեղձի ծառի)՝ ուրիշ, շլորինը՝ ուրիշ, թուլթինը՝ ուրիշ, բահլինը (կեռասենու)՝ ուրիշ, թուղինը՝ ուրիշ, Ֆնդրդինը (ակողինի ծառի)՝ ուրիշ, և էպպէս ամեն ծառի պտուղը մին մին ջուռայ (տե-

կամ բուլղար թաթարները, հաւանաբար, հաստ ու դիմացիուն կաշու առուուր են ունեցել հայերի հետ:



սակ) համ, հիւթ, կաշի, սերմ ունի: Մին ծառի պտուղը ուտելով կարող ես ասել, թէ էս ծառի պտուղը էս համը ունի, էն ծառի պտուղը՝ էն համը, ամմա ազգերին և մարդիկներին էդպէս չեօ կարող ճնան- չել: Ամեն մին ազգի մէջ լաւերն էլ կան, փիսերն էլ, թէպէտ ամեն ազգն էլ իրան խասեաթը (բնա- ւորութիւնը), վարքը, ազաթներն ու սվորութիւն- ները ունի: Հէնց մին ազգի մէջ էլ ջոկ-ջոկ խա- սեաթներ, արք ու վարքեր, թհեարներ (ձեեր), նստել- վերկենալու, ապրելու հանգը (կերպը), ասել-խօսելու եղանակը կայ:

Ողորմածհողի հէրս աշխարհք տեսած մարդ էր, միշտ վարդապետների և տէրտէրների հետ էր նստում-վերկենում, ամենքից էլ խօսք ու խրատ էր սվորում. տեսած-լսածներն էլ նրանց էր ասում ու պատմում: Ես էլ ջահիլ աղջիկ էի. սուփլան դցելիս, ձեռքերին ջուր ածելիս, կերակուրները բերելիս՝ երկու ականջներս սրած՝ ամեն բան լսում էի: Ետոյ էլ ձեռքերս դեօշիս (կրճքիս) ծալած՝ կանգնում էի ու հօրս հրամանին սպասում:

Նրանց խօսածներից, նրանց ասածներից շատ բան էի սվորում, նոր-նոր բաներ իմանում: Նրանք ասում էին, թէ մեր խեղճ հայոց ազգը մին բելիւր (մեծ խումբ) եթիմների նման դէսուղէն ցրուած՝ ուրիշների ձեռքին, աչքին-ունքին է մաիկ տալիս. մինի փիս խասեաթն է վեր ունում. մինի սվորու- թիւններին է հետևում. մինի լիւզիւն է սվորում և իրան լիւզիւն մոռանում. մինի հանգերին և թհեար-

ներին է նմանացնում. դէ, էլ ինչ ասեմ, շա՛մտ էսպէս բաներ:

Ամմա ողորմածհողի հէրս, վարդապետներն էլ ասում էին, թէ մեր հայոց ազգի ասըը (ծաղումը) լաւ և հին ասը է. մեր ազգն էլ աղնիւ, ողորմա- սէր, մարդասէր, տնաշէն, աշխարհաշէն ազգ է: Ամմա մեր ազգի զաղիքը (արժէքը) իմացող չի կայ. ոչ ովից մին քաղցր խօսք նա չի լսում, ոչ ով նրան բարաքեալս (կեցցեօ) չի ասում. հէնց ամենքն էլ մինդարալ (շարունակ) թքում են, մրում ու զլուխը թակում: Է՛-Է՛-Է՛, բա՛լամ, եթիմի օրը հէնց տհենց անց կը կենայ, բայց ... մեծ է Աստուած. Աստու- ծոյ<sup>\*)</sup> պահածը կիւլը (գայլը) չի ուտիլ, Աստուծոյ օրհնածը սատանան չի կորցնիլ, միայն թէ համ- բերութիւն և հաւատ պիտի ունենայ. հաւատ, հա- ւատ և էլի հաւատ:

Քեզ ասեցի թէ զանազան տեղեր ապրելով մեր հայերը ջուռա-ջուռա խասեաթներ են վեր կալել: Դէ, տես յունց:

Շամախեցին լաւանդ կամ օղրաշ (կաւատ) կ'ինի<sup>\*\*)</sup>. զարաբաղցին՝ կողքը հաստ, բօի (բիրօ),

\*) Դիտելի է որ խօսողը՝ Աստուած բառը սեռական հօլովի մէջ երբեմնակի ըստ զրաբարի էր գործածում:

\*\*) Քաղաքաբնակ շամախեցիների մի մասն ունի այդ գէշ համբաւը, բայց ոչ Ղարաբաղեց գաղթածները, որոնք բնակում են զիւղերում, մասամբ էլ քաղաքում: Բնիկ շամախեցիների մէջ միմեանց օղրաշ ասելը խիստ սովորական բան է:



բայց շատ քաջ<sup>\*)</sup>։ Թիփլիզեցին՝ լօթի (զուարճասէր) ու հալվարայ (վայրախօս)։ Թիփլիզեցի հայերի մէջ պառուս մարդն էլ, արախան էլ միմեանց ... մեղայ, մեղայ... ծնողով ուշուկ կը տան. դէ, հաչ-քրիտառնեային վաչել բան է դա։ Գեանչրցին (զանձակեցին) լողվա (պարծենկոտ, անձնադով) կ'ինի։ Երևանցին՝ իրևանց հիլի (հաչելի), տակից ծիլի (ածելի) կ'ինի Նոր-Նախիջևանցիները բարի լիւս, Աստու-բարիի տեղ միմեանց «խոցէ» (հաւանօրէն «հածէ» ն է, համբմատ «ձօ» ի կամ «տօ» ի) են ասուժ և միմեանց սիրտը միշտ ծակուժ, միմեանց ոտի տակը բանդում։ Գիւմրիւցին (ալէքսանդրապօլցին) կռուժուի նման պինդ կ'ինի, զրա համար էլ նրանց «կրու» են ասուժ<sup>\*\*)</sup>։ զիւմրիւցիի զլուխն էլ կռուժուի նման, ասուժ են, բիզ (սրածայր) ու պինդ (յամառութեան իմաստով) է ինուժ։ Նուխրցին, հաղիտուժ են, որ շուալլ ու փուչ կ'ինի. աշխարհքիս հաչերը մարդ կը դառնան, նուխրցիք ամժա իրանց բաղերուժ կերուխումով ժամանակ անց կը կաղնեն և հարբելով միմեանց վրայ խանչալ կը քաշեն ու սուղերը (գատաստանները) կ'ընկնեն<sup>\*\*\*)</sup>։ Զոկի լիւ-

\*) Աստուժ տայ, որ բոլոր հայերն էլ զարբաղցիների նման լինեն։

\*\*) Սխալ մեկնութիւն պիտի լինի. այդ մակդիրը բիւրզերի գործածած «կրու»-ն է հաւանօրէն, որ, «որդի» նշանակելով մէկտեղ, գործ է ածուժ է իբր («տօ»), «ձօ») ձայնարկութիւն։

\*\*\*) Շառ մի՛ գցիլ. նուխեցիք եախշի մարդիկ են, միայն թէ բարոյականի և բնաւորութեան կողմից անգական թուրքերի քօռ ախպէրներն են։

զիւն մեղր կ'ինի, ամժա սիրտը քար և աչքը ծակ ջվալ։ Հաշտարխանցիները հաչի-Թարխանի շինած քաղաքումն են ապրում, ամժա լիւղիւով, խասեաթով ու սփորութիւններով ոչ թաթար են, ոչ ռուս, ոչ զալմուխ, ոչ զրդըղ, այլ եզդի գիննէն ավարայ (եօթր հաւատից զուրկ) գատեր են և հայութիւնից էլ մենակ «էստուր, գէստուրն» է մնացել։ Խոյեցին շիլաչի (շիլէ պատրաստող) և բոշի խասեաթի կ'ինի։ Ղղարցին, մողղոկցին էլ աշխատասէր բաղմանչի (ալգեպան) է և մանառ գինիի լաւ տեսակը պատրաստող։ Մեր բողբջիներն էլ (Ղարաբաղից գաղթած և Նուխուայ գաւառի Բօղ-Դաղի—կապոյտ լեռան սարավանջի վրայ հաստատուած զիւղացիները) լաւ հողագործներ են և Ղարաբաղի տղամարդութիւնը պահած։ Դրանց մէջից մեր Բեհրուզ-բէզի (գեն. Շօլկովնիկովի) նման քաջ մարդ է զուս եկել<sup>\*)</sup>։ Վարդաշէնի և Նիժի ուղիներին (ուտէացիներին) հալ լաւ ես ենանչում — չինտա (դեռա) և շուտ նեղացող մարդիկ են, որ եթէ թարս դամառները բռնի, մարդի տունը գլխին կրակ կը տան։ Իրանց պզտիկ տեղովը ուղիները խաթալու (վտանդաւոր) մարդիկ են. մին ուղին տասը թուրքի հախին կը գայ։ Զէ՛ որ ախր ուղիների ցեղը ուրիշ ցեղ է, լիւղիւն էլ լէզլիների լիւղիւին մօտ. սուրբ պսակ, սուրբ կնուժը, սուրբ մկրտութիւն ուղիների համար էն չի, ինչ որ հաչերի համար։ Դէ, ի՞նչ անեն խեղճերը. հայաւոր հայա (դեռ) նոր են սփորում. ժամ գալիս, երբ տէրտէրը «Տէր ողորմեա, Տէր ողորմեա» է ասում, ոչինչ չեն հասկա-

\*) Տես «Армяне» էջ 151



նում և սրտները նեղանալով ասում են՝ «Թաղո կուա, թէզ էդօ միա» (կը գնամ տուն, չեմ գալ այստեղ):

II.

Ո՛րդի-չան, էս խրատները որ տալիս եմ, էս խօսքերը որ ասում եմ, էս զրուցները որ անում եմ, խելքը պկասած պառաւի խօսքեր չի համարես. մեր պապերից, խելօք, փորձուած ու աշխարհք տեսած մարդիկների խօսքեր են: Սրախէքը խրատը մօրից կ'առնեն, մէրն էլ պարտական է իրան խմացածները, լսածները և փորձածները իրան աղէքին, աղջիկներին ասելու և սփորացնելու: Մարդի կեանքը էնչափ կարճ է, որ չի կարող ամեն բան իրան դիտի վրայ փորձել և իրան փորձելով աշխարհք ննանչել: Եթէ կ'պէս ինէր, դու էլ ուսում չի պիտի առնէիր, այլ առանց ուսումի ամեն բան պիտի սփորէիր: Կեանքի ուսումը շղօլի (գպրոցի) ուսումից շատ աւելի պժուար ուսում է \*):

Բայց դու տես, որ Մոսկով, Պետրպօլկ գնացող, ուսում առնող մեր շահիլ-չիւհիւլները ինչ նմաններին մարդի տեղ չեն գնում \*\*), անաղ են տալիս (ծաղրում են), անվաչել բաներ են ասում:

\*) Ցնդած պառաւի խօսքեր են. ըստ «աղատամտական—առաջադիմական—կուլտուրակա պրինցիպի» կարելի է ոչ կեանքի ուսում ունենալ և ոչ գպրոցի, բայց ամենքին էլ խելք սփորացնել և քեզ նմաններին էլ «բարոյականից զուրկ» հռչակել:

\*\*) Պիպլոմը ինչո՞ւ համար են ստանում, որ գնեն:

Մի՞տղ է Բօլիւբաշ մովրովը \*), Աստուած հողին լուսաւորի, հօրի խաթիրը շատ էր պահում: Խաչմաղի (մուսուլմանացած լուսաւորչական ուտէացիների զիւղի անունն է. ըստ աւանդութեան այդ բաղձամարդ զիւղը Խաչ-մեծ կամ Խաչ-մաս է կոչուել) մհալի (գաւառակի) արդաչիները (խնդրատուները) ամեն օր լիքն էին մովրովի դրանք: Լիողլի (նիպոսներին կապոցի) տակ կոխելով մարդ թակելն ու սպանելն էն ժամանակ սփորական բան էր: Մովրովները, գիտում ես, որ իմ հէրանց տանն էին կենում, մեր տանից շատ մօտիկ: Ճէնց որ լսում էի ուղղիով թակուողի հարաչ-բիլաթը (աղաղակ-պաղատանքը), ասում էի հօրի՛ անձ աման, գնա՛, հասի՛, չ'ինի թէ Բօլիւբաշը էս օր շատ խմած ինի և ուղղիի տակին մարդի հողին հանի: Շո՛ւտ, շո՛ւտ գնա, ասում էի, տես, մարդի սեասը (ծայնը) կարուեց. մարդը ըշթափել է (ուշաթափուել է), վա՛յ խեղճ մարդ, վա՛յ քար կարուեմ, ո՛վ է զիտում, թէ պիւշմանները վրան ինչ շառ (զրպարաութիւն) են գցել, բալքի (թերևս) ոչ գող է և ոչ մարդասպան. բեալքի բնտանիքի, գաւակների տէր է, եթէ մեռնի, նրա բնտանիքին ո՛վ կը խնամի, նրա գաւակներին ո՛վ կը պահի...:

Ողորմածհողի հէրդ էլ խօսքս լսում էր. իսկոչն վաղ էր տալիս մովրովի դուռը և Բօլիւբաշին խնդրում, աղաչանք անում, որ ըշթափած մար-

\*) Участковый заведатель-ի — գաւառակապետի պղպաշտօնը ջնջուեց Ալէքսանդր Բ. Ասյսեր դատաստանական վերանորոգումները մտցնուելուց յետոյ:



դին վերկացնել առ ռոզդի տակից և խնայի նրա կեանքը: Աստուծու իրան օրը հսպէս բաներ շատ էր պատահում: Բօլիւբաշի կնիկն էլ, զիտում ես հաս, նուխրցի ժամհարանց Մինասի ազգիկ՝ Չաւահիր-խանումն էր: Նէրզ որ գնում էր Բօլիւբաշին՝ թակուող մարդի համար բարեխօսութիւն անելու՝ Չաւահիր-խանումը զիտում էր, որ ես եմ զրկել և ինքն էլ իրան կողմից էր աշխատում՝ խեղճերին ազատելու համար: Ինչ անենք, որ թակուողները թուրքեր էին. թուրքն էլ Աստուծու ստեղծած մարդը չի...:

Մտրումդ կ'ասես, թէ խօսքս մեր շահիլ-ջիւհիւլների վրան էր, իսկ ես ուրիշ բանից եմ խօսում. զարար (վնաս) չի կայ, խօսքի մէջ էս էլ կ'ասուի, էն էլ կ'ասուի: Ո՛րտեղից սկսեցի, էն տեղ էլ կը գամ, դու ասածս լսի...:

Մի՞տդ է, Բօլիւբաշից ետոյ եկած մովրով կնեազ (իշխան) Յիցիանովը. Աստուած որդիքը պահի. շատ ազնիւ մարդ էր, կնիկն էլ հայ էր, Արդութեանց-Երկաջնաբաղուկի աղջիկը: Նա ինձ մինգարալ (շարունակ) ասում էր՝ «Մարիամ, Մարիամ, Գրիգորին թիփլիզ զրկի՝ ուտում առնելու: Թիփլիզից էլ, — հէրզ վախճանուելուց ետոյ, — հօրաբրոջդ որդի՝ մեր տան բարերար ճախումանց Մարտի ազան էր զրում բու մասին: Մարտի աղի և նրա ախպօր Առաքել աղի պահած ու մարդ շինած Նիկողոսն էլ (խօսողի անդրանիկ որդին) նրանց

ծեռքի տակին էր թիփլիզում \*): Ես էլ էի շատ ուզում, որ քեզ զրկեմ թիփլիզ՝ Մարտի աղի և Նիկողոսի մօտ, ամձա մին պուճուր արախին (պղտիկ աղուն) վարդաշէնից թիփլիզ ես չունց զրկէի և չուն հեա զրկէի: Վարա թովուրը (սարեակ, ДРОЗДЪ, merle) որ թուչուն է, իրան բալան (ծաղր) նոր թեւ առած ժամանակը՝ թող չի անում, որ ճղնից ճիւղ մենակ թուչի, միշտ հեան է ինում, միշտ աչքը վրան է պահում: Դէ՛, ես մարդ ինելով՝ չունց թող անէի, որ իմ արախաս առանց պահապանի, առանց հաւատարիմ մէկի աչքը վրան ինելու, վերկենայ զնայ թիփլիզ: Իվանի-բէգին (իշխ. Յիցեանովի անունն էր), նրա կնկանը դարդս չաչտնեցի: Իվանի-բէգը ասեց՝ սիկ. միտք մի՛ անիլ, իմ ախպեր Միխայիլ-բէգը շուտով պիտի գայ ինձ տեսութեան, ես գնալիս նա կ'առնի հետը Գրիգորին ու կը տանի: Ես նրան ասեցի՝ այ՛ իվանի-բէգ, դու չեա զիտում թէ Գրիգորս էն պուճուր տեղովը ինչ թարս խասեաթի (հակառակ բնաւորութեան) տէր դատ է. եթէ նրան խաբով անող չ'իներ, ճանապարհից կը փախչի, տուն կը գայ: Եղ խօսքիս վրայ իլաւ, որ Միխայիլ-բէգը

\*) Հախումանները, ինչպէս յայտնի է շուշեցիներին, այդ բաղաբի մէջ մի ժամանակ առաջին օջաղն են եղել: Հանգուցեալ Մարտի աղա և Առաքել աղա Հախումանների հաշուով հեռաւոր ժայռերի գլխից փողրակներով բերում է բաղաբ խմելու ջուր և բաղաբի մէջ աղբիւրների բաժանում: Ելլա աղբիւրների — որոնց քեհհիզ են ասում — շինութիւնը 40 հաղար բուբլի է նստել: Նոյն բարեգործների շինել տուած չորս խանութների եկամուտը յատկացրուած է այդ աղբիւրների պահպանման և վերանորոգութեան:



քեզ տանելիս, Բէզլեարին (Փառառ զիւղից մի կարիճ ուտէացի) հետք վեր կալաւ, որ ճանապարհին զուշեր (թռչուններ) կրակ տայ ու քեզ խաբով անի: Երբոր Բէզլեարը Թիփլիզից ետ եկաւ, շատ բաներ պատմեց քուարած քիւռութիւնների (չարութիւնների) մասին: Միտս է էն, երբ տրոջկով (եռածի կառքով) Սլւնալու (Նուխուց մօտ հարիւր վերստ հեռաւորութեամբ իջեան) էք հասել և զիշերը ստանցիւումը (իջեանում) վեր եկել, կէս զիշերին մին էլ Միխայիլ-բէզը տեսել է, որ թախթի վրայ չի կաս. դարթնըցնում է Բէզլեարին և հրամայում, որ քեզ գտնի: Կէս զիշերին, հեռու և անձանթ տեղում խեղճ Բէզլեարը քեզ չճանց գտներ: Կանչում է, կանչում— ձայն ձայն չի կայ: Միխայիլ-բէզը ճարը կարուած՝ փոշաի մին չափար (ծիաւոր պահապան) Բէզլեարի հետ դրած էս ճանապարհով է դրիւում, մին չափար էլ էն ճանապարհով: Մին վերստ, երկու վերստ ծին քշելով Բէզլեարը տեսնում է, որ Նուխի ճանապարհը վեր կալած՝ լաց ինելով «նանա, նանա» (մայր, մայր) ետ կանչում և վազ տալիս: Զօրով բռնում է քեզ, ձիի վրայ դնում ու ետ տանում: Միխայիլ-բէզը և Բէզլեարը քնած վախար (ժամանակը) տազ արած վեր ետ կացել ու մին գլուխ պուկ եկել դէպի Վարդաշէն, էլ սկի միտք չետ արել, թէ ճանապարհին կիւլերը և չազալները փարչայ փարչայ (պատառ պատառ) արած կ'ուտէին քեզ \*):

\*) Գուցէ թէ լաւ լինէր. ունայն կեանքի ոչ դառնութիւնները կը փորձէի, ոչ էլ հայ ազգի բացայայտ կորուստը կը տեսնէի:

Միտք է Նուխուց նաչալնիկ (գաւառապետ) Բողդանովսկին, որ Վարդաշէն գալիս՝ մեր տանը վեր կը գար և հայերի ու լուսաւորչական ուղիների մասին շատ հեռաթ կ'անէր (կը վիճարանէր) հետս: Ուղիների համար նա ասում էր, թէ ժամանակին զիփ էլ զիւրջիի հաւատին են իլել և հայերը նրանց իրանց հաւատին են փոխել: Ես էլ ասում էի, թէ ուղիները աթարբա (վաղուց հետէ) լուսաւորչական են իլել, բայց մին զիւրջի տէրտէր շատ տարի առաջ եկել է Վարդաշէն ու մովրովի հիւնարով (աղբեցութեամբ) շատ ուղիներ է կանչել իրան կուշտը և ասել. «ինձ լաւ չայտնի է ձեր ջերմեռանդ քրիստոնեայ ինելը, դրա համար էլ ես ձեզ համար Քրիստոսի շատ պատկերներ եմ բերել. ով որ ուզում է, մին մին հաս լիշատակ կը տա»:

Ուղիներից շատերը վախել են, Քրիստոսի պատկերը վեր չեն կալել, իսկ վերուճողներ էլ քիչ չեն իլել: Ով որ վեր է կալել, նրա անունը տէրտէրը գափթարի մէջ է գցել, և էն մինտարին Վարդաշէն գալով խաբար է արել, թէ Քրիստոսի պատկերները պահած մարդիկ գան մին-մին մանէթ փեշքեշ ստանալու: Էլ բանն էլ մովրովի կշտին է իլել. ով որ եկել է, մովրովը ասել է, թէ «բարաբեալլա, բարաբեալլա, որ հալի հաւատը թողած՝ զիւրջիի հաւատ ետ բնդունել և անունդ էլ դափթարի մէջ դրել տուել»: Մին քանիտը ասելէն «այ ազա, Խաչ, Աւետարան, մենք մեր հաւատը չենք փոխել և զիւրջի չենք դառել, մեր անունն էլ դափթարի մէջ գրել չենք տուել, տէրտէրը ինքն է դրել. այ ազա, մենք ինչ հաւատի իլել ենք, էն հաւատի էլ կը մնանք»:



Սհենց խօսողներին մովրովր ասել է, թէ ուղղի տակ կը դցի ու ամենքի էլ հողին կը հանի: Խեղճերն էլ մնացել են սեասը կտրած: Էդպէս իլաւ, որ հալալ (հարազատ) ախպերներէց մինը կամ էրկուսը լուսաւորչական մնացին, էն մինը զիւրջի դառաւ, և Վարդաշէնի ուղիների իրեքից մին փայր (մասը) էս օր զիւրջի հաւատին է և իրան լուսաւորչական ախպօրը թշնամի...

Էդ զիւրջի աերաէրը Նիժ, Փաղառ Զուլու, Սուլթան-Նուխի, Վարդանլու, Միրզաբէգլու, Խօրոզլու և ուրիշ գեղեր էլ է զնացել, ամմա ամեն տեղից նրան խօսիկ են տուել (վոնդել են):

Էս բաները երբ ասում էի Բողղանովսկի նաչալնիկին, նա հակահառում էր: Դիլմանջն էլ (Թարգմանը) Շիր-Ալի-բէգ, էր, որի մէրն է թէ աստը հաչ է իլել. ասածներս նա մին քիչ վախ՝ վախելով էր թարգմանում, ամմա թարգմանում էր: Ուրիշ բաների մէջ Բողղանովսկին «դա՛, դա՛» (աչո՛, աչո՛) էր ասում և իմ ասած բաներին հաւան կենում: Ռուսի թագաւորութեանը մեր Դաշբուլայի մելիքների արած լաւութիւնները շատ էի պատմում, և նա «մալաղե՛ց, մալաղե՛ց» (ապրե՛ն, ապրե՛ն) էր ասում:

Մի՛տդ է մէշարէզի (անտառապետ) Զիչինա՝ ձէն: Մի՛տդ է սլեստչի (քննիչ) էն ազնիւ և մեռոնի նման արդար կենազ Մաղալովր:

Դրանք զիփուենանքն էլ ասածներս խի՛ էին հաւան կենում և «դա՛, դա՛» ասում, իսկ Մոսկո-

վից և Պետրպօլկից եկած, զագան փափազ (cylindre) դրած մեր հաշախլիները (ծանծաղամիսները) ամեն ասածիս՝ «հա՛-հա՛-հա՛, հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ» անելով լիրբ, լիրբ ծիծաղում են ու տնազ տալիս: Էդ շնորհքը կտրուածները հէնց են զիտում, թէ ոուսաւօր չ'իմացողը ախմազ (ախմար) կ'իւնի:

Պատմութիւն եմ անում՝ հոհոում են, առակներ եմ ասում՝ հոհոում են, խրատներ եմ տալիս՝ հոհոում են: Խօսելիս էլ, ծիծաղելիս էլ էնպէս թհնարարը (ալլանդակ կերպով) են խօսում և ծիծաղում, որ մեր լէզզի գեադաների (սպասաւորների) առաջին ամօթից տափն եմ մտնում: Իւրիւր (իրար) բռունչ են տալիս (հրում են), կրճճում են (կսմթում են), իւրիւր զլխին բամբաչա (թաթով) են խփում, կողք են կենում (գօտեմարտում են). մաչը աշխարհք զցած՝ էլի պէս զուում են և ոուսաւօր հազ ասում (երգում): Էլ որ մինը, որ մինը ասեմ: Ո՛չ Աստուծուն են հաւատում, ո՛չ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և ո՛չ Սուրբ Եղիշ առաքեալի զօրութիւնը ճնանչում \*): Ուսում են առել, ամմա խօսածների մէջ սկի նիւթ չի կաչ, հաթրան-փաթրան (դարդակ ու անմիտ), աակից, զլխից զուս են տալիս: Հա՛, զօրդ է, որ ես մին քանիսին եմ տեսել, բալբի ուրիշները տհենց չեն. Աստուած տաչ, որ տհենց չ'իւնեն:

Ասում եմ՝ ա՛ բալամ, շահիլ աղէք էք, ծերերի

\*) Աւեւացոց զլխաւոր Սուրբ՝ Եղիշէ առաքեալը, ըստ Հայոց եկեղեցական պատմութեան, Թադէոս առաքեալի աշակերտն էր: Իւր երկը աշակերտներով նա բարոյում է և նահատակում Աւեւացոց աշխարհում:



օրհնանքը ձեզ բարիք կը բերի, նրանց տուած խրատները ձեր կեանքի համար պէտք կ'իյնեն. նրանց արած պատմութիւնները հարիւր, հարիւր չիտուն տարուայ պատմութիւններ են, է-էն նազիր շահի, Հասան խանի, Սելիմ խանի ժամանակներից: Գնացէ՛ք Սիլիկ-օղլունց պառաւի մօտ, որ 120 տարեկան է. կուչ եկած՝ կծիկ է դառել. աչքերը սիպտակ փարպաչ (քող) է պատել. դուզի պիշի (գառան ատամներ) է հանել, ծոռները՝ հասած տղէք ու հասած աղջկէք են դառել. թոռներից մինն էլ Սլէքսանը, իմ Թագուհիիս հետ է պսակուել. Թագուհիս էլ էն պառաւի զխաւոր պահապանն ու հողատարն է, նրա ամեն պէտքերը փարտակում է (գոհացնելում է), ամեն հրամանները հնազանդութիւնով կատարում. պառաւն էլ նրան շատ օրհնում է: Մեր հայ քրիստոնեաների օջաղի աւանդութիւնն է, որ հարսը տան մեծերի պատիւը պիտի պահի, սիրտը շահի, նրանց ծերութեան ժամանակը միշտ կշտին պիտի գտնուի, կամքը կատարի, խրատները լսի, օրհնանքը առնի \*):

Սիլիկ-օղլունց պառաւը էդչափ տարեկան պառաւ է, ամմա Փհամը (չիշօղլութիւնը) սկսի չի կորցրել. է՛նչափ, է՛նչափ բաներ է պատմում, որ ձեր կարգացած զրքերում ո՛չ մինն էլ նրա պատմած-

\*) Տես թէ ի՛նչ ասել է («խաւարամտութիւն»). Հասպա երեխաներին երեսի վրայ ձգած՝ կաւալ երների հետ թատրոն ու ժողովարան ո՞վ գնայ. սիրահարներին նշանակած ժամադրութեան ո՞վ շտապէ. խանութից խանութ նորելուկ իրերի ետեից ո՞վ դեզերի. երեկոյթներ և խընջոյրներ ո՞վ յաճախէ. թղթախաղով ո՞վ պարապի:

ներից չէք գտնիլ. մեր պապերի ու տատերի զլուխը եկածներն է պատմում. անօրէններից մեր ազգի քաշած չարչարանքներն ու պատուհասներն է պատմում. Աստուածանից մեր տեսած հրաշքների մասին է խօսում: Գնացէ՛ք, հարցրէ՛ք, խօսեցէ՛ք և իմացէ՛ք, թէ ի՛նչ նեղութիւններով և ի՛նչ տանջանքներով են պահել մեր պապերը իրանց լիւս հաւատը, իրանց լիւզիւն և իրանց ազգութիւնը: Չէ՞ որ ախր դուք էլ հայ էք, ձեր ազգի պատմութիւնը պիտի իմանաք, ձեր ազգը պիտի սիրէք, ձեր հաւատը պիտի պահէք \*):

Բայց... չո՞ւմ ես ասում, չորի՞ զլուխը կը մտնի. «հա՛-հա՛-հա՛, հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ» անելով հէնց էն է հռհռում են և էլի էլի դողը գցում...: Դէ՛, դա՛ է իլել Մոսկովում և Պետրպօլկում դրանց առած ուսումը. դա՛ է ունիվերսիտետում դրանց ստացած խրատը, սփորած շնորհքը: Վայ, ո՛չ ինի էդ ուսումը, կարօ՛ւի էդ շնորհքը \*\*):

### III.

Աստուած պահի մեր Բեհրուդ-բէզին \*\*\*) : Հէնց որ Ռուսէթից եա Թիփլիզից նուխի էք գալիս՝

\*) Ի՛նչ ես կորցրել, ի՛նչ ես փնտրում, ին՞չ՞ կին. դու անաստուածութիւնից խօսէ, կոսմոպոլիտիզմից, սօցիալիզմից, մարքսիզմից, անարիսիզմից խօսէ, որ բան Հասկանանք. հաւատս որն է, ազգս որն է, լեզուս որն է:

\*\*) Ամէ՛ն.

\*\*\*) Գեն. Շօլկովնիկովի անունն էր. այդ ժամանակ նա շտաբ-կապիտանի կամ կապիտանի աստիճան պիտի ունենար:



հօրը տեսնելու, մէկ էլ Սուքիասին (խօսողի երկրորդ որդին) խաբար էր անում, թէ ուղում է Վարդաշէն դայ: Կրգար ուրախ-ուրախ «այնան, այնան» ասելով (նուխեցիք մօրը «այնան» են կանչում), օրերով կը մնար մեր տանը. Սուքիասի հետ ձի նստած՝ ելլաղները (լեռնային արօտատեղիք) կը դնար. մեր դինդի ու շաղացի գլխին նստած՝ ուզի տղէքին գետից շահմեազի (կարմրախայտ) բռնել կը տար: Վարդաշէնի տեղին, օղին, ջրին, բնութեանը Բեհբուզ-բէզը լսփ (բոլորովին) սիրահարւած էր: «Էնչափ երկիրներ եմ ման եկել, էնչափ տեղեր եմ տեսել, ասում էր, բայց Վարդաշէնի պէս էլ մին գեղեցիկ տեղ չեմ տեսել. ի՞նչ որ բացուած վարդի նման մին շէն է»: Յիրեկը Սուքեասի հետ ձիով կամ ոտով դէս ու գէն մանգալից ետոյ, իրիկունքն էլ կշտիս նստած՝ Վարշոփում (Լեհաստանում) իրան արած հիւնարներն էր պատմում \*): Վայ, քար կարուեմ, էն դէօղալ աղի մարմնի վրայ էլ սաղ տեղ չէր մնացել. կողքի, մէջքի, դեօշի (կրծքի) ձեռքերի, ոտերի վրայ էարաների տեղերը ձիձի մատի (ճկոյթի) հաստութիւնով նշաններ էին թողել:

«Այեան, ասում էր, երբ որ ինձ թագաւորական խարջով (ծախքով) զազրանիցս (արտասահման) զրկեցին, որ էն տեղի չայտնի հեաքիմները (բժիշկները) սաղացնեն, մին հիւանդանոցում մեռելի պէս պառկած էի. համ արիւնաքամ էի իլել, համ էլ

\*) Սպայակոյտի ակադեմիան աւարտելուց յետոյ Շօլիովնիկովն ուղարկուում է Լեհաստան, որն այդ ժամանակ (1863-ին) ապստամբուած էր:

եարաներս շատ էին նեղացնում. ո՛չ ձեռքերս էի կարում (կարողանում) արիւն տալ (շարժել), ո՛չ ոտերս, ո՛չ էս կողմ էի կարում շուռ գալ, ո՛չ էն կողմ: Նեաքիմները իրանց լիւզիւով ասում էին, թէ ապրելու յոյս չի կայ, անպատճառ պիտի մեռնեմ: Ամմտ ես մտքուժս ասում էի՝ չէ՛, չէ՛, ես մեռնող տղայ չեմ. ես զարաբաղցի արիւն ունեմ, զարաբաղցի արիւնը շուտ չի ցամաքիլ. զարաբաղցի հողին դիմացիուն կ'իւնի: Ես Մարտիրոս-բէզի տղան եմ, որին լէզգի զաչաղները (աւաղակները) ոտից մինչև գլուխ խանչալներով կտրակցին և էլի սաղ մնաց \*): Այեան, որքան էլ յոյսս ինձանից կարած չ'իւնէի, ամմա էդ ժամանակ աղիս (մայրս), ապաս (հայրս) և իմ ախպէր Յարութիւն-բէզը միտս եկան: Մին քիչ աչքս խուփ արեցի, մին էլ տեսայ, որ ապաս ու Յարութիւն-բէզը կշախ կանգնած են: Ապաս բռնեց ձեռքիցս և ասեց. հը՛, Բեհբուզ, ի՛նչ ես էս օտար երկրումը մոլորուել, մնացել. եանսար մի՛ կենալ (արիացիր), վեր, վեր կաց, բա՛լա-չան, քու սիրած քիհար (կարմրագոյն) ձին հետս եմ բերել. նստի՛ ձին ու գնանք»:

«Յարութիւն-բէզն ու հերս բածրացրին ինձ, աղիս էլ օրտեղից եկած, իրեց աչքիս, ցուրտ ջրով լուացաւ ու սրբեց իրեսս, հագցրեց մուշկիլ (համազգեստ), թուրս կապեց մէջքիս, նստրցրին ինձ քիհար ձիի վրայ, շիլաւը (սանձը) պինդ բրունցի և իրանց հետ չափարաղ (սրարշաւ) քշեցինք դէպի

\*) Շամիլի ժամանակներն է կղած:



Նուխի և հասանք թիւ-իւշ մեր դուռը: Աչքերս  
բաց արեցի և հասկացայ, որ տեսածս արաղ (երազ)  
էր: Սիրտ առայ, միտս եկաւ ազիս ասածը, թէ  
արագուծը ձի նստելն ու քշելը մուրազին (փա-  
փազին, ուխտին) հասնել է: Էդ արաղի վրայ էլ  
բոլորովին արխալինացայ (միամտուեցի). տեսայ որ  
պիտի առողջանամ. հեաքիծների խօսքերն ականջիս  
էլ ճանճի տղոց էին դալիս: Շատ չի քաշեց, որ  
օտի կանգնեցի ու թռայ Նուխի»:

Բեհրուզ-բէզը շատ էր սիրում Դաշ-Բուլաղի  
մելիքների՝ Բեհրուզ-բէզի, Ասրի-բէզի, Միրզա-բէզի,  
Ասլան-բէզի, Զաւադ-բէզի, Բալա-բէզի, Բաբալի-բէզի  
պատմութիւնները լսելը \*): Ես էլ ողորմածհոգի  
հօրիցս և մեր փեսայ Ռուստամ-բէզից (խօսողի  
բրոշ ամուսինը և Դաշ-Բուլաղի մելիքների վերջին  
փառաւոր ներկայացուցիչը) լսածներս և միտս  
մնացածները սհաթներով (ժամերով) պատմում էի:  
Ղրղիի (շահէի) աչքերի նման չալ (խաժ), սուր և  
վառվառն աչքերը չռած՝ էշխով, հաւասով (եռան-  
դով, սիրով) լսում էր: Պատմում էի, պատմում էի,  
էլի չէր կշտանում: «Այնան, ասում էր, ախր ես էլ  
Դաշ-Բուլաղի Մելիք-Ալլահվերդեանների ժողովրդի  
մէջից եմ դուս եկել. իմ հէրս էլ, մէրս էլ ախր  
Ղարաբաղի լիզիւով են խօսում. իմ անունս էլ  
ախր Բեհրուզ է. կը գայ ժամանակ, որ սաղ աշ-  
խարհքին ցոյց կը տամ, որ ես էլ Բեհրուզ-բէզի և

\*) Դաշ-Բուլաղի մելիքների մասին տե՛ս „Армяне“ էջեր  
182-183.

զարաբաղցի Մաղաթովի նման հիւնարով մարդ  
եմ: Պուճուր վախտս ապաս ինձ միշտ ասում էր,  
թէ անունս Բեհրուզ է դրել, որ մելիք Բեհրուզ-  
բէզի նման մին մարդ էլ ես դառնամ»:

Նրա էս խօսքերին ասում էի. «Բեհրուզ-շան,  
հօրդ ցանկութիւնը Աստուծով կը կատարուի, դու  
էլ Մաղաթովի նման մին մե-եժ եներայ կը դառ-  
նաս, ամմա նանը քը մատաղ, չ'ի'նի թէ դու էլ  
Մաղաթովի նման եադ աղջիկ առնես և հաւատդ  
փոխես \*): Մաղաթովին դրա համար Ներսէս կա-  
թողիկոսը անիծեց և Աստուած էլ նրան սօնգսրդ  
(անժառանգ) թողեց. աման, չ'ի'նի թէ դու էլ նրա  
նման բան անես»: — Չէ', չէ', այնան, արխալին  
(միամիտ) կաց, ասեց, ես հաւատ փոխող մարդ չեմ. մե-  
լիք Բեհրուզը հաւատ փոխող մարդ էր, որ ես փո-  
խեմ. հաւատ փոխող մարդին էլ մարդ կ'ասեմ.  
հաւատը փոխողը շանից էլ փիս է. հաւատը փո-  
խող մարդի զլխին Աստուած խռով կը կենայ և  
ամեն մարդ էլ նրանից կը զգուի \*\*): Եադ աղջիկ  
էլ սկի չեմ առնիլ. եթէ առնող ինէի, ականգեմիան  
աւարտելից ետոյ կ'առնէի, Պետրբուրգում և Վար-  
շաւում, որտեղ էնչափ մարդիկ ետքիցս էին ընկել  
և ձեժ բաժինքով էլ աղջիկներ որչափ ասես կային:  
Զագրանիցից երբ եկայ Վարշաւ և ներկայացայ  
զրաֆ (կոմս) Մուրավեին, նա ինձ խտտեց (զրկեց)  
և ասեց. «մալադէ'ց, Շօլկովնիկով, քու ցոյց տուած

\*) Տե՛ս „Армяне“ էջ 163:

\*\*\*) Էն վաղ էր, որ էշը կաղ էր:



հիւնարները զազէթների և զըքերի մէջ են մտել. էրկու բատալիօն (վաշա) զոշունով պոլեակների եներալ Չարխովսկիի (Չայկովսկի) մին քանի հազար զոշունը (զօրքը) շարդ ու փշուր անելի ամենքին զարմացրին: Թագաւորն էլ քեզ Ս. Գէորդի խաչ և մին նոր չին տուաւ. մին քանի հազար մանէթ էլ նշանակեց, որ զազրանիցա դնաս և բժշկուես: Միհիկ (հիմայ) ճանապարհը բաց է քու առաջիդ. ժամանակին դու էլ ինձ նման եներալ պիտի դառնաս, ամձա քանի որ աչքս բաց է, պիտի քեզ պսակուած տեսնեմ իմ հաւան կացած աղջկայ հետ և ուրախանամ:

Գրաֆի խօսքը շաքարով կտրեցի. պատմեցի նրան, թէ ինչպէս հէրս ու մէրս ինձ ու Գէորդին (իւր կրտսեր եղբօրը) կօրպուս (զինուորական զրպարոց) զրկելիս՝ սարսն ժամ և սեղանի առաջին չօրքցրած՝ չերմեռանդութեամբ մեր գլխին աղօթք ասեցին. ետոյ էլ էրկուսիս գլխին անէծք կարգացին, եթէ մենք մեր ազգութիւնը մոռանանք կամ օտար ազգից աղջիկ առնենք:

Գրաֆը զարմացաւ սասձների վրայ և էրկու ձեռքը բաձրացրեց, «չէ՛, չէ՛» ասեց և ետ առաւ խօսքերը \*):

\*) Ահհաստանից վերագտնալուց յետոյ Շօլկովիկոյն ամուսնացաւ Միքայէլ Միանսարեանցի բրոջ օր. Բարբաբէի հետ Թիֆլիսում: Նորա աներն էր Միանսարեանցի խորթ հայր՝ զնդապետ Չարարիա Շահ-Աղիզ-Վամարականը, որն իրան համարում էր Ներսէս V Աշտարակեցու մօտիկ ազգականը:

Բեհբուզ-բէզի էսպէս խօսքերը լսելով՝ օրհնում էի նրան, չար աչքի դէմ վրան աղօթում էի և զնալիս էլ քահրիրարի (ամբրէի) պուճուր տէրօղորմեաս (համբիչը) տուայ, որ միշտ չիբումը (չրրպանումը) պահի, և մին նեղութեան մէջ ընկնելիս կամ չարսատանայ—եադ աղջիկը նրան գլխից հանելիս՝ «Տէր օղորմեա՛, Տէր օղորմեա՛» ասի և Աստուծու օգնութիւնը խնդրի՝ նեղութիւնից և փորձանքից ազատուելու համար: «Չէ՛» չի ասեց, վերկալաւ եզիզարս (չիշատակս) և կշախ էլ մին քանի հետ չրրխ-չրրխ անելով «Տէր օղորմեա՛» ասեց:

Տեսնում ես, ուսում առած աղան տհենց կ'ինի— ծանր, պարկեշտ, խելօք, քաղաքավարի: Շնորհքը հէնց վրայից էր թափուում— էնպէս թամիւզ (մաքուր), սպահի (փայլուն), որ ասես սրբած թուր ինի. էնպէս զաշանգ (բարեմէ, գողարիկ), սաղուք, սիրուն, որ ասես փարվաղ (նորահաս) թառլան (բաղէ) ինի: Խօսելիս՝ ձայնը ասես պղնձի ամանի մէջից էր դուս գալիս, — էնպէս պարզ, զրնդող և դուրական: Ամեն մին խօսքը իրան տեղն էր. հանաքն էլ (կատակը) տեղը, ծիծաղն էլ տեղը, բարկանալն էլ տեղը, ախրելն էլ տեղը, ուրախանալն էլ տեղը: Մեծի հետ մեծ էր, պուճուրի հետ՝ պուճուր. հալի, թուրքի, լէզգիի, ռուսի հետ խօսելիս՝ մին հանգով (միւնոյն կերպով) խօսող. իրան պատիւը բացիւր պահող. հարտար, կտրուկ, համարձակ, անվախ:



Մին հետ մին բան պատահեց և Բեհրուզ-բէզին մին պատմութիւնն արեցի, որից քեզի շատ եկաւ: Գիտօճմ ես ինչ է. Բեհրուզ-բէզը Սուքիասի հետ գնացել էին ախուրի (հանդի) կողմը ման գալու. ախուրն թէպէտ բաւական հեռու է մեր տանից, բայց բացիւր տեղ ինելով՝ կաքաւները կրկնալիս ծաչնը մինչև մեր տուն է հասնում: Արդովուրներ (փասեաններ) էլ են պատահում էնտեղ. ախուրից աչքի առաջ շմտ հեռու և սիրուն տեղեր են բաց-ւում. էս կողմ ես մտիկ տալիս՝ Աղբլ-ղայան (ոսկե-դոչն ժայռն) է իրեում. էն կողմ ես մտիկ տալիս՝ բա՛ւնցիւր ու մեծ մէշայով (անտառով) պատած սարն ես տեսնում. դէպի քաշ ես մտիկ անում՝ Եղիշ-առա-քեալը, եաղին (ղաշար) և Հալլավարի ու Խալխալի դիւղերը (դաշտավայրերը), էլ շիգէնի (դիտակի անուն) կեռումեռ շրերն են իրեում: Գարունը բացուելիս սաղ Վարդաշէնը, ծառերի դոչն-դոչն ծաղիկների մէջ թաղուած, առաջից փռուած է ինում. ասես թէ գուգած հարս ինի կարմիր ու ալվան (երփներանգ) հագուստ կեցած (հագած):

Ճէնց էդպէս մին վախտ էր Բեհրուզ-բէզը եկել մեր տուն:

Թաղէոսը (միւս որդին) Սենեամի (Սուքիասի կնոջ) հետ կերակուրի թաղարիքի (պատրաստու-թեան) վրայ էին. ես էլ՝ թախտի վրայ էլվանումը (հողաշէն պատշգամ) նստած՝ իլիկ էի մանում: Սուքիասի դրիմ թիւֆեանդը (հրացանը) հա՛ թախ-տի կշտին միշտ պատից կախ է ինում: Աչքս տա-րայ մեր զովախի (բարդի) ծառին. մէկ էլ տեսայ

եկաւ ծառի գլխին մին կունկուրի (ուտիերէն-տաա-րակ) նստեց: Կունկուրին սպանելը մեզը էլ ինի, ամձա սատանան ասեց, թէ թիւֆեանդը վեր կալ ու կունկուրին նշան դիր. թիւֆեանդը զի՛ւ-ի՛ւ ու արածին պէս կունկուրին գլխի վրայ վեր ընկաւ զովախի է՛-է՛ն բացիւր գլխից: Գնացի վերկալայ և բերայ կախ տուայ պատին: Կէս սհաթ անց չի կացաւ, որ Սուքիասը ու Բեհրուզ-բէզը թահտի— թալասիգ (վրագ) եկան: Թիւֆեանդի տրաքոցը Սուքիասը որ լսել է, իսկոչն իմացել է, որ իրան թիւֆեանդի սեասն է և շատ վախել է, որ մեր տուն գողեր ու զաչաղներ եկած ինեն, ես էլ կամ Թաղէոսը նրանց հետ կուռելիս:

— Նանա, ասեց Սուքիասը, սա ի՛նչ թիւֆեանդի սեաս էր, որ եկաւ մեր տանից:— Տօրդ թիւֆեանդի սեասն էր, բալա, ասեցի, արխային կաց, (ապահով եղիր), մին բան էլ չի պատահել, տե՛ս էս կունկու-րին եմ վեր գցել զովախի գլխից, Բեհրուզ-բէզի համար փեշքէշ:

Բեհրուզ-բէզը արմացաւ և չի ուղեց հաւատալ, ամձա Սուքիասը ասեց, թէ զորդ է, իրանից պա-կաս նշան խփող չեմ: Բեհրուզ-բէզը հարցուփործ արեց, թէ Լ՛րբ եմ սվորել թիւֆեանդ կրակ տալը, և մին ժամասէր հաչ կնիկ ինելով՝ խ՛ի եմ սէր կապել զիւլլա (գնտակ) զցելին: Ես էլ էս պատ-մութիւնը արեցի:

— Թաղա (նոր) հարս էի և թիւֆեանդից էլ շատ վախող: Մին օր ողորմածհողի հէրդ գնացել էր մովրովի դուռը, արգաչիների գործը լսելու: Մին



էլ տեսնեմ՝ թահաի-թալասիդ եկաւ ու ասեց. Մու-  
րադ-օղլիի աղջիկ, բեզ թիւֆեանդ կրակ տալ պիտի  
սվորացնեմ:—Ս:յ ճարդ, ասեցի, հարբած ես, ի՞նչ  
է, ես ո՞վ, թիւֆեանդ կրակ տալը ո՞վ. թիւֆեանդին  
ձօտենալիս էլ վախում եմ, որ իրան-իրան կրակ  
ընկնի ու պիտի մին խաթա (վտանգ) բերի:—Չէ՛, չէ՛,  
ասեց, անպատճառ պիտի սվորացնեմ, որ դու էլ  
էն թուրքի զոչչաղ (կարիճ, բաշ) կնկալ նման քու  
պատիւիդ դիպչողին կրակ տաս սպանես:—Ի՞նչ  
թուրքի կնիկ է, ա՛յ ճարդ, ի՞նչ ես ասում, չեմ  
հասկանում, ասեցի: Նա էլ պատմեց:

Մովրովի դուռը է-է՛ն հեռու տեղից մին ճար-  
դասպան շահիլ ու սիրուն կնիկ էին բերել. նրա  
խփած ճարդին էլ հոգեվարքի մէջ արաբայի (սալլի)  
վրայ դրած հեռն էին բերել: Երբ արդա անելու  
(խնդիրք յայտնելու) նորազը (հերթը) հասաւ մեռ-  
նող թուրքի հոյը և ատպօրը, նրանք յայտնեցին,  
թէ արիւնաթաթախ ճարդին խփողը էդ կնիկն է  
իլել: Մովրովը միտս չէ, թէ ո՞վ էր. նա կնկանը  
խօսացրեց, որ իմանայ՝ սա ի՞նչ բան է: Կնիկը  
քեալաղի եալուղը (երեսի մետաքսահիւս ծածկոց)  
բացրացրեց ու սկսեց համարձակ խօսել:

— Ս:յ աղա, ասեց, ես տասնութ տարեկան  
մին շահիլ կնիկ եմ, որ նոր եմ ճարդի գնացել.  
ճարդս էլ սա՛ է, կշտիս կանգնածը: Ես նրան գնա-  
ցել եմ սիրելով և նրան է՛նչափ սիրում եմ, որ  
եթէ ասի, թէ վեր իլ ծառի գլուխը ու էն տեղից  
վէր ընկիր, վէր կ'ընկնեմ: Մինչև էս ճարդին գնալս՝  
ամձա էն անպիտանը, որ հալա (դեռ) չի սատկել,

ուզում էր ինձ առնել. խաբար դրկեցի, թէ ես նրան  
չեմ, չեմ գնալ, ուրիշին եմ սիրում. շուտով էլ  
ճարդի գնացի:

Մին օր, երբ ճարդս Խաչմաղի բազարը թէ  
հունձի էր գնացել—լաւ միտս չէ—կէս գիշեր դա-  
ռաւ, տուն չի եկաւ: Ճանը ես էի ու սկեսուրս.  
մէկ էլ լսեմ՝ շները հաչում են: Նէնց իմացայ թէ  
ճարդս է գալիս, ամձա տեսայ, որ շները եադ ճար-  
դի վրայ են հաչում: Իսկոյն սիրտս իմացաւ, թէ  
էդ լիրբն է, որ մտքումը դրել է դա՛յ անպատուի  
ինձ: Ծլունկ իլայ վեր կացայ, ճրագը վառեցի,  
դուռնի բիլինդը (նիզը) պինդ զցեցի, լցրած թիւ-  
ֆեանդը ձեռքս առայ և մհաշառի (վանդակածև  
լուսամտի) առաջ կանգնեցի: Դուռը բաց, շան  
աղջիկ ասեց նա:—Չեմ բանալ, ասեցի, մեռնէ՛ս էլ՝  
չեմ բանալ:—Բաց, ասում եմ քեզ, թէ չէ կը կոտ-  
րեմ:—Մի՛ դալ, ասեցի, մէիդս (դիակս) կը տեսնես,  
իմ պատիւս խայտառակուած չես տեսնիլ: Եւ նա  
սկսեց դուռը քռունչ աալ, որ կոտորի ու ներս մտնի:—  
Ս:յ անիրաւ, ձե՛ռք քաշի ինձանից, ասեցի, վալլահ,  
բիլլահ կը խփեմ շանսատակ կ'անեմ: Նա՛ հա՛,  
հա՛, հա՛ անելով՝ ծիծաղեց ու մէջքը դրան տալով՝  
սկսեց տեղահան անել. ես էլ թիւֆեանդը թիւշ  
արեցի ու կրակ տուայ. բայց... չորանայ՝ ձեռքս, որ  
գիւլլաս սրտին չի դիպաւ, շանին (ճնօտին) դիպաւ  
ու ռեխ-մռեխը ցրիւ տուաւ:

Ս:յ աղա, ես իմ պատիւս և իմ ճարդիս նա-  
ձուսը պահելու համար իմ պարտքս կատարել եմ,  
մնացածը դու ես դիտում. ուզում ես օտերս բխովել



(շղթայակապ անել) տուր, զնդան (բանտը) զցի-  
ուղում ես Սիբիր զրկի, սկի աչնմս չի (հոգս  
չէ):

Մովրովի բեփը եկաւ զոչչաղ կնկայ խօսածից  
և «մալաղե՛ց, մալաղե՛ց» ասեց ու բրախ տուաւ  
(արծակեց):

Էս որ պատմեց հէրդ, ասեց, թէ ես էլ էն  
թիւրքի կնկայ նման թիւֆեանդ կրակ տալ պիտի  
սփորեմ, որ իրան տանը չ'իլած ես մեռած ժամա-  
նակը, եթէ հարամզազայ մինը ուզի իմ պատուիս  
դիպչիլ, ես էլ թիւֆեանդը վեր ունեմ ու նրա  
սրտին թիւշ անեմ (ուղղեմ):

Մին քանի հետ հէրդ թիւֆեանդը դրաւ ուսիս  
ու կրակ տուաւ, որ սիրտս մին քիչ պնդի. ետոյ  
կամաց-կամաց թիւֆեանդը ձեռքս առաւ և սկսեցի  
նշան բռնել ու խփել. տհէնց էլ սփորեցի զնաց:

Էս բանը, որ նազըլ արեցի (պատմեցի) Բեհրուզ-  
բէզին, է՛նչափ հազ արեց (հաճոյք զգաց), որ էլ  
չեմ կարող ասել:— Բեհրուզ-ջան, ասեցի, դու էլ երբ  
կնիկ առնես, նրան էլ ինձ նման թիւֆեանդ կրակ  
տալ սփորացրի. մին օր չ'ինի, մին օր պէտք կը գայ:—  
Լաւ, լաւ, այեան, ասեց, անպատճառ կը սփորաց-  
նեմ \*): Ետոյ երբ Սուքիասը ասեց, թէ լաւ ձի նստել  
էլ գիտեմ: Բեհրուզ-բէզը լափ (բուրբովին) մաթ  
մնաց (զարմացաւ) և ասեց, թէ մին էլ Վարդաշէն

\*) Սփորել, պկասել, ճնանչել, կնանչել, իրեւել, ցիրեկ,  
իրեք, իրես, թիթեւ, տիրեւ, լիւս, լիւզիւ և այլն բառերը,  
ինչպէս կը նկատէ ընթերցողը, գործ են անուել ըստ տե-  
ղականի:

զալիս, ինձ համար մին լաւ քեօհլան ձի (նժոյզ)  
փեշքեշ կը բերի:

Դէ՛, Բեհրուզ-բէզի՞ նման մարդիկ են զազան-  
փափաղ դրած մեր տիտուիկ-միտուիկ (թեթեամիտ  
և զրախօս) սահլիկները (տաճկահայոց զեվզէկ  
բառի իմաստն ունի). վայ, ես դրանց սարսաղ  
զլուխը հողեմ... \*)

IV.

Ո՛րդի-ջան, կեանքը մին մե՛-ե՛ծ ծով է, մենք  
էլ մին թիթեւ գեամիի (առազաստանաւի) վրայ  
նստած ճամբորդներ ենք: Էս օր ծովը խաղաղ է,  
զիամին զի՛-ի՛նչ (հանգիստ) առաջ է զնում, մենք  
էլ մէջուձը արխային (ապահով) նստոտած իխթիլաթ  
(զրոյց) ենք անում. է՛-է՛ զանազան պլաններ ենք  
սարքում և մեծ մեծ յոյսերով մեզ ուրօրում: Մին  
էլ բիրդեան (յանկարծ) փոթորիկ է վեր կենում  
և ծովը ալեկոծում: Գեամին շուռտուպարան է  
ինում. վրան նստոտածները ամա՛ն-ամա՛նի են  
ընկնում (յուսահատ ճիչեր են արձակում), վայ,  
վո՛չ զցում, ալսլուշ (վայնասուն, тревога, alarme)  
բացրացնում և փրկութեան յոյսը կտրած՝ «Սառ-  
ուա՛ծ, Սառուա՛ծ» կանչում: Բայց հէնց որ փոթո-  
րիկը անցկացաւ, քամին կտրուեց, ծովը հանդար-

\*) Հողէ, որչափ կ'ուղես, հողի տակից սունկի պէս  
դուրս կըգան...



տուեց, էլ ամեն ինչ մոռանում ենք և Աստուծու անունը մէկ էլ չենք տալիս:

Մարդս էրպէս փիս և ապերախտ արարած է. շատ անգամ նա հէնց արժանի է էն պատժին, որ Աստուած նրան տալիս է... Իէ՛, ինքզ ժտածի, եթէ Աստուած չի կա՛յ, նեղութեան մէջ ինկած ժամանակը մարդ խի՞ է նրա անունը տալիս, նրան աղաչանք անում և նրանից օգնութիւն սպասում. իսկ եթէ կա՛յ, ինչի՞ նրան միշտ չի չիշում...:

Ո՛րդի-չան, ո՛չ մին մէր իրան դաւակի վատութիւնը չի ուզիլ. որդին որչափ էլ խելօք ինի, էլի մէրը նրանից աւելի փորձուած կ'իւնի: Փորձառութիւնը շատ լսելով, շատ տեսնելով, շատ ապրելով կ'իւնի, շատ կարդալով չ'իւնի: Հաւատա՛ խօսքիս, հաւատա՛ փորձառութեանս, որ Սուրբ Գրքի մէջ գրուածները դարտակ նաղրիներ (առասպելներ) չեն, այլ անասարակուսելի և անալլալելի ճշմարտութիւններ են, որոնց հաստատութիւնները միշտ տեսնում ենք կեանքի մէջ:

Եթէ լաւ թրխկաթ անես (ուշադիր լինես, քննես), թէ ի՛նչ նեղութիւններից յունց ենք պրքձնում. մեր վերջին յուսահատութեան ժամանակը՝ Աստուծու օգնութեան միայն ապուխնելով՝ չանկարծ յաջողութեան ի՛նչ դուռ է բացուած մեր առաջ—կը տեսնես, որ Սուրբ Գրքում պատմուած հրաշքները մեասայներ (ուենայնախօսութիւն) չեն, այլ հաւատացող մարդիկներէ կեանքի մէջ պատահած իսկական բաներ: Հրաշքները երկնքից վեր եկած թեւաւոր հրեշտակներով չի որ կատարուած

են. աշխարհքիս վրայ գտնուած բարի, զօրաւոր և գութ ունեցող մարդիկ էլ հրեշտակներ չեն, ի՛նչ են, որ Աստուծու զօրութիւնով գալիս են օգնում նեղեալներին և փրկում տառապեալներին, սիրտ տալիս յուսահատներին, բացբացնում ընկածներին, մխիթարում սգաւորներին:

Ի՞մ տկար մտքովս, ի՞մ կարն խելքովս \*), որդի-չան, մարդ առանց հաւատի խոտակեր անասունի միւն է, որը պարարտ խոտի ետքից ընկնելով՝ կը գնայ, կը գնայ ու սոված կիւլի ուխը կ'ընկնի... Բայց, ասեցի քեզ առաջ, աթալարի (նախնեաց) խօսքն է, թէ Աստուծու պահածը կիւլը չի ուտիլ. սրա միտքը էն է, թէ Աստուծուն հաւատացողը և նրան ապուխնողը եթէ սոված կիւլին էլ պատահի, Աստուած կիւլի բեսար օթը \*\*)) կը կապի և մարդ նրա ճանկից սաղ-սալամաթ կը պրծնի: Կիւլ ասելով հէնց միայն կիւլ (գալլ) չի հասկանաս. անօրէն և անխղճմտանք մարդիկ էլ մին մին կիւլ չեն, ի՛նչ են... Ո՛րդի, մոլթանին էլ, նասրանին էլ մին մին բանին հաւատում են, բաս մի՞թէ կարելի է, որ մենք հայ-քրիստոնեաներս չի հաւատանք էս մե՛-ե՛ծ աշխարհքի Ստեղծողին, է՛նչտի աստղներ երկնքի վրայ Պահողին և էզ աստղներին լիւս Տուողին: Չէ՛, չէ՛, որդի-չան, կա՛յ ամենակարող մին ոյժ, մին զօ-

\*) Եթէ քեզ նմանների միտքը տկար լինի և խելքը կարճ, հապա մե՛զ նմաններինը ինչպէս պիտի լինի. բայց... ներողութիւն. մոռացայ, որ «լուսամիտ ինտելլիգենտներ» ենք, իսկ դու շխաւարամիտ, յետադէմ և բարոյականից զուրկ» ժողովրդի մայրերից միւնը:

\*\*)) Պարսկերէն բառ պիտի լինի, որի նշանակութիւնը չը գիտեմ:



րութիւն, որը կառավարում է էն աստղներին, արեւին, լուսնկային. որը արգար և իմաստուն անօրինութիւններ է անում իրան արարածներէի համար. օգնում է, մխիթարում իրան ապաւինողներին և պատժում շանաւար կտրուած (զազանացած) մարդիկներին և ազգերին:

էդ զօրութեանը ԱՍՏՈՒՍԾ ենք ասում:

Ղազան—փափաղների հետ խօսելով՝ դու էլ քանի քանի անգամ մոլորուել ես և իրեւիս կանգնած ասել ես, թէ «Աստուած չի կայ», թէ «ամեն ինչ բնութիւն է», թէ «մարդը հոգի չունի, հոգին արիւնի շարժումն է, երբ շարժոււմը կանգնեց, հոգին էլ պրծաւ», էլ ինչե՛ր, ինչե՛ր չես ասել: Խօսքերդ սրտիս մէջ օխի (նետի) նման են ցցուել, պաս եմ պահել, ծում եմ պահել, աղօթք եմ արել, որ Աստուած վրայ չի բարկանայ: Բայց, շատ ապրես, ետոյ դարձի ես եկել և ինձ մխիթարել:

Ո՛րդի-չան, հէնց ասենք, թէ ամեն ինչ բնութիւն է. լա՛ւ, բաս բնութիւնը ո՞վ է ստեղծել. բնութեան մէջ է՛նքան իմաստուն անօրինութիւններ ո՞վ է արել: Քանի, քանի հետ ինձ ասել ես, թէ բնութեան գաղտնիքներին մարդի խելքը չի հասնիլ. բայց դու ինձ ասի՝ թէ խելքը չի հասած բանի վրայ ի՞նչպէս կարող ես դատողութիւն տալ: Եւ ի՛նչ է բնութիւնը—էդ էլ չի կարացար ինձ բացատրել. մենակ ասեցիր, թէ ջուրը, օդը, ծառերը, քարերը դիփ էլ բնութիւն են: Դէ՛, ասի՛ տեսնե՞՛ ջուրը, օդը, ծառերը, քարերը խելք ունեն, որ աշխարհիս գործերի մէջ խառնուեն Եթէ

ծառը խելք ունենայ, իրան կտրել չի տալ ու կրակի մէջ չի էրուիլ. ախր եթէ կովի, եղի, էծի, ոչխարի և ամեն տաւարի համար ասում են, թէ խելք չունի, դէ՛ քարերը, ծառերը, ջուրը, օդը չունց խելք կ'ունենան... Տեսնո՞ւմ ես, որ սարսաղ խօսքեր են, որ ասում են զազան—փափաղները, իրանք էլ իրանց ասածը չի հասկանալով...

Ո՛րդի, է՛նչափ փիլիսոփաներ, է՛նչափ իմաստուններ, է՛նչափ թաղաւորներ և ազգեր դիփ էլ անխելք ու չիմար են իլել, որ հաւատացել են ու հաւատում են, թէ կայ մին Աստուած, Որին պաշտում են և կատարում նրա կողմից մարդիկների համար Յիսուսի Քրիստոսի դրած օրէնքները:

Ո՛րդի, հէրդ մեռած ժամանակը դու հալա (դեռ ևս) պուճուր արախայ էիր, իրեք տարեկան չի կայիր: Մենակ մին կնիկ հինգ եթիմներ եմ պահել. ոգորմածհոգի հօրդ թողած միւլքերը (կայքերը) կառավարել եմ և շէնացրել, մինը էրկու շինել. միշտ աշխատելով, միշտ չարչարուելով հէնց ձեր հողան եմ քաշել: Սիրտս դարդով լցուած ժամանակը՝ գնացել եմ հօրդ գերեզմանի վրայ լաց իլել և դարդս նրան յայտնելով սիրտս թիթլացրել \*):

Ձեռքիցս եկած լաւութիւնն էլ ոչ ովից չեմ խնայել. հէնց որ իմացել եմ, թէ շէնի (զիւղի) մէջ մին հիւանդ կայ, վաղ եմ տուել, գնացել նրա

\*) Ի՛նչ համեմատութիւն մեր և այն ժամանակների մէջ...



կուշար. առպրակներով բրինձ, ցորեն, ամաններով եղ ու պանիր եւ զրկել: Եթէ մինքր ասել է, թէ մեզրի թամարգու (կարօտ) է, մեզր եւ զրկել. հորչալ (գամբիլից շինած քաղցրաւենի) է ուղել՝ հորչալ եւ զրկել, զուրգէլ (БАЛЫКЪ) է ուղել՝ զուրգէլ եւ զրկել: Ջերմուտանդ և եաթալաղ (անեղախտ, ТИФЪ) բնկածների կշտին սհաթներով եւ նստել, մեր տնային ճարերը արել, սիրտ տուել, մխիթարել հիւանդատէրերին \*): Մեր Մարտի աղի (ճախուժեանի) փեղքեշ (բնծայ) զրկած խաղ քիւրքս (խլուրդի մորթից մուշտակ) մին հետ ծախել եւ ու նրա փողով մին վերընկնող տուն ազատել: Կէս զիշերին մեր դարվաղան (գարպասը) թակոցի առաջն եւ գուս եկել և ուղած պաշարը տուել, որ սոված արախաները փորը կշտացնեն ու քնեն: Է-է՛ն հեռու աշխարհքից զիլանչութեան (մուրացկանութեան) եկած դարիւր հաչերին օրերով, շաբաթներով պահել եւ տանս, նոր շորեր կարել և առպրակները կազով ու բարամաշով (բոժոժով) լցրած ճանապահ գցել: Վարդաշէնում տարիներով ապրող և տուն անդ չունեցող ազուլեցի (զոկ) զարիբներին միշտ պատուան կերակուրներ եւ զրկել, որ իրանց դիւքաններում ապրելով, կարանսն Ե-Ե՛րկար մեծ պասը թիթև անցկացնել: Իրանցից քանի՛, քանի՛ մարդիկ նիսիաները (ապառիկները) կորցնելով՝ ձերացած մնացել են Վարդաշէնում և մեծ կարօ-

\*) Եւ վերջն էլ այդ հիւանդների մեկից վարակուել են տենդախտով ու սիրառուն հարսիդ հետ միենոյն օրը զերեզման մտել:

տութեան մէջ ընկել. էգպէսներին, ամեն անգամ ժամ գալիս, տունս եւ հրաւիրել և պատիւներ տուել: Մովրովների, նաշալնիկների և սլեստչիների առաջ հալածականների և անմեղների համար բարեխօս եւ կանգնել:

Էյգ ամենը արել եւ, հաւատալով՝ թէ արած լաուլթիւններս զաւակներիս, թոռներիս ու ծոռներիս առաջը կը գալ և իմ քաշած չարչարանքները Աստուած հերիք համարելով, էլ նրանց նեղութիւն ու չարչարանք քաշել չի տալ:

Ուրեմն, որդիս, հէնց քու բախտաւորութեան, քու յաջողութեան համար հաւատո՛ւ էն Աստուծուն, Որից է՛նչափ, է՛նչափ հրաշքներ եւ տեսել: Հաւատ, հաւատ և հաւատ, բռնի՛ ու գնա, և ինչ որ մըտքումդ դրել ես՝ անպատճառ կը կատարուի: Ու խաարա միայն թէ ազգի բարի պտուղը պիտի ինես. Վարդաշէնում հօրս շինել տուած եկեղեցին և ուխտատեղին նորոգել պիտի տաս \*). Վիզդ էլ ուզեն կտրել՝ լիւս հաւատդ չէս փոխիլ. աշխարհքի փառքն էլ տան՝ հալութիւնդ չես ուրանալ. հայ ազգը ամեն ազգից աւելի կը սիրես. հօրդ օջաղը վառ կը պահես \*\*). Աստուածանից մին բան խնդրելիս,

\*) Խոսողի հայրը՝ Սարգիս Արք. Հասան—Ջալալխանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան»-ի մէջ յիշատակուած վարդաշէնցի բարեգործ Առաքել Մուրատեանցն է եղել: Նորա ծախքով շինուած է Վարդաշէնի Ս. Աստուածածնայ եկեղեցին, նորոգուած են Ճալէթի և ուրիշ վանքեր, թուով եօթն. կառուցուած է Վարդաշէնի Ս. Եղիշէ առաքեալի ուխտատեղին. հանուած են գիւղի աղբերներից շատերը, և այլն:

\*\*) Իժբաղդաբար այդ օջաղի համար իսպառ անօգուտ գտնուելով, նորա ո՛չ վառուելը գիտեմ և ո՛չ էլ մարուելը:



նեղ ու լէն օրերիդ մէջ աղօթելիս, միշտ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և Սուրբ Եղիշ-առաքեալի բարեխօսութեանը կը դիմես:

էդ ճանապարհով, էդ ուխտով, էդ պատուէրս կատարելով՝ որտեղ որ ինես, որքան էլ մեծ արգելքների և նեղութիւնների հանդիպես, որչափ էլ չկամներ, չարակամներ և թշնամիներ ունենաս, միշտ կը յաջողես և կը յաղթես, և մտքումդ զբաժնապատակին անպատճառ կը հասնես:

\* \* \*

Հետեւելով նահապետական հայ կնկայ պատուէրին, անաստան հաւատն եղաւ ամբողջապէս զրահս, անխորտակելի զէնքս, հաստաշէն նաւակս և անմարելի շահս, որոնց օգնութեամբ անվտանգ անցայ այն «օձերի, գաղանների, գողերի և աւաղակների, մութ անտառների և վարար գետերի» միջից, որոնք հոգատար ծնողի մտածմանց համաձայն՝ հասարակաց բարեաց ծառայողի կեանքին յարակից պէսպէս արգելքները, դժուարութիւնները, թշուառութիւնները, դաւերը, լարերը, զրպարտութիւնները, մատնութիւնները, չար մարդկանց խորհուրդները և ձեռնարկած միջոցները պիտի հասկացուին:

Զգտելով այն նպատակին, որն ընտրել էր բազմաչարչար հայ կիներ իւր անարժան զաւակի համար \*), շատ նեղանում էի զիմնադիական չոր

\*) Որը մինչև հիմայ չը կարողացաւ մի հասարակ տապանաբարով իսկ յարգել նորա յիշատակը:

ու ցամաք դասերից, որոնց մէջ չը կար ոչինչ սնունդ եռանդի ու զբոսցումների համար, որոնք չ'ունէին ոչինչ կապ և առնչութիւն փայփայած նպատակիս և ծրրատումների հետ. մի օր (1873-ին) թեթեալքի սիրտս մի ոտանաւոր զրութեամբ, որի վերջի տունն այս էր.

Շատ չի տեղի, կ'աւարտեմ

Ես շրջանն իմ ուսման

Եւ իմ դարս կը զոհեմ

Ազգիս օգտի զարգացման.

Այն ժամանակ կրկոչեմ՝

Մարդիկ, ի՞նչ մեծ բախտ ունեմ \*):

Իարս ամբողջովին դեռ չէ զոհուած, իհարկէ, զոհուած է միայն կեանքիս ամառը և աշնան մեծագոյն մասը: Իսկ թէ ի՞նչպէս կ'անցնի աշնան մնացորդը և ծմեռը, հողի տակ, թէ հողի վրայ. զարձեալ շանքերի՞ ու ճիգերի՞, զըջամարտի՞ ու մտապայքարի՞, նեղութիւնների՞ ու տառապանքների՞ մէջ, թէ անշնչութեան անխռով հանգստի, — Աստուած գիտէ. իմ գիտցածս այնչափն է միայն, որ չը կալ աւելի մեծ երջանկութիւն, քան թէ ապրիլ ընդհանրութեան հոգսերով, ցաւիլ նորա ցաւով, ուրախանալ նորա ուրախութեամբ. իւր ետը, բախտաւորութիւնն ու անբախտութիւնը սերտիւ շողկապել ազգի եսի, նորա բարեբախտութեան և տարաբախտութեան հետ: Այդ ժամանակ միայն մարդ կարող է զգալ, թէ իւր կեանքը չէ անբովանդակ մի զոյութիւն՝ զուրկ վսեմ և անփոխարինելի վայելքից, որը կարելի

\*) Տես «Սոխակ Հայաստանի» 1874 թ. I հատոր. էջ 266.



է. գտնել սոսկ մարդասիրութեան, պարտաճանաչութեան և պարտակատարութեան մէջ, չըխրուելով նիւթապաշտութեան և մարմնապաշտութեան արդմի մէջ և չըխառնուելով խօսուն արարածների շուրհների հետ, որոնց կենցաղը և կենակցելու եղանակն ու միջոցները շատ չ'են տարբերուում զազանների և չորքոտանիների կենցաղից...

Գովելի՞ է այս ընթացքը՝ թէ ծաղրելի, բնական է՞ թէ անբնական, զրական է՞ թէ Ֆանտաստիկական, բայց այս ուղղութեամբ և այս հոգով է մեծացրել օջաղի մայրը իւր որդուն և դժել նորա համար այն ուղին, որով նա գնացել է անվատ և անչորհորդ:

Այս զգացումներն են հրահրել և այս իղէալը տուել նոյնպէս երկու անմտանալի դաստիարակներ — Պատուական Մուրատեանց և Գէորգ Աբովեան, որոնց չիշատակր սուրբ է եղել ինձ համար և կեանքը՝ օրինակելի \*):

\*) Պատուական Մուրատեանցը վարդաշէնցի բարեգործ Առաքել Մուրատեանցի թոռն էր, իսկ Գէորգ Աբովեանը՝ Խաչատուր Աբովեանի Վարպետ անուն եղբոր որդին:

Վաթսունական թուականների սկզբում, երբ աշակերտում էի Նիկողայոս Տէր-Յակոբեանի պանսիօնում, Թիֆլիսում, Պատուական Մուրատեանցը Ներսիսեան զըպրանցի բարձրագոյն դասարանի առաջադէմ աշակերտներից մինն էր և Մարկոս Աղաբէգեանի սիրելին: Իսկ Գէորգ Աբովեանը յիշեալ պանսիօնում գերմաներէն լեզուի և հայկական երգեցողութեան դասատուն էր:

Այդ երկու անձնաւորութիւնների մասին խօսելու պարտաւորութիւն ունեմ, երբ առիթը կ'ընկերկայանայ:

ՄԻՋԱՆԿԵԱԼ ԵՎԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

«Տեսութիւնների» երկու մասերին կցուած էրեսունի չափ նամակների առիթով թէև մի քանի խօսք պիտի ասուի իւր տեղում, բայց և այնպէս աւելորդ չենք համարում նկատել, թէ հարիւրաւոր նամակներից մնացած այդ գրութիւնների բովանդակութիւնը կազմում են անշուշտ, հանրալին գործերը: Անձնականն այդ նամակների մէջ գէթ այնչափն է, որ նորանք ուղղուած են այն անձին, որի հետ խօսում են զանազան հեղինակաւոր մտրդիկ՝ ռուսահայերից և տաճկահայերից: Նամակների մէջ կայ, այո՛, և՛ համակրութեան արտայայտութիւն, և՛ խնդիրք, և՛ ձեռնուութիւն, և՛ պէսպէս անձնական հայեացքներ ու մտերմաբար ասուած բաներ, սակայն բոլորի զլխաւոր նիւթը հասարակական հարցեր են և ժամանակին կարեւորութիւն ունեցած խնդիրներ \*):

\*) Նամակագիրներից շատերը, ինչպէս՝ Գաբրիէլ Քերովբէ և Ռափայէլ Պատկանեաններ, մի քանի վիճակաւոր առաջնորդներ, բաժանաներ, երկու պատրիարքներ, Մատթէոս Մամուրեան, Մելքիսեղեկ Մուրատեան, Ղևոնդ Ալիշան, նոյնպէս Գրիգոր Արծրունի, Լայլն Լայլն, մահկանացուն կնքած մարդիկ են, ուստի՝ նորանց նամակները հրատարակելու «անպատեհութեան» խօսքը չի կարող լինել, ինչպէս, կարծում ենք, և կենդանիներինն էլ:



Այդ գրութիւնները կարող են բաւական զաղափար տալ ընթերցողներին, թէ շարունակ բռնութիւնները և փոթորիկների մէջ անցած անարժանիս բազմամեայ հասարակական դործունէութիւնը հրապարակախօսութիւն է եղել արդեօք, թէ ունայնախօսութիւն և տղայամիտ ծանծաղաբանութիւն: Ազգային կեանքի անհրաժեշտ պահանջների արտայայտութիւն է եղել, թէ անձնական հաշիւների կարգադրութիւն, սնափառական մոլութիւն և սև նոսխանծի ու կոյր ատելութեան թելադրութիւն: Շահագիտական նպատակների և բախտախնդրական ձգտումների հետապնդումն է եղել, թէ ժողովրդի շահերի պաշտպանութիւն, ազգային ծանր տաղանայների թեթևացման համար աշխատութիւն, կենսական խնդիրների յուզման և լուծման նախանձախնդրութիւն: Վերջապէս, սև մէկի իրրթէ ունեցած ուղղութեան հետևողութիւն և ծրագրի գործադրութիւն է եղել, թէ տարբեր ուղղութիւն, ուրոյն ընթացք, անհատական մեղքերէցութիւն, սեփական ծրագրի ծաւալում և անկախ մտքերի արտայայտութիւն:

Նոյն նամակներից ևս կարող են տեսնել ընթերցողները, թէ հրապարակագրութեան երկար ասպարէզիս մէջ, Տաճկաստանում և Ռուսաստանում, հայ և օտար մամուլի էջերում, հէնց մի փոքր շեղումէ՞ր եմ ժողովրդասիրութեան և ճշմարտախօսութեան ճանապարհից. երբ և իցէ ցոյց եմ տուել կեղծիք, երեսպաշտութիւն և շողոմարարութիւն. բազմաթիւ հակառակորդների փաղանդի դէմ ճակատելիս, սակայ

ակնյայտ վտանգների ընդ առաջ զնալիս հէնց մի րոպէ տատանուել էմ, շփոթուել էմ, սև մէկին զիջում արել էմ. տարիներով նիւթակտն և բարոյական աշակցութիւնից զուրկ, մարանչելով նենգաւորների և ազգեցիկ բռնակալների հետ հէնց մի անգամ վայր եմ ձգել արժանապատուութիւնս՝ հրապարակ հանելով ներքին կացութիւնս և ազգից օգնութիւն խնդրելով. ցոյց եմ տուել երկչոտութիւն, արատաւորել էմ խիղճս, դրժել էմ համոզումներիս, հակառակել էմ զգացումներիս՝ հաճոյանալով զօրաւորներին, շոյելով վատերին, սիրաշահելով խարդախներին, արհամարհելով տկարներին, քամահրելով արժանաւորներին, վիատեցնելով խրախոյսի կարօտ անհատներին և յարգանաց արժանի աշխատաւորներին. թէ՞ դնացել էմ միայն շիտակ ճանապարհով, լսել խղճիս ձայնը, կատարել համոզումներիս պահանջը և դէպի պաշտելի ազգն ունեցած բարոյական պարտքս, զիմադրելով «ի խաչ հան զզա» կոչողների հալածանքներին, տկարամիտ, անսկզբունք և փոքրօգի մարդկանց վիրաւորանքներին, դժուծ, քսու և զապիր արարածների վատութիւններին, չարանենդ և ազգալինաս ապիրատների խարդաւանանքներին, զըրպարտութիւններին և մատնութիւններին, էլ չեմ ասու՞մ՝ մասնաւոր կեանքի դառնագոյն զրկանքներին:

Իմ իւղիս մէջ տապակուելով, ծանր եզնաժամերին և սոսկալի տաղանայներին համբերատարութեամբ զիմադրելով, երբէք չեմ ընկճուել և ընկճուած չեմ երևացել. երբէք մէկին զլուխ չեմ ծուել, երբէք չեմ կորցրել վստահութիւնս բարոյական ուժի



և ճշմարտութեան չաղթանակի վրայ. ուստի՝ խրոստաբար արհամարհել եմ, ընկած տեղը չարաչար նախատել ու հարուստել եմ և միշտ անհաշտ մնացել վեղարաւոր և անվեղար քուրմերի, սուտ առաքեալների, կեղծ ազգասէրների, աֆերիստ գործիչների, չարագործ «բարերարների», «բարեպաշտ» Յուզաների, եզական եղուխտների, վնասակար ազգացեցերի և ազգակործան խաչագողերի հետ...

Շատ լաւ եմ զգացել, որ այս անհաշտութիւնս եղել է լէզգիական, ուտէական, լեռնական և առնական մի վերաբերութիւն, այլ ոչ գործնական, վարպետական և... ստրկական, բայց ուրիշ ընթացք և ուրիշ գնացք չէի կարող ունենայ, բացի այն, ինչ ստացել էի դաստիարակութեամբ և ժառանգել առհաւուրութեամբ (по атавизму): Այդ դաստիարակութիւնը մանկութիւնից մտցրել է խօսողի մէջ հաշկական զգացում և ազգային հոգի, իսկ խառն արիւնը և լեռնականների ազդեցութիւնը արտափայլել են նորա բնաւորութեան վրայ և դատ դոյն տուել, քանթէ ունի ընդհանրապէս հայի նկուն, համակերպուող, կրաւորականութեան և... շահախնդրութեան հակամիտ բնաւորութիւնը: Ճակական տեսակէտից ծանր էլ լինի այսպիսի մի խոստովանութիւն, բայց իրողութիւնն է, որ յայտնում եմ, իրաւունք համարելով ազատ ու անկեղծ խօսելու այն ազգի հետ, որի ծառայութեան կեանքս նուիրելու բարեբախտութիւնն եմ ունեցել:

Եղել են նկատողներ,— գլխաւորապէս ուստահայ ինտելլիգենտներից,— թէ քննադատութիւնների և նորանցից առաջ եկած բանակոխների մէջ «խիստ», «թունաւոր» և «կրքոտ» լեզու եմ գործածել և շատերին խորապէս վիրաւորել...

Այս առարկութիւնը բացատրութեան պէտք ունի:

Կ. Պօլսի ազգային ժողովի, պատրիարքարանի, արանց և կանանց ընկերութիւնների, մամուլի ներկայացուցիչների, սովելոց շանձնաժողովի, հայ-հոռմէական պատրիարքարանի, Մխիթարեան հայրերի, հայազգի էֆենդիների և այլ հաստատութիւնների ու անմիջնների գործերը, նորանց վերաբերութիւնը ծանկահայաստանի կարիքներին, գաւառահայերի կենսական պէտքերին քննադատելիս, նորանց բռնած ընթացքը և հետեւի ուղղութիւնը, ունենալի ծրագիրը պարզելիս, թերութիւնները և չօռի կողմերը դատափետելիս այնպէս չեմ խօսել Կարապետ-էֆ. Փանոսեանի օրգան՝ «Մանգումէի-էֆքեարի» մէջ, մասամբ էլ «Մշակում», 1881-1883 թուերին, ինչպէս խօսուել է ուստահայ դիպլոմաւոր ինտելլիգենցիայի մասին «Армяне» գրքում: Ոչ, այլ խօսել եմ այնպիսի խստութեամբ և սաստկութեամբ, որ այլալուծ ու շուարուած պօլսեցիներն իրանց թերթերի մէջ չարծակումներս անուանել են— «բերդի ումբակոծութիւն», «վանդալական արշաւանք», «ֆլիբուստիեռի—ծովահէնի ասպատակութիւն» և



այլն \*): Ամենքն էլ սաստիկ զրգուել են, դառնացել, զայրացել, իրար անցել, բայց և այնպէս շատ բաներ ուշադրութեան են առել և մի քանի ժամանակից յետոյ հրապարակապէս խոստովանել են իրանց սխալները և հետո համակարծիք զրտնուել:

Ռուսահայ թանձրամիտ, եսապաշտ և շահամօլ, տմարդի և նախանձոտ, հալածասէր, բիրտ և դռնհիկ դիբիլի գենտներ յէս Կ. Պօլսի ազգայինները՝ պարսիկ համշարիներին միայն վայել քէն ու ոխ չեն պահել իրանց հարուածողի դէմ. կեղտոտ զրբպարտութիւններ չեն հնարել ու սարածել. պառաւական բամբասանքներով և փողոցային հաչհոյանքներով չեն ցոյց տուել իրանց շնորհքը. տմարդի ու անարգ ստրուկներին չատուկ միջոցներ ձեռք չեն առել՝ զրածներս չրկարդացուելու համար. լրագրաց էջերը փոքրօրութեամբ առաջս չեն փակել. օտար թերթերի խմբագիրներին՝ մատնութիւններով և զրպարտութիւններով չի նամակներ չեն գրել. լուտանքների հեղեղներ զլիսիս չեն թափել. նախանձից և կոյր առելութիւնից զրգուած՝ պարզամիտներին դէմս չեն զրգուել. ընդհանրութեան շահերն իրանց նեղ եսականութեան, դժուծ նկատումներին և անձ-

\*) Լրագրական եռամսայ կատարի պայքարը մղելիս՝ դէմս ունէի 9 թերթեր — «Մասիս», «Թերջիմնի-Էֆ-բար» — օրգան Հայ-Տոմէական պատրիարքարանի, («Հայրենիք», «Աշյս»), («Փունջ»), («Մամուլ») — Կ. Պօլսում, «Մեղու Հայաստանի») և «Արձագանք») — Թիֆլիսում և Վահրամ Սանկունու օրգան («Արարատ») — Էջմիածնում:

նական կրքերին չեն զոհել: Ոչ, ամենեին ոչ, այլ, փոթորիկը փոքր ինչ հանդարտուելուց յետոյ, այրաբար և հաչաբար, վեհանձնաբար և եղբայրաբար, բողոքավարութեամբ և փափկութեամբ, սիրով ու պատուով վիճաբանել են, դատել, քննել և «այո» ասելիքին «այո» են ասել և ընդունել, «ոչ» ասելիքին «ոչ» ասել ու մերժել:

Տաճկահայ ինտելլիգենցիան անս այսպէս է վարուել. որովհետև նա մաքրի հասունութիւն և զգացումների ազնուութիւն է ունեցել. ընդհանուր շահերը անձնասիրական նկատումներից վեր է դասել. պարտաւորութիւն է համարել կարեորութիւն տալու նորեկ, քիչ թէ շատ դիտող և սրտացաւ մի հայի խօսքերին, որը՝ Ներսէս պատրիարքի և Կ. Պօլսի ազգայիններից շատերի ասելով՝ «խօսել է վսեմ ներշնչմամբ, զրել է ոչ մելանով, այլ սրտի արիւնով և արտասուքի կաթիլներով...»: Նրբամիտ և բարեկիրթ ազգայինները հասկացել են սիրոս ու միտքս, զնահատել են զգացումներիս անկեղծութիւնը և կարելոյն չափ զոհացում են տուել ու մխիթարել, այլ ոչ թէ ռուսահայ հօտած ու նեխուած գարշելիների նման խռովել են հետս, ետեիցս քարածղութիւններ արել, երեսիս լրբաբար խօսել, վայրապար բառեր խծբծել և վայրենարար կրքի ելել...

Ահա, թէ ինչպէս է ամօթահար արել տաճկահայ ինտելլիգենցիան, չաղթահարել, կրթել և հոգեպէս իրան հետ ամուր կապել «ըմբոստ ու անգուսպ



լեռնականին», որն երեք տարի անդադար շանթեր է սեղապել և կրակ մտցել նորա զլխին...

Միևնոյն ժամանակ ուստահայ մի կարգ ինքնակոչ գործիչներ և ազգի անկոչ խնամակալներ, պարազլխութեամբ հանրածանօթ չարապետի, Պետերբուրգում, և նորա արքանեակ՝ «Արծազանքի» խմբագրի, Թիֆլիսում, էլ վատութիւն չըմնաց, որ չ'անէին ինձ. էլ խաչտառակութիւն չըմնաց, որ չըհանէին զլխս \*):

Ահա այդ ապիրատներին ոչ թէ միայն վիրաւորել էմ, այլ մահացու հարուածներ իսկ տուել և անբուժելի վէրքեր պատճառել: Պէտք չէ սակայն մոռանալ, որ զորանցից և ոչ մէկի հետ ոչ մի անձնական հաշիւ, ոչինչ առնելիք-տալիք չեմ ունեցել, այլ սոսկ նորանց ստոր արաքները, կեղտոտ գործերը և դիւալին խարդաւաններն իմանալով եմ խօսել ու խարագանել:

Եթէ ո՛ր է մէկը ցանկութիւն ունենայ թերթիւ «Մշակի» համարները, 1878-ից մինչև 1883-ի վերջը, և Կ. Պոլսի հայ թերթերը, 1881-ից մինչև 1891-ը, նա կարող է ստուգել, որ իմ գրածներիս մէջ չէ եղել ոչ մի յօդուած, որն ուղղուած լինէր յատկապէս այս և այն անհատականութեան դէմ և շօշափէր անձնական պատիւ ու քրքրէր մասնաւոր կեանք: Միւս կողմից՝ եթէ թերթիւ լինեն չարապետական խմբի երկու հանգուցեալ օրդանները — «Արծազանքը», 1882-1883 թ.թ., և «Մեղուն», 1881-1883 թ.թ., նորանց մէջ կը դռնեն բազմաթիւ,

\*) Տես «Армяне» էջ 40.

ամօթ էլ չըլինի տակ... գրութիւններ, միայն և միայն անձնականութիւնս շօշափող \*):

Այդ տեսակ լպիրշ գրութիւններին ստիպուած եմ եղել երբեմնապէս պատասխանելու այն իսկ խօսքերով, որոնք Աւետարանի մէջ ևս գործ են անուած ըստ տեղին, ինչպէս օր., խոզ, բոզ, գոզ, աւազակ և այլն: Բայց զարձեալ զբազմանցս նիւթից բնաւ չեմ շեղուել և առանձին յօդուածներով չեմ պատասխանել, այլ պատասխանել եմ այնպէս, ինչպէս կը պատասխանէ բեմի վրացից խօսողն իրան ընդհատող ստահակներին, այն է՝ միջանկեալ և մի քանի բառերով, որովհետև... աւելին չ'արժէին: Եթէ այսչափին էլ «խորապէս վիրաւորել է» և սուր սլաքի պէս ոմանց սրտին մխտելով՝ մահացու հարուած տուել, դորանում ամենևին մեղաւոր չեմ: Ես ի՞նչ մեղք ունեմ, երբ վարձկան գրչակները և նորանց բաղձաբուսաւոր աղաներն այնչափ արա-

\*) «Արծազանքի» խմբագիրը չէ՛ր, որ իւր անուանարկ թերթի մէջ սուտ հեռագիր տպեց Կ. Պոլսից, իբր թէ Գրիգոր Նիկողոսեանը խելագարուել է և նորան տարել են Ս. Փրկչի հիւանդանոցը: Յետոյ էլ սև շրջանակով երկար մահազոյժս հրատարակեց, ինչպէս արդէն մեռած մարդու: «Արծազանքի» մի ուրիշ համարն էլ ծայրէ ի ծայր լցրեց իմ հասցէին ուղղած հայհոյանքներով, վայրախօսութիւններով, զբպարտութիւններով և մատնութիւններով: (Տես «Արծազանք» 1882 թ. № 45 և 1683 թ. № 2):

Հարամազայութիւնը և սրիկայութիւնը պարծանք համարող մէկը միայն կարող էր այսպիսի միջոցներով հակառակորդի հետ մաքառել, թէև այդպիսիներին հակառակորդս ունենալու պատիւը երբէք չեմ արել...



տաւորուած մարդիկ են եղել, որ սարսափ են զգացել իրանց արաքների վրայ արած ամենաթեթեւակնարկութիւններից իսկ: Երբ այդ աստիճան յանցապարտ էին Աստուծու և ազգի առաջ, ո՞վ էր ասում այդպիսիներին հրապարակ գուրս գալ՝ կրօնի և ազգի նախանձախնայրութիւն ցոյց տալու, «բարոյական սկզբունքների» մասին ճառել և՛ ի լրումն ամենաչնի՛ դիկտատորների գերխաղաղութեանը (\*): Ես ի՞նչ մեղաւոր եմ, վերջապէս, որ իմ դէմ ուղղած նորանց հարուածները օղի մէջ են անցել, իսկ իմ տուածները մահացու վէրքեր պատճառել:»

«Խիստ», «Թունաւոր» և «կրքոտ» (ի մահ կրակոտ) լեզուն չարութեան և ցաւազարութեան նշան կարելի է համարել այն դէպքում, երբ այդ լեզուն գործածողը չէ ունեցել ազնիւ եռանդ և բուռն ոգևորութիւն, չէ ձանաչել արժանաւոր մարդկանց յարգը, չէ գովել, չէ փառաւոր, չէ քաջալերել համեստ աշխատաւորներին, անփառասէր գործիչներին, ազգը սիրող և ազգին պատիւ բերող անձնաւորութիւններին: Եթէ նա չէ գգուել իւր սրտում և չէ արտայայտել սէր և խանդաղատանք դէպի իւր ազգը, չէ հիացել իւր ազգի մէջ գտնուող

\*) Թէև յայտնի իրողութիւն է, որ վարպետ չարագործները, ճարպիկ գողերը և ամենաանբարոյական արարածները, հասարակութեան կասկածն իրանց վրայից հեռացնելու համար՝ աշխատում են բարձրաձայն խօսել բարեպաշտութիւնից, բարոյականութիւնից և օրինապահութիւնից, և ուրիշների գլխին էլ խրատատուններ հանդիսանալ:

առաքինութիւններով և այդ առաքինութիւնների եռանդուն քարոզիչը չէ եղել հայ և ռուս մամուլի մէջ: Եթէ մարդկութեան վերաբերուող հրատապ հարցերով նա չէ հետաքրքրուել ու կարելոյն չափ արծաղանք չէ տուել տառապեալ աղգերի և դասակարգերի վշտերին \*): Եթէ նա չէ չափշտակուել մեծ մարդկանց գործերով, չէ օրհնել նորանց չիշատակը և չէ փառաբանել նորանց անունը, խօսքով և գրչով \*\*):

Ապա ուրեմն էլ ինչո՞ւ փթնել և ինչո՞ւ դատապարտել չլիինի՞ թէ միայն սեւացնելու և արատաւորելու մոլութեան չազուրկ տալու համար, մոլութեան, որն այնչափ զարգացած է դժբախտաբար ռուսահայերիս մանաւանդ ինտելիգենտ դասակարգի մէջ:

Ի նկատի պիտի ունենալ այն հանգամանքը ևս, որ ամեն մի գրող իւր խառնուածքը—տեմպերամենտն ունի, որը չը պէտք է և չի կարելի բռնադբօսել: Եթէ կան մարդիկ, որոնց գրութիւնները, իբր «լուրջ բնաւորութիւն կրող», ընթերցողների

\*) Ինչպէս եղել է տարիներէ ի վեր, օրինակ, «С.-Петербургскія Вѣдомости»-ի էջերում, և շարունակուում է մինչև այսօր անստորագիր գրութիւններով, գլխաւորապէս այդ լրագրի բաղադրական բաժնում:

\*\*) Տասը տարի Վ. Պ լսում ապրելով և տասնուերեք տարի էլ Ս.-Պետերբուրգում հապա էլ ինչո՞վ ենք զբաղուել Պետերբուրգի մի կարգ «ազգասէր» սողունների և պորտաբոյժ «գործիչների» բանբերութեամբ և բանտարութեամբ, քսութեամբ և զրախօսութեամբ հօ չենք պարպուել...»



ու զգացումներն անվեհերութեամբ յայտնելու և հարկաւոր դէպքում՝ հոսանքի դէմ գնալու համար: Չր պիտի ունենայ շահագրտական ձգտումներ և անձնական նկատումներ: Չր պիտի ենթարկուի միջավայրի ազդեցութեան. հակառակորդների կողմից իւր դէմ գրգռած ամբոխի ատելութեան, հասարակական տրտունջին, ասէ-կօսէներին, բամբասանքներին և զրպարտութիւններին կարեորութիւն չը պիտի ընծայէ: Նորա եւր, տենչանքն ու ձգտումը, վիշտը և ուրախութիւնը օրգանապէս պիտի կապուած լինի ընդհանուր մտածումների և զգացումների հետ: Նա պիտի լինի մի տեսակ մէդիտում՝ իւր ներշնչումներն այդ ընդհանրութեան մտքից և սրտից ստանալու համար: Նա պիտի ունենայ հզօր կամք, համբերութիւն, տոկունութիւն, կատարեալ գիտակցութիւն իւր կոչման և ստանձնած գործին, երկրպագում իրէպի սրբութեան, անսասան հաւատ արդարութեան յաղթանակին, և այլն և այլն \*):

Այս յատկութիւններով օժտուած հատրնաիր մարդիկ միայն կարող են հրապարակախօս և հասարակական մտքի առաջնորդ կոչուիլ: Միմեանցից բաւական տարբերուող և միմեանց պակասութիւնները լրացնող այդպիսի հրապարակախօսներ եղել են և կան տաճկահայերի և ռուսահայերի մէջ, ինչպէս՝ Ստեփան Ոսկան, Մաաթէոս Մամուրեան, Կարապետ Փանոսեան, Գրիգոր վ.

\*) Հրապարակախօսի արժանեաց թւումն ոչ որին իրաւունք չի կարող տալ առարկելու թէ այդ արժանիքը կրելու յաւակնութիւնն ունենը:

Էնֆիէշեան (հակա-հասունեանների յայտնի պարագլուխ, նշանաւոր հռետոր և տրիբուն \*), Մինաս Չերազ և Արփիար Արփիարեան—տաճկահայերի մէջ. Ռափայէլ Պատկանեան (որն եղել է աւելի հրապարակախօս, քան թէ բանաստեղծ), Միքայէլ Նալբանդեանց, Ստեփաննոս Նազարեանց և Սմբատ Շահ-Աղիզ—ռուսահայերի մէջ: Գրիգոր Արծրունին, ինչպէս ցոյց կը տրուի իւր տեղում, չէ եղել ոչ հրապարակախօս և ոչ իսկ գրագէտ, բառի բուն նշանակութեամբ, այլ նա եղել է սոսկ լաւ հրատարակիչ և զօրժնական սուր հոտառութիւն ունեցող ժողովուրդի ստ, որին տաճկահայերն ընդհանրապէս խմբագրապետ են անուանում: Ինչպէս ժողովուրդի ստ Գր. Արծրունին սակայն ժամանակակից ռուսահայ իւր պաշտօնակիցներից շատ աւելի բարձր է կանգնած եղել:

Տարիքը հրապարակախօսի և առհասարակ գրողի տեմպերամենտի վրայ մեծ ներգործութիւն չի կարող ունենալ, եթէ կեանքի դառնութիւնները և ծանր հիասթափումները նորան չեն ձնշել և եթէ նա ի բնէ օժտուած է եղել հոգեկան արիութեամբ և մտքի կորովով:

Հարուածելով շատերին և նշանակէտ ծառայելով բազմաթիւ հարուածներին և անզուսպ

\*) Նորա օրգանն էր «Մէջմոնայի-Ախպար» թերթը, որի մէջ գրուածները ներշնչուով էին Գրիգոր Էնֆիէշեանից, Էնֆիէշեանի մասին տես «Армяне» էջեր 13—14:



չարծակուծներին (գրեթէ բացառապէս ռուսահայ ծրարողների կողմից), շատ քիչ եմ վհատուել և երբէք չեմ զղջացել, թէ ինչ՞ու մտայ այնչափ փշոտ ասպարէզ: Վհատուել եմ, խորին վիշտ զգացել, հայութիւնս անբախտութիւն համարել, տեսնելով միայն ռուսահայերի գէպի իրար տածած ծայրայեղ ատելութիւնը, նորանց արտաքույ կարգի նախանձառութիւնը, շարակամութիւնը և միմեանց պատճառած վնասն ու չարիքը: Յուսահատուել եմ, ողբացել, գոյութիւնս անիծել, տեսնելով մեր հրեշաւոր եսականութիւնը, չափազանց նիւթապաշտութիւնը, կատարեալ անտարբերութիւնը գէպի ընդհանուր պատիւը և վարկը. տեսնելով մեր մէջ կրօնական և բարոյական հիմունքների խախտումը, զերգաստանական կեանքի քայքայումը, օտարազգեաց հետ ամուսնանալու հակումը, օտարախօսութեան մոլութիւնը, լեզուի աղաւաղումը և նկատելի անհետացումը. տեսնելով էջմիածնի թուլութիւնը, մեր «սրբազան» և «սուրբ հայրերի» մեծագոյն մասի տարածութիւնը, նորանց չինովնիկային ընթացքը, քահանաներից ոչ քիչերի շահամոլութիւնը, ըմբոստութիւնը, անկրթութիւնն ու անսրտութիւնը. տեսնելով, վերջապէս, մեր վիպլոմաւոր ինտելլիգենցիայի մտաւոր և բարոյական սնանկութիւնը, մաժուլի ապիկարութիւնը \*), նորահաս սերունդի ասպականութիւնը, հին սերունդի ձեռնթափութիւնը:

\*) Իսկն ասած՝ մամուլն ինչ անէ, երբ հասարակութիւնը շանտաժներով զբաղուող թերթ է սիրում:

միով բանիւ՝ ազգայնութեան հիմանց երերումը և նորան սպառնացող ակնյայտ վտանգը:

Շարունակ մտածելով և ցաւելով մեր ազգի այս տխուր վիճակի վրայ, ոչնչով չեմ կարողացել ինձ մխիթարելու, բացի հայ կնկայ մտքիս մէջ տպաւորած խօսքերից, թէ «այնչափ հազար տարիներ այնչափ փորձանքներից ազատուելով, եթէ Աստուած պահել է մեր ազգը, հաւատա՛ որ միայն սև օրեր տեսնելու համար չէ պահել, այլ լաւ օրերի համար, որ պիտի տեսնէ ազգը, դեռ շատ երկար ապրելով...»

Նախախնամութեան անքննելի տնօրինութիւններին ապաւինողի համար այսպիսի մի հաւատ, անշուշտ, սուրբ է, անխար և խիստ յուսադրական. իսկ փաստերի վրայ չենուելով, արամաբանօրէն խորհելով և լրջաբար մտածելով՝ կարելի է բոլորովին վհատուիլ և ամենայն յոյս կորցնել:

Հիմայ տեսնենք, թէ ինչ եզրակացութեան կրհասնենք՝ իրողութիւնները քննելով և դրականապէս մտածելով: Տեսնենք, թէ փրկութեան յոյս և ճար մնացել է, թէ մեր ժամն արդէն պրծել է և «հողօղն հանգուցելոց» պիտի կարգալ մեզ վրայ, ինչպէս կենդանի մեռեալների...



Թուած ազգերի ստրկանալուն և հետզհետէ ոչնչանալուն:

Մարդկային զոյութեան այս անդուլ պայքարի մէջ, քաղաքական կեանքը կորցրած ազգերից այնպիսիներն են աւելի լաւ դիմադրել ձուլման, որոնք պահել են տնտեսական անկախութեան հետ և զօրաւոր բարոյական կապեր. ունեցել են ընդհանուր շահերի գիտակցութիւն, ցեղային համերաշխութիւն և ազգային բարօրութեան հասկացողութիւն ու ձգտում:

Բարոյական կապերն այդպիսի ազգերի մէջ պահուել են զխաւորաբար արիւնհակցութեամբ, լեզուով, կրօնով, աւանդութիւններով և սովորութիւններով: Գրականութիւնը, ինչպէս մի ազգի մտաւոր և բարոյական կեանքի արտայայտութիւն, ծառայել է ընդհանուր կապերի ամրապնդման:

Այս ընդհանուր տեսութիւններից չետոյ մի ակնարկ ձգենք մեր ազգի անցեալի վրայ և տեսնենք, թէ նա ինչ պայմանների մէջ է զտնուել, ինչ յատկութիւններ ունեցել և ինչ որակութիւններ մշակել իւր մէջ:

\* \* \*

Իւր աշխարհագրական անբարեյաջող դիրքով հայաստանը, ինչպէս յայտնի է, երկար դարեր՝ արևելքից և արևմուտքից գուրս կկամ աշխարհակայների կուռածաղիկն է եղել և նորանց ընդհան-

ՀԱՐԵՒԱՆՑԻ ՀԱՅԵՍՏՔԻ ՄԵՐ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ.

Ազգութիւնների և ցեղերի չարատեութեան խնդիրը, ինչպէս ցոյց է տալիս պատմութիւնը, կախում է ունեցել զխաւորապէս նորանց երկրի աշխարհագրական դիրքից, տեղագրական պայմաններից, նոյնպէս և նորանց կեանքի քաղաքական և քաղաքակրթական որակից: Ինական սահմաններով և երկրի ամուր դիրքով լաւ պատսպարուած ազգերը, ունենալով քաղաքակրթական յատկութիւններ, զէնքը քաղաքակրթութեան հետ միացնելով, տիրել են և ձուլել իրանց հետ մտաւոր կամ հեռաւոր տկար ազգերը և ցեղերը, որոնց երկրի վրայ արշաւելու և իրանց տիրապետութիւնն ընդերկար հաստատելու դիւրութիւններ են ունեցել: Փոքրիկ ցեղերը Վժռարամատչելի լեռների, ինչպէս և ուխտիսների վրայ ապրելով, վայրենութեան մէջ իսկ երկար դարեր պահել են իրանց ուրոյնութիւնը: Կրօնական պաշտամունքները արագացրել են կամ կասեցրել մարդկային առաջադիմութեան ընթացքը և մեծ դեր են կատարել ազգութիւնների զոյութեան խնդրի մէջ: Տնտեսական հանդամանքները ծառայել են իբր շարժառիթ արշաւանքների և արիւնահեղ պատերազմների, նպաստել են յաղ-



քումներէ թատերավայրը, ունենալով այդ ընդհարումների մէջ իւր գործօն մասնակցութիւնը \*):

Իարևոր և գրեթէ անընդհատ պատերազմները՝ հայաստանի բնակիչների մէջ բնականաբար պիտի զարգացնէին դիմադրութեան հոգի և զօրաւոր կամք. առաջ պիտի բերէին անհատական կորով և պէսպէս արժանիք: Քաջամարտիկ ժողովուրդը աչք բանալու ժամանակ չէ ունեցել, որ կարողանար աստիճանաբար զարգացնել իւր մէջ քաղաքացիական հոգի և պետական միաբե \*\*\*): Այդ զարգացման հասնելու համար հին և նոր ազգերն երկարատե հանգստութիւն են վայելել, շնորհիւ առաւելապէս երկրի նպաստաւոր դիրքի և տեղագրական յաջող պայմանների: Նորանք շրջապատուած են եղել կամ ծովերով և անապատներով, կամ անանցնելի լեռներով և ովկէանտներով, կամ պաշտպանուել են երկրի ամուր դիրքով: Այդ պայմաններից գրեթէ և ոչ մինը չէ ունեցել շարաբախտ հայաստանը \*\*\*):

Հայոց թագաւորները՝ արտաքին և ներքին հանգամանքների շնորհիւ, քաղաքական և տեղագրական արգելքների պատճառով չեն յաջողել զօրեղ կենտրոնական ոյժ կազմելու, ժողովրդի մէջ քաղա-

\*) Տես „Армяне“ էջեր 70—97

\*\*) Այս յատկութիւնների պակասութեան վրայ մեծապէս պնդում է պրօֆ. Քերովբէ Պատկանեանը, սխալ մեկնութիւններ տալով սակայն իւր ներկայացրած փաստերին: (Տես „Армяне“ էջեր 117—121):

\*\*\*) Պրօֆ. Պատկանեանն աշխատում է ապացուցանել թէ «ունեցել է», իսկ թէ որչափ խախտու և անհիմն են նորա ապացոյցները, կարդա „Армяне“ էջեր 105—107:

քական լայն հաշեացքներ արծարծելու և բարձր հայրենասիրական հոգի մտցնելու: Ժողովուրդն ինքն արդէն շարունակ իւր գլուխը պաշտպանելու հետամուտ՝ քաղաքականապէս հասունանալու միջոց չէ ունեցել, որպէսզի այդ հասունութիւնից կարողանային օգտուիլ թագաւորները՝ զօրաւոր կենտրոնական ոյժ կազմելու համար, կառավարական այս կամ այն ձևի տակ: Կենտրոնական ոյժ կամ իշխանութիւն խօսքը չենք հասկանում այն նեղ իմաստով և մոնղոլական ազգերի կեանքին յատուկ ձևով, որ բնութենում է պրօֆ. Պատկանեանը, այլ բոլորովին տարբեր իմաստով \*):

Հայոց նախարարներն ևս միմեանցից բաժանուած են եղել մեծամեծ խոչնդոտներով, որ ներկայացրել են լեռները, ժայռերը, անտառները և ջրալին հաղորդակցութեան պակասութիւնը: Այս պատճառով նորանք միմեանց հետ շփուելու, համերաշխութիւն հաստատելու դիւրութիւններ չեն ունեցել: Արտաքին ենշումներն ու խոչնդոտներն ևս միւս կողմից են արգելք եղել նախարարների մէջ սերտ կապ և յարատե համերաշխութիւն կայանալուն:

Հայաստանի ունեցած այսպիսի դրութեան հետևանքը եղել է նորա բնակիչների միութեան կապերի թուլութիւնը և առանձնականութեան (партикуляризмъ) ու անհատականութեան (индивидуализмъ) չափազանց զարգացումը: Այս առանձնաչատկութիւնների բնորոշ դժերը պիտի

\*) Տես „Армяне“ էջեր 123—127:



լինէին, անշուշտ, անհատական ուրոյնութիւնը, նեղ հայրենասիրութիւնը և ընդհանուր շահերի սահմանափակ հասկացողութիւնը, որը չէ անցել այս ու այն նախարարութեան անկախութիւնը պահպանելու նախանձախնդրութիւնից դէն:

Նախարարներից ոմանք, ինչպէս դիտենք, հրաշքներ են գործել անհաւասար կռուի մէջ, որովհետև նորանց առաջնորդութեամբ կռուող հայերից իւրաքանչիւրը կռուել է իւր հասարակական և անհատական անկախութիւնը, իւր ընտանեաց ազատութիւնը պահպանելու համար, այլ ոչ թէ ամբողջ չաչաստանի, ընդհանուր հայրենիքի անկախութեան սիրով վառուած: Այս հոգին և այս գիտակցութիւնը նորանք չեն ունեցել, ինչպէս արդէն բացատրեցինք, անդորր կեանք և հասունանալու նպաստաւոր պայմաններ չ'ունենալու պատճառով: Սորանով կարելի է բացատրել այն երևոյթը, որ չաչաստանի մի կողմում ապահով կեանք վայելող հայերին ընդհանրապէս շատ քիչ է հետաքրքրել միւս կողմում չուսահատաբար կռուող ազգակիցների վիճակը. ուստի ամեն մի նախարարութիւն՝ արտաքին թշնամիների հետ առանձին կռուելով՝ զիւրութեամբ է ընկճուել, հազուադէպ բացառութեամբ:

Այս հանդամանքը մեծ ցաւ է պատճառել մեր հայրենասէր մատենագիրներին և առիթ է տուել մեր նախնեաց «անմիաբանութեան» վրայ ողբալու: Բարձր մտածում ունեցող և հրեղէն աւիւն կրող մեր խնկելի մատենագիրները բարոյապէս, իհարկէ, իրաւունք են ունեցել ողբալու, մինչդեռ խորը քրն-

նելով՝ միաբանութեամբ չրգործելու համար մեր նախնիքներին մեղադրելու շատ էլ հիմնաւոր պատճառներ չեն ունեցել: Չրտեսմնք արդեօք, որ չոլլանդիան հանդիսատես լինելով իւր միացեղ, միալեզու և միակրօն եղբայրների — բօէրների ջնջման, չրկարողացաւ տեղից շարժուիլ և իւր արիւնաքամ եղբայրներին մի իրական օգնութիւն անել: Մինչդեռ ժամանակակից հաղորդակցութիւնների զիւրութեան կողմից՝ չոլլանդիան զուցէ աւելի մօտ էր բօէրներին, քանթէ դիցաւք՝ Աղուանից նախարարութիւնը Արժրունեաց կամ Մամիկոնեանց նախարարութիւնից:

Այս օրինակով չենք ուզում համեմատել արդի եւրոպական ազգերի հայրենասիրական գիտակցութիւնը հին հայերի ունեցած գիտակցութեան հետ, այլ ուզում ենք ասել, որ, եթէ մեր նախնիք ունենային իսկ հայրենասիրական բարձր գիտակցութիւն, հաղիւ թէ կարողանային ուրիշ կերպ շարժուիլ ու վարուիլ և այլ կերպ անօրինել իրանց բախար, շնորհիւ չաչաստանի ճակատադրական դիրքի և արտաքին ու ներքին պարագաների:

Վերև ասուածների եղբակացութիւնն այս է, թէ նախնի հայերի մէջ արդէն ընդհանուր շահերի գիտակցութիւնը, ցեղային համերաշխութեան հոգին և ազգային բարօրութեան հասկացողութիւնն ու ձգտումը չէին հասել զարգացման ցանկալի աստիճանին, հետևաբար՝ հայրենասիրութեան գա-



զափարը և հոգին, բառի բուն նշանակութեամբ, հին հայերի մէջ անգոյութեան հաւասար է եղել, համեմատելով զոնէյունաց և հռոմէացոց հայրենասիրութեան հետ:

ՀԱՅ ԱԶԳԸ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ. ՆՈՐԱ  
ՄԷՋ ԱՌԱՋ ԵԿԱՄ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

Հասկանալի է ըստ ինքեան, թէ այնչափ թույլ ազգային զիտակցութիւն ունեցած մի ժողովուրդ, ինչպէս նախնի հայերն են եղել, իւր անկախութիւնը կորցնելուց և մահմետական տիրապետութեան տակ ընկնելուց չետոյ, հայրենասիրական իդէալին չըպիտի ձգտէր: Այդ իդէալը չըպիտի ծառայէր իբր բարոյական հիմունք նորա գոյութեան, իբր շողկապ նորացիրուցան մասերի մէջ, իբր օղակ համերաշխութեան և միաբանութեան, իբր նպատակակէտ անհատական և հաւաքական կեանքի: Այս պատճառով հայութիւնը իսլամութեան մէջ պահպանուել է և չարաւելլ զլիսաւորապէս քրիստոնէական կրօնի ուժով և կրօնն եղել է հոմանիշ ազգութեան: Հայրենիքի չիշատակները պահուել են վանքերով և եկեղեցիներով և տեղ տեղ էլ քաղաքների ու բերդերի աւերակներով, որոնք սակայն չեն ներշնչել ընդհանրութեան մէջ և պահել հայրենասիրական զգացում:

Մահմետական վեհապետները, մեծ մասամբ և նորանց կուսակալները, աշխատասէր հայ ժողովուրդից տնտեսապէս օգտուելու նպատակով, — մասամբ էլ մահմետական կրօնի համեմատական համբերողութեան շնորհիւ, — տրամադիր են եղել հայերին սիրա-



շահելու և չեն դիպել Հայաստանեայց եկեղեցու անկախութեանը \*): Հայոց կաթողիկոսներին և պարիարքներին նորանք ճանաչել են իբրև ներկայացուցիչ և հոգաար հայ ժողովրդի, ուստի յարգել են նորանց բարձր դիրքը և նաև անմիջական յարաբերութիւններ ունեցել նորանց հետ: Ճնշումներ և հայաճանքներ, անտարակոյս, շատ են եղել, բայց ոչ մուսուլման վեհապետների կողմից, այլ պիտաւորապէս մահմետական հոգևորականութեան ազդեցութեամբ: Այդ վեհապետների բերանից դուրս եկած խօսքը թէև ունեցել է անխախտելի օրէնքի ոյժ, բայց նորանց մտքով երբէք չէ անցել հրաման արձակել՝ հայ հոգևորականութիւնը և հայ ժողովուրդը սրի զօրութեամբ իսլամութեան դարձնելու կամ բնաջինջ անելու: Դա ապացոյց է, որ մահմետական վեհապետներն եղել են վեհանձն դէպի հայ ազգը և համբերող դէպի նորա դաւանութիւնը, որով հայերը չորս-հինգ դար ապրելով պարսից և տաճկաց տիրապետութեան տակ, անվթար պահել են իրանց ազգութիւնը: Բայց կրօնական խտրութիւնը, կեանքի, կայքի և աշխատու-

\*) Բազմաթիւ ապացոյցները զանց անելով, յիշատակեմ միայն Հայ կնիկայ հաղորդած երկու իրողութիւնները.— Նուխուայ վերջին խան Սելիմը՝ եկտր հայերին սիրաշահելու համար՝ Քիշի վանքից իւր ուսերի վրայ չորս մեծ քարեր է կրել և դրել իբր հիմք Նուխուայ «գարիբականների» — պանդուխտների Ս. Աստուածածնայ եկեղեցու:

Տաթևայ վանքի և 69 եկեղեցիների ու վանքերի նշանաւոր պաշտպան Աւանք Օվանէսին, որը շատ պարսիկ-

թեան անապահովութիւնը հայերի ու շքն ու միտքը տարել է միշտ դէպի քրիստոնէական կառավարութիւն, որն և հաստատուել է վերջապէս Պարսկահայաստանի և Տաճկահայաստանի մի մեծագոյն մասի վրայ:

Մահմետական աշխարհում հայն ամփոփուելով առտնին հոգսերի և կրօնական պահանջների կատարման մէջ, շարունակել է պահել իւր անհատական ուրոյնութիւնը՝ ընտանեկան կառուրի տակ: Եթէ նա իրան համարել է սարուկ, բայց եղել է սարուկ արտաքուստ, այլ ոչ ներքուստ: Նա խոնարհուել է, ձկուել այլազգու առաջ, մինչդեռ սրտի մէջ միշտ զգացել է իւր բարձրութիւնը, ինչպէս անհատ: Ատելով այլակրօնին, որին նա «անօրէն» է անուանել, զզուելով և զարշելով նորանից, հայը սակայն շույլ է, խնդակցել նորան և և իւր ներքին համոզմանց հակառակ շատ բաների մէջ նորան «այն» ասել:

Դարերի ընթացքում հայի ունեցած հոգեկան այս աննօրմալ դրութիւնից առաջ են եկել երկդիմութիւն, կեղծաւորութիւն և ծածկամտութիւն. իսկ օտարի անկեղծութեան չը ներ ու թուրքեր է կոտորել և նախիջնանի ու Օրդուբաթի խաների գէմ իբր հայրենասէր ասպատակ ընդերկար կռուել, Ֆաթ-Ալի շահը յատուկ հրովարտակով ներում է շնորհել, գրելով հրովարտակի մէջ, թէ «Տոչակաւոր քաջը մե սասաբ դէյրա թի — կրօնի նախանձախնդրութիւն է ցոյց տուել այլ ոչ թէ աւազակութիւն արել...»: (Տպագրութեան սպասող ձեռագիրներին մէջ պատմուած են այդ հերոսի մի շարք քաջագործութիւնները):



հաւատալուց—կասկածոութիւն և թերահաւատութիւն (scepticisme): Մտաւոր և բարոյական յատկութիւններով շատ աւելի բարձր, քան թէ զինքը ճնշող «բարբարոսը», հաշր գուրկ է եղել ի սրտէ ուրախանալու, ծիծաղելու և զուարճանալու վայելչութիւնից, այլ նա մնացել է բանաստեղծի սոսածի պէս՝ «մտրդկանց մէջ ուրախ, միաջնակ լալով»: Ունենալով բնական պահանջ՝ սրտինը և մտքինը ազատաբար արտայայտելու, բայց չ'ունենալով հնար այդ պահանջին պահպանելու, հաշր տոչորուել է ի ներքուստ և նախանձել ազատ տիրապետողին, ինչպէս կը նախանձի հիւանդոտ և հաշմանդամ մարդը առօրյ, զուարթ և զեղեցիկ մարդուն: Այս արգահատելի հոգեկան դրութեան մէջ տարբարխտ հաշր դառել է չափազանց նախանձոտ գէպի ամեն մէկը, ինչի նա օտար թէ հէնց իւր հարազատ եղբայրը: Այդ ծաշրագոյն նախանձը պինդ կպել է հաշի հոյուն և դառել նորա էութեան գերակշռող տարրը. նորա ցեղային զեղեցիկ աչքերի մէջ նախանձը արտափայլել է, ինչպէս սև շող պայծառ հաշելու վրայ. նախանձը խեղդել է շատ անգամ նորա խղճի ձայնը, ճնշել արդարութեան զգացումները և կործանարար դեր կատարել հաշի ընկերական և հասարակական կեանքի մէջ:

Շարունակ կրելով իւր կրճքի տակ ոխ և ատելութիւն դէպի «պիղծ թուրքը», այդ զգացումը խոր արձատ է ծղել հաշի հոգու մէջ և նա դառել է չիշաչար, նեղսիրտ, խռովող, հալածասէր, անհաշտ և եղբայրատեսաց, բռուի ըն-

դարձակ իմաստով: Եսը հօ չափազանց զարգացած է հաշի բնաւորութեան մէջ, ինչպէս այտայտութիւն զօրեղ անհատականութեան \*):

Պարսից տիրապետութեան տակ հաշերը շատ աւելի են ճնշուել, քան թէ տաճկաց. ուստի վերոյիշեալ յատկութիւնները, ինչպէս և շատ անգամ ծարայեղութեան համնող յամառութիւնը, կոպտութիւնը, զիմադարձութիւն անելու և հակառակելու մոլութիւնը և ուրիշ անհամակրելի յատկութիւններ ռուսահաշերի մէջ անհամեմատ աւելի են զարգացած, քան թէ տաճկահաշերի:

Ձիկարելի ասել սակայն, թէ վերև ցոյց տրուած յատկութիւնները հաշի բնաւորութեան զլխաւոր զծերն են. քրիստոնէական վարդապետութիւնը, գերդաստանական օրինակելի կեանքը և նահապետական վարքութեանը հզօր ազդեցութիւն են ունեցել հաշի բնաւորութեան վրայ և ճշակել են այնպիսի բարեմասնութիւններ, որպիսիներ ի զուրկարելի է փնտրել ամեն մի մեծ ազգի մէջ իսկ: Յաւալի է միայն, որ այդ բարեմասնութիւնները և ցեղային այլևայլ ընտիր յատկանիշեր, ազգային ինքնաձանաչութեան պակասութեան շնորհիւ, — ինչպէս կը տեսնենք հետեալ գլխում, — խիտտ դի-

\*) Առանձին բացատրութեան հարկ չըկայ, թէ եսը և նախանձը մարդկային բնաւորութեան ընդածին յատկութիւններն են. ճարբերութիւնը միայն նորանց արտայայտութեան չափի և ձևի մէջն է. Իսկ թէ հայերիս եսը և նախանձը ինչ չափով և ինչ կերպով է արտայայտուում, դորա վրայ ծանրանալն աւելորդ է:



րաւ են ենթարկուած կեղծ քաղաքակրթութեան  
ապականիչ ներդործութեան և՛ փոխանակ կատա-  
րելագործուելու՝ աղաւաղուած են և փութացնուած  
ազգի բարոյական այլասերումը:

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՍՅ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Ազատուելով իսլամական լծից և մտնելով քրիս-  
տոնեայ հզօր տիրապետութեան՝ Ռուսիայի թեի  
տակ, պարսկահայերի և տաճկահայերի մի ստուար  
մասը վերջապէս իրան հասած համարեց դարե-  
րով փաշփայած բաղձանքին: Այդ բաղձանքը կայա-  
ցել է քրիստոնէութիւնն ազատօքէն դաւանելու,  
տիրապետող տարրի հետ քաղաքացիական հաւասար  
իրաւունքներ վայելելու և կեանքի, աշխատութեան,  
կայքի ու զօյքի ապահովութեան մէջ:

Քաղաքական անկախութիւնը կորցնելուց չետոյ  
հայի իդէալն հէնց սա էր:

Քրիստոնեայ քաղաքակիրթ պետութեան հո-  
վանաւորութեան տակ մտնելուց չետոյ՝ հայի համար  
այլևս չըմնաց նուիրական ծգտում և բարոյապէս  
մաքառելու այն խթանը, որ նա ունէր իսլամա-  
կան լծի տակ: Վասնորոյ ռուսահայն իւր մտքի  
և հոգու բոլոր կորովը նուիրեց նիւթական ապա-  
հովութիւն ծեռք բերելու շանքերին: Ընդհանուր  
համերաշխութեան հոգին և ազգային գիտակցու-  
թիւնը, ինչպէս ցոյց տուինք Երրորդ զլխում,  
հայերի մէջ պակասում էին արդէն նորանց քաղաքա-  
կան անկախութեան ժամանակ իսկ, ո՛ր մնաց որ դար-



զանային ստրկական վիճակի մէջ: Այս իսկ պատ-  
ճառով ազատագրուած հայի նշանաբանն էր և  
մնաց «ես, իմ տունս, իմ շահս, իմ փառքս, իմ  
քէֆս...»: Կրօնը կորցրեց այն նշանակութիւնը, որ  
ունէր մահմետականներից նեղուելու ժամանակ. այդ  
ժամանակ կրօնը հայի յուսոյ խարխիսն էր և փրկ-  
կութեան ապաւենը, իսկ յետոյ դառաւ մի թույլ  
հոգեկան պահանջ և գրեթէ լոկ մի ծիսակատարու-  
թիւնն \*) — գոնէ «ինտելլիգենտ» կոչուած դասա-  
կարգի համար:

Հասարակ դասակարգը, ինչպէս ամեն ազգի  
մէջ, պիտի պահէր կրօնական ջերմ զգացումներ,  
բայց այդ դասակարգի մէջ էլ, որչափ լուծւում ենք  
և կարգում, կրօնական զգացումներն օրէցօր թու-  
լանալու և պակասելու վրայ են: Ուրեմն, էլ ի՞նչ  
է մնում հայի աւանդական կրօնասիրութիւնից. —  
սոսկ այնչափը, թէ «պէտք է երեսաս կնքել տամ,  
պէտք է պսակուեմ \*\*), պէտք է հաղորդուիլ, պէտք  
է թաթախուիլ, ուրեմն և պէտք է այս ինչ օրերը  
ժամ գնալ... \*\*\*): Այսչափը կարելի՞ է արդեօք  
կրօնասիրութիւն և բարեպաշտութիւն  
համարել \*\*\*\*):

\*) Որը նաև հրապարակապէս ծաղրուում է կոսմո-  
պօլիտ թերթի էջերում:

\*\*\*) Այն էլ շատ անգամ օտարի հետ:

\*\*\*\*) Ժամ գնալիս էլ աւելի ինչ թիւ թիւներով և  
բանանքներով զբաղուելու, քան թէ եկեղեցական արարո-  
ղութիւնը լսելու և աղօթք անելու համար:

\*\*\*\*\*) Առևտուհայերի կրօնասիրութեան մասին խիստ  
ստէպ կարելի է կարգալ հետևալ տողերին համիմաստ  
վկայութիւններ:

Ենթադրելով իսկ թէ ռուսահայ ժողովուրդն  
իւր ամբողջութեան մէջ պահել է կրօնական եռանդը,  
բայց զուրկ լինելով ազգային գիտակցութիւնից,  
նա աւելի պղատոնական զգացում է տածում դէպի  
իւր կրօնական կենտրոնը — էջմիածինը, քան թէ  
կատարեալ հնադանութիւն և անպայման անձնու-  
րութիւն է ցոյց տալիս նորան: Եւ սա այնչափ  
եղծարիտ իրողութիւն է, որ այդ հնադանութիւնը  
նոյն իսկ եկեղեցու պաշտօնեաներից շատերը չեն  
ցոյց տալիս... Սորանով կարելի է բացատրել՝ մեր  
մէջ դիւրութեամբ մուտք գործած կրօնափոխու-  
թիւնը, որն առաջ է եկել կրքերից, քմահաճօքից  
և շահասիրութիւնից, բայց ոչ դաւանական եղծար-  
տութիւն փնտրելու նախանձախնդրութիւնից:  
Կրօնափոխութիւնից ոչ նուազ աչքի ընկնող մի  
երևոյթ՝ ռուսահայերի բացայայտ համակրութիւնն  
է դէպի այնպիսի հայ թերթ, որը քարոզում է  
թէ կրօնասիրութիւնը «յետադիմութեան» և քիչ է  
մնում ասէ... «անբարոյականութեան» նշան է. թէ

«Մարդ ամաչում է, տեսնելով, որ հայը մինչև ան-  
գամ փախուստ է տալիս տօն և կիւրակի օրերը իւր  
եկեղեցին մտնելուց, աղօթելուց և մի երկու կուպէկ գան-  
ձանակ ձգելուց: Հայը կորցրել է իւր նախկին եկեղեցա-  
սիրութիւնը. նա սառել է, անտարբեր դարձել դէպի  
իւր հարազատ սրբավայրերը, դէպի այն հազարաւոր վան-  
քերն ու մատուռները, որոնց մէջ «Զարթիք, փառք իմ,  
վարթիք»-ի տեղ, նրանց աւերակներում բուերն են կռա-  
ւում, կոմ անասուններն ու գաղաններն են ապաստան  
գտնում»:

(«Նոր-Գար», 1902 թ., 2 նոյեմ. № 161).



եկեղեցական ծէսեր, ազգային աւանդութիւններ, ցեղային յատկանիշեր, ընտանեկան կեանք և սովորութիւններ, ազգային ծգտուններ և առանձնայատկութիւններ, ցեղային ուրոյն դժեր, բարեմասնութիւններ, բարոյական սկզբունքներ և պէսպէս առաքինութիւններ «խաւարամտութեան և յետադիմութեան ապացոյցներ, մօդայից ընկած գարդակ, անխմաստ և անմիտ բաներ են...» \*)

Կրօնից լետոյ ընտանիքն էր մեր ազգի գոյութեան նեցուկը: Ընտանիքն էլ հետոհետէ կորցնում է նահապետական դրութեան մէջ դարերով պահած իւր բարեմասնութիւնները, ամուսնական կապերի հաստատութիւնը և սաանում մի այլանդակ կերպարանք, որով ամուսնական հաւատարմութիւնը և ընտանեկան սրբութիւնը դառնում են «ճաղրելի», «յետադիմական» և «խաւարամտական» հասկացողութիւններ: Իւր պարկեշտութեամբ, տնարարարութեամբ և աւանդապահութեամբ օտարների մէջ բարի համբաւ և նախանձելի հռչակ ստացած հայ կիւնը՝ զանազան ազդեցութեանց տակ՝ կորցնում է իւր ազգային յատկանիշերը, չընձանելով սակայն ոչ մի ազգի կնկանր: Գերդաստանի քայքայման և հայ կնկայ այլասերման վերաբերմամբ էթէ միջավայրը (среда, milieu) մեծ դեր է խաղում, փոքր

\*) «Առաջադիմական» այս մտքերը, ինչպէս յայտնի է, ժամանակակից հրէական կոսմոպոլիտիզմի «բարձր սկզբունքներն» են:

չէ ևս ամուսնու, հօր կամ եղբոր դերը: Ամուսնու անբարոյականութիւնը և եղբոր դէշ օրինակներն էթէ փչացնում են կնամարդին, հօր անփութութիւնն էլ կամ ապիկարութիւնը՝ զաւակներին շնորհքով կրթութիւն տալու նկատմամբ, քիչ չէ թշուառացնում քաղաքաբնակ և դիւրակեցիկ հայ աղջիկներին:

Որչափ էլ տղամարդի գործը տանից դուրս լինի, բայց և այնպէս տան տնօրինութիւնը, զոնէ նիւթապէս, կախուած է հօրից, որը կարող է իւր մեծ բաժինն ունենալ զաւակների դաստիարակութեան մէջ: Կեանքի օրինակները ցոյց են տալիս, որ քաղաքաբնակ հայ ընտանիքների միջից էթէ վերանում է հայ լեզուն, հայ հոգին և հայկական վարքութեանը, յանցանքը դիսաւորապէս օտարախօս և օտարամոլ հօրն է, որի կամքից է կախուած տան մէջ հետեւելիք ընթացքը:

Հայ երիտասարդութիւնը, որի առաջադիմութիւնը միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում այնչափ ուրախացնում է նիւթապաշտ և բարձր իգէալից զուրկ ծնողներին, չ'ունի ուրիշ ծգտում և տենչանք, բացի իւր անձնական շահից և փառքից: Նոյնչափ ստրուկ փողի, որչափ և համազգեստի, աստիճանի ու շքանշանի, այդ դիպլոմաւոր ինտելլիգենցիան ստոր միջոցների մէջ խտրութիւն չի գնում իւր նպատակին հասնելու համար: Ամեն տարի հարիւրաւոր հայ երիտասարդներ դիպլոմ ստանալով՝



ստուարացնում են այն ինտելիգենցիայի դասը, որից զրեթէ ոչ մի օգուտ չ'ունի հայ ազգը, և աւելի քիչ օգուտ կառավարութիւնը, որի համար բնաւ նշանակութիւն չ'ունի, թէ այս ինչ, այն ինչ հաստատութեան մէջ հարիւրաւոր չինովնիկներ շարքում մի քանի հաշագգի չինովնիկներ կ'ան, թէ չըկան:

Ասում են, թէ վերջին ժամանակներս հայ անունը խիստ աննպաստ յանձնարարութիւն է ծառայում պաշտօն փնտրող հայ երիտասարդների համար: Բայց չընայելով սորան՝ նորաւարտ հայ ինտելիգենտներից շատերը կառավարական պաշտօն մտնելու համար հազար շէմքեր են մաշում, քծնում, աղաչում, պաղատում, խայտառակութեամբ վռնդւում են և դարձեալ գալիս. միջնորդներ և բարեխօսներ են ձգում, պէսպէս անարգ պարտաւորութիւններ են ստանձնում, օտարամոսնութեամբ կապուելով՝ ազգութիւնն են ուրանում՝ իրանց «բարեմտութիւնը և բարեխղճութիւնը» ցոյց տալու համար, և այդպիսով յաջողում են որևէ մի աննշան պաշտօն ստանալ: Այնուհետև հպարտ, խրոխտ ման են գալիս, արժան չըհամարելով դիպլոմ և պաշտօն չ'ունեցող հայերի հետ խօսել, նստել-վերկենալ, ինչպէս «ատելի արմեաշկաների» հետ...

Այս է ընդհանրապէս մեր դիպլոմաւոր ինտելիգենցիայի բարոյականը, մտապասկերը և իւր ազգի համար ունեցած օգուտը... \*)

\*) Յարգելի բացառութիւններ, իհարկէ, կան և բաւական թւով, բայց խօսքն ընդհանրութեան վրայ է:

Վերև խօսածներից ընթերցողը թող ինքը դատէ. թէ ո՞ր է տանում մեզ կեանքի հոսանքը. դէպի ազգի մտաւոր և բարոյական վերածնութիւնը, թէ դէպի նորա շուտափոյթ և վերջնական կործանումը: Այս առիթով աւելորդ չենք համարում մէջ բերել երկու վկայութիւններ, որոնցից մինը տալիս է Խարկովի հայ գաղութի քահանան՝ արժ. հ. Սրապիոն Սամուէլեանցն իւր մասնաւոր նամակում.

«Տեղիս հայ գաղութը, հայ ուսանողութեան հետ՝ շատ կարօտ է բարոյական կրթութեան: Ազգային կրթութեան խեղճութիւնը ակնյայտ է արդէն... Ինչպէս անդրադէտը, այնպէս էլ զարգացածը, ին տ ե լ լ ի գ ե ն ա ը, առանց խղճահարութեան շատ հեշտութեամբ է ամուսնանում օտարազգիի հետ: Ապօրինի ամուսնական կեանք վարողների թիւը սակաւ չէ, չընայելով որ պղպիսիներից իւրաքանչիւրն այսօր և եթ կարող կը լինէր օրինաւոր ամուսնական կեանքի մէջ մտնել և օրինաւոր հայ գերդաստան կազմել:»

«Վիեւի գինւորական շրջանի մէջ չորս հազար ցիրուցան եղած հայ զինւորներ կան, որոնց մեծամասնութիւնը դատապարտուած է կուլ գնալու հոսանքին» և այլն:

Ինչ որ ասում է արժ. Սամուէլեանց քահանան, նոյնը կ'ասէ, անշուշտ, և ամեն տեղի հայ քահանան՝ լայնածաւալ Ռուսիայի զանազան կողմերում ցիրուցան եղած հայերի մասին: Բայց բանից երևում է, որ հայկական կենտրոններում ապրող հասարակ ժողովուրդն ևս սկսել է արդէն ենթարկուել եւրոպական կուլտուրայի «չինիչ» (իմա՝ շնացուցիչ) ազդեցութեան, ինչպէս կարելի է եզրակացնել հետևալ լրագրական թղթակցութիւնից:



«Ոչ հետու անցեալում Մահմուտաշուղ գիւղի (Ալէքսանդրօպօլի գաւառում) հայ ժողովուրդը բարեպաշտ էր, բառիս բուն նշանակութեամբ, իսկ ներկայումս մի շարք վատութիւնների և աններելի մոլութիւնների է մասնուած: Սկսած 8 տարեկաններից մինչև 50 տարեկան հարուստ թէ աղքատ մարդիկ, աննշան բացառութեամբ, ծխում են, պարագում թղթախաղով: Անցեալ օրը մինը տանել էր տուել իւր միակ կովը, մի ուրիշը իւր ամենալաւ վարեւաճողը, մի երրորդը՝ հագի շորը և այլն: Իսկ օղին ու կոնծաբանութիւնը հօ պատուական տեղ ունի մեր գիւղում») և այլն:

(«Նոր-Գար») 1903 թ., ապր. 5 № 23):

Գալով կրօնափոխութեան, նա այնչափ սովորական մի բան է գառել, որ նորա խօսքն անող անգամ չըկայ: Ռուսահայ մամուլի մէջ ազգի և կրօնի անունով խօսողների մի նշանաւոր մասը — շահասիրութիւնից թէ վավաշտութիւնից դրրդւած — այլադաւան աղջիկների հետ ամուսնացաներն են կազմում: Իրանց անիծեալ սերունդը Կուրս հանելով հայ եկեղեցու ծոցից՝ այդ անզգամները դեռ շարունակ կրօնից են խօսում և հայ ստանեայց եկեղեցու նախանձախնդրութիւնը ցոյց տալիս: Եւ մեր մամուլի օրգաններն էլ, խեղդելով հմուտ զրազէտների ծայնր, մերժելով նաև յայտնի բանասէր քահանաների աշխատակցութիւնը, սիրով հիւրընկալում են ազգութեան «ազգասիրական և եկեղեցասիրական» մրտանքները և իրանց էջերը լցնում զորանց զրաւոր փոխանքով... Ազգի հաշուով ապրող մամուլն եթէ այսպէս է վերաբերում իւր ստանձնած գործի և ազգի նուիրական շահերին, էլ նա ի՞նչ իրաւունք

ունի պարտաճանաչութեան և պարտակատարութեան վրայ խօսելու և ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ նորա խօսքը հասարակութեան վրայ:

\* \* \*

Ինչպէս տեսնում ենք, քրիստոնեայ տէրութեան և քաղաքակիրթ ազգի տիրապետութեան տակ հաշերը դժուար թէ կարողանան երկար պահել իրանց ազգութիւնը, և դժուար պատճառը պիտի որոնել ոչ թէ քաղաքակրթութեան լաւ կամ չոռի կողմերի մէջ, այլ զլիսաւորապէս հայերի ազգային դիտակցութեան պակասութեան մէջ \*): Մեր հնադարեան գերդաստանական դրութիւնը, օջաղը և հայ կինը, ինչպէս ցոյց կրտանք իւր տեղում, փրկարար դեր են կատարել ազգի պահպանման և յարատեւութեան խնդրի մէջ: Օջաղի ընկնելով և հայ կնկայ այլասերուելով՝ այլասերում է նոյպէս հայ ժողովուրդը և առաջ է բերում նիւթապաշտութեան և եսամոլութեան այնպիսի տիպարներ, որոնցից մէկի նկարագրութեանը նուիրում ենք հետևեալ գլուխը:

\*) Սորա ազացոյցներից մինը կարող է համարուել խառն ամուսնութիւնը. Խարկովի համալսարանի Նախկին պրօֆեսսոր Էմիլ Գիլլոնը վիճակագրական տեղեկութիւններով ապացուցանում է թէ խառն ամուսնութիւնը Ռուսաստանում հայերի մէջ ամենամեծ տոկոսն է կազմում:



ԱՅԼԱՍԵՐՈՒԱԾ (ՋԸՌԻ) ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԻ ՏԻՊԱՐԸ,  
ԱՆՑՈՂԱԿԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ:

I.

Այն տիպարը, որ պիտի ներկայացնուի, քաջ ծանօթ է ընթերցող հասարակութեանը թէ՛ կեանքի մէջ և թէ՛ մեր վիպագիրներին, թատերագիրներին և բանաստեղծների գրութեամբ: Ուստի, նոր բան ասած չը պիտի լինենք, բացի պարզ ձևով կրկնելուց այն, ինչ արդէն չաջանի է շատերին:

Ահա, թէ ի՞նչպէս է խօսում, գործում, վարում, դաստիարակում իւր զաւակներին և զոհ սրտով ու հանդիստ խղճով կնքում իւր մահկանացուն մեր վերջրած տիպարը:

\* \* \*

Ո՞վ էր ասում նրանց (իմա՛ սոված մնացած դաստիարակներին, գրագէտներին, հին թատրոնասէրներին, օտար մամուլի մէջ հայերի պաշտպանութիւնն անողներին, հասարակաց շահերին անձնուիրար ծառայած ինփայիւններին և այլն), որ անպէտք և անխելք բաներով ժամանակ անցկացնէին. թող փող աշխատելու և մարդ դառնալու համար մտածէին. փ-ո-ոզ, փ-ո-ոզ աշխատէին: Տե՛ս, թէ ուսւր որչափ խե-

լօք մարդ է, որ Աստուծ էլ Բող է ասում. ասիւր ուսաներից մենք շատ աւելի հին ազգ ենք. նրանք աեսել են, որ մենք փողը Աստու տեղ ենք պաշտում, մեզանից շնորհք են սփորել և փողին Բող ասել: Ռուսի լիզդիւն ասիւր մին քիչ կիլտի է փ, թ, ք նա չի կարող ասել. մեր փահլիւանին ուսւր բալվան (դգուձղուխ, տխմար) է ասում. մեր թաթին էլ ուսւր տատ (գող) է ասում. մեր քիթից էլ ուսաները մին մե՛ծ շանավար կիտ (կետ ձուկն) են շինել...

Փողի զաղիքը (արժէքը) էրպէս իմանալովն է, որ Աստուած ուսին տալիս է, է՛. հէնց մեծանում է ու մեծանում: Մեր ազգը գնալով-դնալով ի՞նչի է ետ մնում ու փչանում, — որովհետեւ փողի զաղիքը շատ անգամ չի ճանաչում, ային օլին տեղը (գուր տեղը) փող շատ է խարչում. էս ինչ է՛ էջմիածնին փող պիտի զրկեմ. էս ինչ է՛ Երուսաղէմի վանքին պիտի զրկեմ. էս ինչ է՛ որդեգիր պիտի պահեմ. էս ինչ է՛ պատմութիւն պիտի տպել տամ. էս ինչ է՛ դադէթ պիտի բերել տամ. էս էլ ո՞ր մինը ասեմ... Դէ՛, ե՛կ ու էս սարսաղներին (խենթերին) բան հասկացրու և ասա, թէ նհախ (գուր) տեղը փող չեն փչացնիլ. փողը Աստու տուրքն է, հրեշտակի շունչը, մարդի հողին, աշխարհի փրկութիւնը. մեռքը բնկած ժամանակը՝ նրա պատիւը պիտի իմանաս, վրան աղօթես. կէս, չէթ (քառորդ) կոպէկն էլ հաւալի (գուր) տեղը չը պիտի խարչես:

Թուրքը որ թուրք է, էլի իրան կարճ խելքով փողի հիւնարը (գորութիւնը) շատ լաւ է



իմացել. նա ասում է « փուլ վերաննէն սողրա մոլլանի մէջիաւէ... »: Այ, օրինաւոր խօսք, այ ափերի՛մ թուրք...

Երբ էս էսպէս է, ուրեմն արին-քիտինքով աշխատած փողերս ես խի չպրտեմ բեւեօլլաթ (անօգուտ) մարդիկների առաջը: Է՛-է՛, պուճուր տղայ էի, որ հէրս տուաւ ինձ իրան բարեկամ մին գոկին, որ տանի Թաւրիզ ու մարդ շինի: Տարիներով մտի համ չեմ տեսել. կերածս օրը մին բիստիի (պարսկական մի ինչ որ մանր գրամ) կանանչեղէն — թարխուն, կինձ, սողան (սոխ) ու սխտոր է իլել, մին բիստիի էլ հաց. է՛նչափ կանանչեղէն կերայ, որ քիչ էր մնացել՝ մարմնիս վրայ խոտ բուսներ: Շաքարի համը հօ սկի տեսած չըկամ. չայր խմելից ետոյ խոզէլինս (տէրս) չաչլանի մէջ մին քանի չաչի հատիկներ կըզգէր ու կըտար, շաքար հաղարանց մէկ էր տալիս, էն էլ առաջս շարտելով. դարդակ ջուր խմելից՝ փորս ուռչում էր, տիկ դառնում. չաչից ետոյ շաքարի կտորները համբարքով դնում էր մին պղտիկ դուրիի (արկղիկի) մէջ ու կողպում: Մին անգամ գտայ դուրիի բանալին ու մէջից մին կտոր շաքար գողացայ. դուրիին բանալիս ամմայ մէջից մին քանի նաններ թռան: Էգսի խոզէլինս իսկոյն իմացաւ, որ շաքարի դուրիին բացել են. կանչեց ինձ ու թմբոց է, որ տուաւ գլխիս: Խաչ, Աւետարան, Քրիստոս, Աստուած, երգում կերայ, թէ շաքարի իրենն էլ չեմ տեսել: — Շ... օրդի, ասեց, բաս շաքարի դուրիի մէջից

նանները ո՛նց փախան: Էլ խօսք չըգտայ ասելու և մեղքս խոստովանեցի:

Դրանից ետոյ շատ զգուշ կացայ, ամմայ մրտքուճս դրի, որ գոկի գլխին վերջը մին լաւ քեալագ բերեմ (խաղ խաղամ): Տարին տարիի ետքից անցկացաւ՝ գոկից մին պակաս խօսք չըլսեցի. մեծացայ, բոյ քաշեցի. հինգ տարի առաջ խոզէլինիս առած դեվէիւնի (ուղտի բրդի) չուխան կարճացաւ, մինչև մէջքս հասաւ. ծպուա չի հանեցի: Տեսայ, որ գոկը խոնարհութեանս շատ է հաւան կենում: Վերջը նա զրկեց ինձ Մեաշիդի ու Խորասանի կողմերը խրիւ (առեաւոր) անելու: Հաւատարմութիւնով կատարեցի յանձնած գործը, մին զենիշկա (կառորդ կողէկ) էլ հարամութիւն չարեցի: Էլ լափ (բոլորովին) խոզէլինիս աչքը մտայ ու Թաւրիզ գալուցս ետոյ նա ինձ Թէհրան զրկեց, էլ տեղից էլ Մարագայ: Ճանապարհին քիչ էր մնացել, որ մին բացուր սարի գլխից գիշերը թոյ ինեմ (զլորում). նանապարհը շատ նեղ էր և զիշերն էլ սաստիկ մութ: Քարվանի հետ էի զնում: Որովհետև չարվաղարի մին նանապարհը լաւ էր նանաչում, էս էլ մին միի չազիից բռնած զնում էի. ի՛նչ պատահեց էլ քօռ եարուին, որ մին էլ էրկու օտերը բացրացած՝ էնպէս շալլաղ (կից) տուաւ սխիս, որ աչքերիցս կրակ թափուեց, առաջի կեռիքներս բերաղի զնացին, ամմա էլի չազին ձեռքիցս բաց չի թողեցի և մին էլ շալլաղ տալիս քիչ էր մնացել՝ սարից թոյ ինեմ, անդունդը ընկնեմ. մեծ կտորը ականջս պիտի մնար, ամմա Աստուած ազատեց...



Այ անիծուած դոկ, ասեցի, դէ դու տես, թէ զլսիդ ի՛նչ օյին պիտի բերեմ: Հասայ Թէհրան, մին էրկու շաբաթից ետոյ գնացի Մարաղայ ու իսկոյն նամակ գրեցի խողէյինիս, թէ իրան ապսպրած ապրանքները առնող միւշտերիններ հալա դուս չեն եկել և պէտք է, որ շուտ մին քանի հարիւր թիւման էլ հասցնի, որ էժան առնեմ ու զրկեմ: Գրեց, թէ հետս բերած ապրանքը ծախեմ ու ստացած փողով պէտք իլածն առնեմ, բայց ես հնպէսի Փեանդով մին զիր գրեցի, որ ուղած փողիս չափից էրկու անգամ աւելի զրկեց: Էլ տեսայ, որ բանս բան է. իսկոյն մին մեծ սամովար առայ ու սկսեցի խանի նման չայ խմել, բօլ-բօլ շաքար էի գցում, չայս լափ շարբաթ էր դառնում: Հետս բերած ապրանքը շուտով ծախեցի, զրկած փողն էլ ապրանքից ստացած փողի հետ մին մեծ քսակի մէջ զրի ու սնւս ծրկուեցի դէպի Զուլֆայ, էն տեղից էլ Երեւան:

Երեւանում սկսեցի զինիի առուտուր անել. ծանօթացայ մին ուսս ինչիների հետ, որը շատ սիրում էր կոնծել և ինծանից էլ զինի էր առնում: Լսեցի, որ նա կարմուռներ և շօսէի նանապարհի (խնուղու) ինչիներ է և փողրաթով (աճուրդով) կարմուռներ ու շօսէներ շինող մարդիկ շատ հարստանում են: Երեւանի՝ կատարին դիպող զինին ածեցի ու ածեցի ինչիների բողազը (կոկորդը), հետս լափ դարդաշողա (մտերիմ բարեկամ) դառաւ: Ռուսերէն էլ քիչ-միչ շալտայ բալտայ անելով բաւական սպորեցի ու ես էլ դառայ մին փողրաթչի: Շօսէից անցկացայ կարմուռչին, կարմուռչից էլ

կազարմաների (գորանոցների) շինութեան, Կաւկազի դանազան քաղաքներում:

Հինգ անգամ զիւշ բալայով (մեծ դժուարութեամբ) Սիրիից պրծայ. փողրաթով իմ շինած կազարմաներից մին քանիսը շատ շուտ փուլ եկան. եախաս (օձիքս) բռնեցին, թէ ե՛ս եմ մեղաւորը: Այ աման, այ շանրմ, այ զեօղրմ (թուրքաց գործածած պաղատական խօսքեր), վալլահ, բիլլահ ես մեղաւոր չեմ, ասեցի, մեղքը փահլաների (բանւորների) մօտն է. ուզում էք՝ անուհները տամ, բանեցէք նրանց, կախ տուէք, Սիրի կատորժնի (տաժանակիր աշխատանքի) զրկեցէք, որ է՛նչափ փողերս էլ տարան, բայց Ս.սու խաթրի ինծանից ձեռք բաշեցէք:—Ձէ՛, չէ՛, հէնց դու ես մեղաւոր, ասեցին, ու պօղ սուղ (դատաստանի տակ) գցեցին և հինգ անգամ էլ քիչ էլ մնացել կատորժնի բարօտա զըրկէին: Է՛լ ազփօկատ չի մնաց, որ բռնեցի, է՛լ փողի հետաք չի կար, որ խարջեցի, և գորով-գորով եախաս ազատեցի. վրիցս մին փուլ էլ պակասեց, հալուեցի, չփի դառայ...

Դէ՛ մահացու մեղք չի՞, որ էսպէս չարչարանքներով աշխատած հալալ փողից վեր առնեմ հարիւր կամ էրկու...—Թֆո՛ւ, թֆո՛ւ, ի՛նչ եմ ասում,— մին կամ էրկու մանէթ տամ ծերացած վարժապետին, կամ թէ ուսի, փռանցուղի, ինչիզի գաղէթներում հայերի թասիբը (նախանձախնդրութիւնը) քաշող գրողներին: Ինձ ի՛նչ, որ նրանք էլ գաղէթների մէջ զովում են հայերին և՛ հայերի նամուսը քաշելով՝ կուռում սրա-նրա հետ, ինձ հօ՛ չեն զովում,



իմ նամուսս հօ չեն քաշում, իմ անունս ու պատիւս հօ չեն քացրացնում. ինձ պօղ սուղ տուած ինչի-ներններին հօ չեն խաչտառակում: Թող զրեն, թէ ուստի տէրութեանը տասր, քսան միլիոնի խէր եմ տուել և մին նազրադ (պարգև) էլ չեմ ստացել. թող ասեն և հաստատեն, որ ես արժանի եմ պաշտո-նի պատմաստվեննի զրաժդանինութիւն (տոհմական պատուաւոր քաղաքացիութիւն) ստանալուն. թող զրեն էլ մասին, աշխատեն և բան առաջացնեն, էդպէսների համար էլի մին բան կ'անեմ և կ'ասեմ, թէ նրանք ասըլ հայեր են և հայի նամուսն են քաշում:

Ասում եմ՝ թող զրեն, թող աշխատեն ինձ համար, էն ժամանակ իմ հալալ վաստակից կրհա-նեմ ու չիզեարիցս կտրելու նման կրկտրեմ և մին հարիւր,—է՛հ, հարիւրի ի՞նչ պէտք կայ,—լիսուն, երեսուն կամ քսան մանէթ կրղրկեմ: Սոված մարդի համար քսան, տասր մանէթն էլ ախր հազարի տեղը կրբունի... Թէ չէ, աւելորդ փողով լաւն էն չի՞, որ զնամ ու նաչալնիկի (գաւ առապետի), պրիստաւի (թաղապե-տի) և սլեսաչիի (քննիչի) համար մին փառաւոր զվաննի արեդ (հրաւիրագրով կոչունք) սարքեմ, պօլկովոյ մուզիկայով (զնդի երաժշտախմբով) և սաղանդարով: Թող հէնց հինգ հարիւր մանէթ ծախս նստի. նա-չալնիկից, պրիստաւից, սլեսաչիից կամ թէ հէնց զօրօղովոյից (փողօցի պահապանից) ես միշտ խէր ունեմ. բանս փիս տեղ ընկած ժամանակը նրանք ինձ կր պրըժըցնեն: Նաչալնիկի պիսրն էլ (զրադիրը) ինձ համար մին մարդ է. ես նրան սիրով զլուխ

կրտամ և «վաշէ պրեփօսխողիտելստօ» (ձերդ գե-րադանցութիւն) կ'ասեմ. ասելով ի՞նչս կրպակասի, տեղ կայ, որ խոնարհութիւնը լաւ բան է. միշտ կր խոնարհուեմ էն մարդին, որից խէր ունեմ, անօ-գուտ մարդի հէ՛րն էլ անիծեմ...

Իսկ ովքեր են և ի՞նչ մարդիկ են զազէթնե-րում զրողները.—դիփ էլ աղքատ ու խքուտ ու ան-կուտի գատեր... էդպէսներին էլ մարդ կ'ասեմ... Եթէ մին քանի ուստի գազէթներումը միշտ գրում են, թէ «հայերը խարդախ են, խարբրայ են, Փալ-շովի բիլեթ (կեղծ թղթադրամ) շինողներ են, կոնա-րաբանդիստներ (մաքսանենդներ) են, ուրիշներին զրկող են, կաղեօննի տափեր զաֆտ անողներ են, նաւֆ-տի գողեր են, հարամգալայ են, լիրբ են, անղգամ են, տէրութեան անհաւատարիմ են» և էդպէս շատ բաներ, թող զրեն, ինձ ի՞նչ, ինձ համար հօ չեն զրում, իմ անունս հօ չեն տալիս. ամեն մարդ իրան համար պիտի մտածի \*). ամեն մէկս մեր փող աշխատելին մտիկ տանք և մեր գործը էնպէս բռնենք, որ պօղ սուղ էլ ընկնենք՝ արդարանանք: Փառք Աստու, խաների ժամանակներումը չենք ապրում, որ ոտներս, ձեռ-քերս ֆելեախկայ կօխած թակեն. ուստի զակոնումը (օրէնքի մէջ) ո՛չ ֆելեախկայ կայ, ո՛չ թակել կայ. մին բան որ իլաւ, աղփօկատ կրբունենք և նա գոր-ծին կր հետևի, մենք էլ քէֆներս քեօք ման կր զանք...

\*) Ռուսահայ զիրիլիգենաներն էլ ճէնց այդպէս չէն մտածում, կարգալով հայութեան ուղղուած տպագրա-կան նախատինքները:



Տէ՛ս որ ոռուսի զակոնը ի՛նչ լաւ զակոն է, որ է՛նչափ ինչի՛ններնրի շառից (դրպարառութիւնից) սաղ-սալամաթ պրծայ... Ի՛նչ անենք, որ մին քանի ժամանակ շնախոս կոտորուած էր (ընկճուած էի). մարդ հօ միշտ չի կարող իրան օրերը ուրախ, զուարթ անցկացնել...

Ղորդն ասեմ՝ իմ ազգիս մէջ թէ՛ւ վեց տէրտէր է իլիլ, բայց ես ո՛չ տէրտէր կը սիրեմ, ո՛չ վարդապետ, ո՛չ վարժապետ և ո՛չ էլ էդ «ազգասէր» ասուող դիրք շինողներին և գաղէթների մէջ զրոզներին: Տղէքս էլ, փառք Սասու, հայերէն մին բառ, մին տառ էլ չեն իմանում և ինձ նման՝ աչքով աչք չ'ունեն հրպէսներին տեսնելու:

Տղէքիցս մինը ափիցեր (սպայ) է. հայերին տեսնելիս, իրեսը ուրիշ կողմ է շուռ տալիս, բայց էլի մին-մին անիրես մարդիկ ճանապարհը կտրում են ու բարով տալիս. շատ կղնւում է (բարկանում է) էդպէսների վրայ, ոտերը տափով տալիս, թքում և «ախ, տի արմեաշկա» ասում: Ստում եմ «Սաշա-ջան, ախր դու էլ հայ ես, խի՞ ես հային «արմեաշկա» ասում»:—Չէ՛, չէ՛, պատա, պատասխանում է, ինձ շուն ասի, խոզ ասի, հայ մի՛ ասիլ: Իէ՛, տղան ափիցեր մարդ է, հայերից շատ է զզուել, ես նրան ի՛նչ կարող եմ ասել...

Երկրորդ տղաս էլ ինչի՛ներ (ճարտարագէտ) է. նրան զրկել են Սիբիր, արկաթի ճանապարհ շինելու. թէ՛ւ ոռոսիկը շատ չի, — ամիսը չորս հարիւր

մանէթ է ստանում,—բայց հաւատացած եմ, էրկու-իրեք տարի չի անցնիլ, որ բանկումը հարիւր հազար մանէթ նազդ փող կ'ունենայ. նրա գործը փող-րաթչիների հետ է. դրա հետաքը ես լաւ գիտեմ. փողրաթչիների հետ կ'ընկերանայ ու իրան փայլը կ'առնի, իսկ եթէ չ'ընկերանան ու չ'ուզեն աշխատանքը բաժանել, նրանց մին լաւ հուպ կը տայ, շինածները բրակ (անպէտք) կրհանէ և փողրաթչիներն էլ նեղը ընկած՝ հազարները առաջին կըցըն-ծան... Աստուած պահի, շատ դիրեաթով (արթուն, ջանասէր) տղայ է. փողի զաղիրը ինձ նման շատ լաւ է գիտում. աչքիս լիւսի պէս եմ սիրում նրան. քէֆս էր գալիս, որ ասում էր «ես քեզ ստեղծողին մատաղ, ա՛յ փող...»:

Մին տղաս էլ գիմնագումն է. տեղով մին խելք ու շնորհք է. ինձանից սկի փող չի ուզում. դնում է ընկերների մօտ և նրանց զրքերով դասերն է սփորում: Էս տարի էլ զա պրաւօ ուչենիա (ուսումնառութեան վճարը) ինքն է աշխատել: Շատ բախտաւոր է. հարուստ ընկերների հետ թուղթ է հաղ անում և միշտ տանում: Բացի զա պրաւօ ուչենիա տալը, մին ձեռք շոր և մին ջոխտ էլ շիկմ լայկովի պոլսապոշկաներ (սազուք վերնխած կիսա-կօշիկներ) է առել:

«Պսպա, ասում է, ես անպատճառ ազլօկատ (փաստաբան) պիտի դառնամ և ուզօլովնի զակոն-ներ (քրէական օրէնքներ) պիտի սփորեմ: Կաւկա-ղաւ մենակ էդ զակոնները իմանալը ձեռք կրտայ. դալադիւզ (նենգ, խարերայ), գոյ և աւազակ մար-



դիկ էս երկրում շատ են և զնալով էլ պիտի շատանան: ի՞նչ հարուստ տեղովը 25 մանէթի պողոտ (խարդախութիւն) է անում և կատորժնի բարօտա զրկուելու դատապարտում: ի՞նչ թուրքի մինին 20 մանէթ տալով՝ իրան գիւշմանին (թշնամուն) սպանել է տալիս և բանտը ընկնում: ի՞նչ քեռու աղջիկն է փախցնում և քեռուն վերին Երուսաղէմ զրկելով, նորա կարողութեանը տիրանում և էլի բանտը ընկնում կամ կատորժնի բարօտալի դատապարտում: ի՞նչ, վերջապէս, Բագում նաւթի հողեր է զափտ անում (իւրացնում) կամ նաւթա գողանում, ծախում ու դատաստանի տակ ընկնում: Էսպէս բաներ շատ...»

Ուգորովնի զակոններ իմանալով ես էդպէս գործերով կը պարապուեմ և ամեն մին իմ պրծրցրած մարդից ահագին փող կը վերցնեմ: Սուաշուց էլ ստորազրութիւն կ'առնեմ, որ ինձ հասնելի փողի կէսը էս զլխից տայ: Բան է, ազատուելից ետոյ, եթէ մինը խօսքի տէրը չը կանգնեց, տունը, տեղը ծախել կրտամ, փողս կ'առնեմ, կամ էսպէս կ'լեւուց (խարդաւանանք) կը սարքեմ, որ ոտով, զլխով կը կորչի...» \*):

Էս տղաս էլ հէնց միշտ էսպէս բաներից է խօսում: Ետս ունեմ, որ նա շատ անուանի աղօղկաւ կը դառնայ և մեծ հարստութիւն ձեռք կը բերի:

\*) Ռուսահայ ուսանողութիւն, շիտակը խօսենք՝ մեծամասնութիւնը ձեր մէջ այսպէս չէ՞ մտածել և չի՞ մտածում: ուրեմն ինչո՞ւ էր նեղանում „Армяне“ զբրի 198-204 էջերում ձեր մասին գրուածների համար:

Էն պուճուր տղաս էլ պատրաստում է զիմնագիտ մտնելու: իրան պուճուրիկ տեղովը ամմա շատ հարամզադան է. ասում է. «պապիկնկա, պապուօխ, ես դօխտուր պիտի դառնամ. չեշմակները աչքիս զրած՝ բեցեպտներ (զեղազրեր) է որ պիտի զրեմ. հիւանդի իրեսին հէնց որ մտիկ տուայ՝ նրա հիւանդութիւնը պիտի իմանամ և ասեմ՝ «դավայ՝ դենեղ» (տուր փողս):

Էդ լակոտին շատ եմ սիրում, ասում եմ. սի բալա՛, հաքիմութիւնը դժուար փեշակ է. շատ մարդիկ էլ փող չեն տալիս, «աղքատ եմ» ասելով. իսկ նա պատասխանում է՝ «աղքատ-մաղքատ ես չեմ ճանանչում. ով որ փողս չըտայ, էսպէս մին բեցեպտ կը զրեմ, որ թի՛ւշ էն աշխարհքը կը զնայ...»: Նարամզադայութիւնը հէնց աչքերից է թափւում. էսպէս խօսքեր է ասում, որ բերան մնում է բաց:

Ձէ՛, տղէքիս կողմից, փառք Սասու, շատ բախտաւոր եմ. էն էրկու մեծերը ամուսնացնելու հոգսն եմ մին քիչ քաշում. էդ էլ դժուար չի. ափիցերի վրայ բազուցի մին միլիոնատէր հայի համ աղջիկն է սիրահարուել, համ կնիկը: Սղջկայ վրայ կէս միլիոն նաղդ (կանխիկ) մանէթ պրիդան (զրամօփիա) կայ, ամմա ամեն բան կնկայ ձեռքին է. մարդը (ամուսինը) մին ուուս կնկայ հետ է ապրում և տան գործերին սկի չի խառնւում: Ինչպէս տեսնում եմ, տղաս բանը շատ պի՛նդ է բռնել—համ մօրն է ձեռքին պահում, համ աղջկանը. Ետս ունեմ, որ էդ գործն էլ Սասով զլուխ կը դայ:



Աղջիկներին կողմից ամձա շատ և շատ քամ-  
բախտ եմ. պատճառն էլ էն անպիտան Տէր-Աբրա-  
համն է: Ախպէր, մարդ կարծելով էդ տէրտէրին,  
նրան տնիս քահանան շինեցի. աղջիկներս փոքր էին,  
ուզում էի գիմնադիա կամ ինստիտուտ (կառավա-  
րական օրիորդաց վարժարան) տալ. տէրտէրը ետխաս  
բռնեց, թէ հայոց դպրոց տամ. ես էլ տուի. սե՛ ինի  
էդ օրը, որ էրկու աղջիկներս էլ զլխիս պատուհաս  
դառան: Տունս պրօկուրօր է դալիս, — հասկան՞ում  
ես՝ պրօկուրօր, — աղջիկներս դուրս չեն դալիս.  
սրեստի է դալիս՝ էլի չեն իրեում. նաչալնիկ ու  
պրիստաւ են դալիս. — էլի իրանց ցօյց չեն տալիս:  
Եթէ ուսուսուր չ'իմանային, բան չէի ասիլ, ամձա  
ջրի պէս են խօսում. նեղանում եմ վրաները, ծամերից  
բռնում, քաշում եմ, — չէ, չէ ու չէ, դախկ են անում,  
կանգնում: Բայց մին ասա, թէ ի՞նչ են անում, —  
էրկունն էլ նստած՝ Ռափի է, ի՞նչ գահրիմար է,  
կարգում են ու կարգում: Գրքերի համար թէև  
փող չեմ տալիս, բայց Տէր-Աբրահամի աղջիկը թա-  
գուն զրքեր է բերում ու տալիս նրանց: Կարգում  
են, կարգում, ետոյ էլ վեր են կենում և ծախը  
աշխարհը զգած ծււում են և «Իմ Հայրենիք»,  
«Թէ իմ այւոր», «Մայր Արաքսի», «Չայն տուր  
ով ծովակ» և ուրիշ բաներ երգում: Դորդն ասեմ՝  
էդ երգերը մին մին սիրտս շարժում են, բայց տես-  
նում եմ, որ նրանցից խէր չրկայ. խէր, խէր ասա  
դու, երգս մէրգս օրն է...

Պրօկուրօրի ախպօր տղան մեծ աղջկանս շատ  
հաւանել է, ուզում է առնի. իրան դալուն էլ

խնամի. օս է զրկել, ամձա դու տես, որ աղջիկս  
թարսն է ընկել և ասում է, թէ «անպատ-  
ճառ հայի պիտի զնամ»: Մէրն էլ հէնց էդ խել-  
քի է, բայց մօրը խօսքը ինչ ասել է, երբ տան  
մեծը ես եմ. ես եմ փող տղխատել, ես եմ Սիրիբից  
ու բանտից ազատուել, կնիկս ի՞նչ նեղութիւն է  
տեսել որ, տանը նստած՝ պատրաստ կերել է...  
Աղջկանս ասում եմ՝ «այ քած, այ գանջրլ (թուր-  
քերէն էդ շուն ասել է), հայերից ոչինչ խէր չրկայ.  
պրօկուրօրի ախպօր տղան օկրուժնոյ սուգի (նա-  
հանդական դատարանի) սեկլետար (սեկրետար — ատե-  
նադպիր, քարտուղար) է. եավաշ-եավաշ (կամաց-  
կամաց) նա էլ պրօկուրօր կրպառնայ և մին գործս  
սուգը (դատաստան) ընկած ժամանակը, մեծ յու-  
սատեղի կ'ունենամ: Վերջապէս, յիսուն հազար մա-  
նէթ պրիդանը ես ո՞ր հալին տամ»: Ո՞ւմ կ'ասես  
էս խօսքերը, զլուխը սկի բան չի մտնում...

Է՛հ, էդ էլ Աստով մին կերպ կր յաջողուի. էր-  
կուսին էլ լայիղով (արժանաւոր) ուսու չինովնիկ-  
ներին մարդի կր տամ և էն ժամանակ ամեն կողմով  
բախտաւոր կր լինեմ:

Մին մին մեր յաջօրդն է զլուխս տանում, ասե-  
լով, թէ ազգին մին բարութիւն անեմ, բայց նրա  
խօսքերը բանի տեղ չեմ գնում. ազգին բարութիւն  
անելով իմ շիրս հօ մին բան չի մտնիլ, չրիցս դուս  
կր գայ. զի՞ժ եմ, ի՞նչ եմ, որ փողս ուրիշներին  
տամ... Իմ ազգս իմ տղէքս են, իմ աղջիկներս են.



Թող ամեն մարդ իրան համար աշխատի և իրան գլխի ճարը տեսնի. մին ծակ կոպէկ էլ ոչ ովին չեմ տալ, չ'եմ...

Էն օրն էլ սափիդի (Թեթևամտի) մինը վեր է կացել ու իրան շինած հայերէն գիրքը հեռու քաղաքից ինձ զրկել: չէնց որ տեսայ գրքի գինը՝ էրկու մանէթ չիտուն կոպէկ, վեր կալայ ու դէն գցեցի: Ձի՞ է քացի տուել էդ գիրքը շինողի գլխին, ի՞նչ է. է՛-է՛րկո՞ւ մանէթ չի՛տուն կոպէկ. էդքան փողով մին քանի ամսուայ լուացքի սապոն կարելի է առնել, կամ մին տարուայ քեալլա-փաչաչի (խաշի) համար սխտոր: Մտքու՞մս ասի՝ «այ գիրք շինող լոթի, դո՞ւ ես ուզում ինձ խաբել, որ սատանային ծարաւ ջուրը կը տանեմ, կը բերեմ. գրքի վրայ «մեծպատիւ և ազգասէր» ես գրել, թէ ի՞նչ է, քեզ փող տամ. չէ՛, բալամ, չէ՛, եթէ կնեազ ու գրաֆ էլ գրես, մին թաք (հատ) կոպէկ էլ չեմ տալ...»: Ախր ի՞նչի տամ, է՛. նրա գիրքը կարդալով հօ փող դատելու նոր ֆեանդեր չըպլ՛տի սվորեմ... «Սզզը սհենց զնաց, ազզը նհենց զնաց» սարսաղ-սարսաղ խօսքերից ինձ ի՞նչ ֆայդա, ի՞նչ օգուտ... Ասում են, որ եթէ գրքի փողը չըղրկեմ, գազէթների մէջ ինձ խայտառակ կ'անի: Խայտառակ անելով ենի ի՞նչ պիտի անեն ինձ, է՛. պովեստկա (կոչնազիր) հօ չը պիտի գայ վրաս՝ սուղը զնայու համար, ըշտրաֆ (տուգանք) հօ չըպիտի տամ,—չէ՛. ուրեմն, էլ ի՞նչ կայ...

Մեր մէջ ասենք՝ էն գիրք շինողին ես լաւ եմ նանանջում, մին բանի էլ շնորհք չ'ունի, բացի միայն

գիրք գրելից. Թեաքարու (հպարտ) մին մարդ է. ոչ մին հարուստի մօտ էլ չի գնում, ոչ ովի հետ էլ չի խօսում, ոչ ովին էլ գլուխ չի տալիս, տհենց մարդից ինձ ի՞նչ օգուտ. եթէ նա չիբա-գիրան (գրպան մանող, այսինքն՝ քսուող, շողոքորթող) ինէր, աշխարհքիս ֆեանդ ու ֆունդերը մին քիչ իմանար և փողի զադիրն էլ ճանանչէր, ես նրան մեծ խէր կը տայի, գրքի համար էլ մին կարծիր տասնոց թղթի մէջ փեչատած (կնքած) փեղքեղ կը զրկէի: Բաց տես, թէ ո՞րքան անշնորհք մարդ է, որ իմ ափիցեր տղիս Բագուի հարմնացուի վարժապետը ինելով՝ մի՛ն գիր էլ ինձ չի գրում, թէ ինքն էլ իրան կողմից կ'աշխատի, որ գործը գլուխ գայ. հալա (դեռ) գիւման եմ տանում (կասկածում եմ), որ նրա սրտով էլ չի, որ էն աղջիկը իմ տղիս տան: Դէ՛, ես տհենցի զրկած գրքին փող կը տամ. ախր նրան ի՞նչ, որ էն աղջիկը իմ տղիս պիտի տան կամ մին ուրիշին, ինքը հօ չի՞ պիտի առնի, կնկայ ու մին բեկիւզ (խումբ) արախայոց տէր ինելով... Դէ՛ տհենց մարդին սափիդ չի ասեմ, ի՞նչ ասեմ...

Յաջորդը ինձ տտում է, թէ տանս մարդիկ հաւաքելով՝ էնպէս զիշեր է պատահում, որ հարիւր, էրկու հարիւր, իրեք հարիւր, հինգ հարիւր մանէթ եմ տանել տալիս թղթախաղի մէջ, իսկ ազդին մին կոպէկ էլ չեմ տալիս: Բաց չիմարը սկի չի մտածում, թէ հարիւր, էրկու հարիւր, թէկուզ հէնց հազար մանէթ տանել տալով իմ տանս և անունիս



պատիւն եւ պահում: Բիրժում (բորսայում) իրեալիս շատերը խոնարհ զլուխ են տալիս ինձ և առողջութիւնս հարցնում: Գործով Մոսկով, Ռոստով կամ Նաշտարխան գնալիս՝ մեծ-մեծ մարդիկ ինձ համար զոնախլըղ են անում (կոչուենք են սարքում) և Ամպրոսիյ Աւգէչիչ են ասում. Երևան գնալիս՝ մեծապատիւ Համբարձում-աղա են ասում. Նուխի գնալիս՝ Համբարձում-բէգ են ասում \*). Թաւրիզ գնալիս՝ Համբարձում-խան են ասում. դէ՛, ես գամիրչի (գարբին) ուստա Աւետիբի տղան ինե՛մ, էսչսփ էլ անուն վաստակած, դէ՛ ամօթ չի՞ ինձ համար, որ իմ պատիւս չըպահե՛մ... Շատ անգամ ինքս ինձ ասում եմ՝ «ա՛խ, գե՛օռն չաթտանս, ա՛ հէր, մին վե՛ր կաց գերեզմանից, տե՛ս, թէ՛ տղադ ի՛նչ փառքի մէջ է, է՛...»:

Յաջորդի խելքը էսպէս բաներին ի՞նչ կրհասնի. սկի առաջնորդն էլ, կաթողիկոսն էլ իմ անվալիցիս (հանգամանքիցս, զրութիւնիցս) բան չեն հասկանալ...

Յաջորդի հետ ամձա մին քիչ պօլիտիկա եմ անում. ուղում եմ մին կերպ հօրս ոսկրները էն բաչարան (հեռու անապատ) տեղից հանել տամ և մեր թաղի եկեղեցու գաւիթում թաղել տամ: Յաջորդի ականջը զցել եմ, թէ էջմիածնին հինգ հազար մանէթ կրտամ, եթէ հրաման տայ՝ հօրս ոսկրները էն գերեզմանատանից հանելու և առօք փառօք մեր եկեղեցու գաւիթում թաղելու: Լսելովս՝ յաջորդն

\*) Ականջը կանչի մեր Նուխուայ Արմուդ-Ալի «բէ-գերի»:

էլ զրել է վիճակաւորին, վիճակաւորն էլ՝ էջմիածին: Իսն է, եթէ յաջորդը կարողացաւ ուղածս գլուխ բերել, մին լաւ խաչհամբօջը կը տամ նրան, եթէ ոչ՝ էդ փողն էլ ջիբումս կը մնայ, պրծա՛ւ զնաց...

Բացի դրանից մին փափագս էլ էն է, որ Տէր-Արութիւնով ազգանունս փոխել տամ ու Պրօտոպոպով կոչուեմ. պրօկուրօրի հետ էդ մասին խորհուրդ եմ արել. նա ասում է, թէ դա շատ հեշտ բան է, պէտք է մին խնդիրք ուղարկեմ Պետրբուրխ և իրաւունք կրտան ինձ Պրօտոպոպով գրուելու: Էս բանն էլ, որ մտածում եմ, որդկերանցս համար է. թուրքը ասում է՝ «զաման սաթար սամանի». Տէր-Յարութիւնի ժամանակները ուրի՛շ, մեր ժամանակները ուրի՛շ... Հայութիւնից բացի վ՛նաս՝ մարդին սկի խէր չըկայ... Քանի կենդան եմ, էդ էլ կ'անեմ և արխային սրտով ու հանգիստ խղճմտանքով աչքերս կը փակեմ \*):

## II.

Պրօտոպոպովները մեր մէջ, ինպէս արդէն ասացինք այս զլխի սկզբում, անձանօթ տիպեր չեն. նորանց զօջութիւնը նշանակ պիտի համարել ազգային զիտակցութեան պակասութեան: Պրօտոպոպովի յատկութիւնները եթէ նշմարւում են ուսասհայերի փոքրամասնութեան մէջ, մի՛ թէ մէկը կարող է համարձակուել ասելու, թէ դորանք հայ ժողովրդի

\*) Հապա գեօղբագեօղը ո՞վ կը լինի...



ընդհանուր չատկութիւններն են: Իսկ թէ ի՞նչ չատկութիւններով է սփռուած հայ ժողովուրդն իւր ընդհանրութեան մէջ, որչափ բարձր բարոյականի տէր է նա, բարեսիրութեան, մարդասիրութեան, բարեպաշտութեան և նոյն իսկ ազգասիրութեան որչափ սկզբունքներ և որչափ զգացումներ են թագնուած այդ ժողովրդի մտքի և սրտի մէջ — դորա մասին փոքր ինչ գաղափար տուինք առաջին գլխում, որի մէջ խօսող հայ կինը մի բացառիկ անհատ է, այլ հարիւր հազարներէից դէթ մինը \*):

Եւ այսչափ բարոյականը պահած մի ժողովուրդ չորս-հինգ դար ապրել է ոչ քաղաքակիրթ աշխարհի կենտրոնում, այլ բիրտ, անկիրթ, պէսպէս մոլութիւններով վարակուած ասիացիների լծի տակ և նորանց հետ կենակցելով: Սա ապացուցանում է, անշուշտ, մեր փոքրիկ ազգի կուլտուրական մեծ ոչփր և խուժադուժ ազգերի ազդեցութեան զարմանալի արիւթեամբ դիմադրելու կարողութիւնը:

Պրօտոպոպովը պատկանում է հայ ազգի վաճառական դասակարգին, բայց այդ դասակարգի մէջ էլ Պրօտոպոպովները, կարծում ենք, թէ փոքր մաս են կազմում \*\*): Պրօտոպոպովներից զգուժ է ինքը

\*) Ընդգծուած խօսքերի վրայ ընթերցողների յատուկ ուշադրութիւնն ենք դարձնում:

\*\*) Յոռետեսները կարող են առարկել, թէ վաճառականների մեծամասնութիւնը մի մի Պրօտոպոպով է ներկայացնում, բայց դորա հետ համաձայն չենք. Պրօտոպոպովների թիւը դուրսէ թէ հետզհետէ աւելանայ ազգային հանգամանքների ազդեցութեան տակ, բայց առ այժմ սահմանափակ է:

հայ ժողովուրդը և պարսուում է ու անիծում նորանց: Մինչդեռ վերցնենք մեր դարևոր դրացիներին, թուրքերին և պարսիկներին, և նորանցից ամենազարգացածին նկարագրենք Պրօտոպոպովի չատկութիւնները, ասելով, թէ այդ չատկութիւնները կրողը հայ չէ, այլ մի թուրք կամ պարսիկ է. լսողը կը զարմանայ և հասկանալ իսկ չի կարող, թէ ի՞նչ դատապարտելի բան կայ մեր ցոյց տուած չատկութիւնների մէջ...

Նոյնը կարելի է ասել և «չէնտլմէն» վրացի իշխանի մասին, որի մէջ եսականութիւնը և նիւթապաշտութիւնն ընդհանրապէս նուազ զարգացած չէ, քան թէ մեր Պրօտոպոպովների մէջ. տարբերութիւնն այն է միայն, որ Պրօտոպոպովը միջոցների մէջ ազնուութիւնը և անազնութիւնը չբանազանելով, փող է վաստակում, իւր սեփական տունը շինելու և ընտանիքն ապահովելու համար, իսկ վրացի «զարդիմանդ կնեազը» ոչ նուազ ազահութեամբ փողի ետեխն է ընկնում՝ իւր տունը քանդելու և իւր ցոփակեաց պահանջներին յագուրդ տալու համար:

Վրաց ազնուականների հողերը հետզհետէ էթէ դառնում են պետութեան և ռուս ազնուականների սեփականութիւն, մի թէ դա փող ձեռք բերելու ջանքերի հետևանք չէ: Իւր տունը քանդելով փող ձեռք բերելն արդեօք «ազնուութիւն» կարելի է համարել: Գութայիսի և Թիֆլիսի դատարանները շարունակ ի՞նչ դործեր են քննում, եթէ ոչ մի կտոր հող՝ եղբայր եղբօրից, ազգական ազգականից չափը-



տակելու համար վրաց իշխանների սպանութիւն-  
ների գործը... Սա նիւթապաշտութիւն չէ, եսամո-  
լութիւն չէ, հսպա ի՞նչ է:

Անցնենք Եւրոպայ և Ամերիկայ և եթէ չենք  
կարող մի քանի տողով այն տեղ ապրող «լուսաւոր  
և մեծ ազգերի» հրեշաւոր նիւթապաշտութիւնը  
և շահամոլութիւնը վեր հանել, ասենք գէթ այնչափը,  
թէ այդ ազգերը, ոտից մինչև գլուխ զինուած,  
սոված դադանների նման ատամներն են թակում և  
աչքերն այս ու այն կողմ յառած՝ յարձակում են,  
պատառոտում և հում-հում ուտում տկարներին,  
ասելով, թէ «քաղաքակրթութեան և առաջադիմու-  
թեան մեծ մի ս ս ի ա են կատարում...» այսինքն, մար-  
դու միտ են ուտում...

Ուրեմն, մերկացնելով մեր Պրօտոպոպովների  
պակասութիւնները, զորանով մենք չենք նախատում  
և արատաւորում հայ ազգութիւնը,—ինչպէս որ  
կարող են առարկել «բարեմիտ» ոմանք,—այլ, յանուն  
հայ ազգի պէսպէս բարոյական արժանեաց, դատա-  
պարտում ենք մեր մէջ դտնուած չափազանց նիւ-  
թապաշտ և մարդկային ու ազգային արժանիք և  
պարտաւորութիւններ չընանաչող խոտելի արարած-  
ներին:

Ռուս հրապակախօսներից ոմանք շարունակ  
վատարանում ու խժբժում են հայերին և՛ հայ վաճառա-  
կանների թերութիւններն ընդհանրացնելով ամ-  
բողջ ազգութեան վրայ՝ հայ ազգը «չարչիական

հողով տողորուած» են հռչակում: Այդ կարգի հրա  
պարակախօսներ օգուտ են քաղում նորանից, որ հայերը  
չունեն մայրաքաղաքում ունսերէն լեզուով իրանց  
սեփական օրգանը, որի մէջ կարողանային պատաս-  
խանել ամեն մի զրպարտութեան և անարգար յար-  
ձակումներին. ուստի զիտակցաբար չեղաթիւրում են  
ճշմարտութիւնը և տմարգաբար հարուածում անլեզու  
և անմուտնչ հայ ազգը: Այդ օտարատեաց մարդիկ,  
իհարկէ, շատ լաւ զիտեն, թէ հայերի վաճառակա-  
նութիւնը Ռուսաստանի ընդհանուր վաճառակա-  
նութեան գէթ մի աննշան մասն է կազմում. թէ  
վաճառականը, ի՞նչ ազգից էլ լինի, հետևում է  
առհասարակ վաճառականների մէջ ընդհանրացած  
այն խօսքին, թէ не обманешь—не продашь (եթէ  
չըխաբես, չես ծախիլ). թէ վաճառականութիւնն  
իւրաքանչիւր ազգի բարգաւաճման դորաւոր ազ-  
գակներից (facteur) մինն է, և այլն և այլն:

Իսկ թէ հայ ազգն ո՛չ թէ միայն իւր ընդ-  
հանրութեան, այլև փոքրամասնութեան մէջ բնաւ  
չէ տողորուած չարչիական հողով. թէ հայ ժողո-  
վուրդն իբնէ անտի գլխաւորապէս եղել է և է  
երկրագործ և արհեստաւոր ժողովուրդ. թէ հայերն  
առհասարակ չունեն հրէից, չունաց և այլ վա-  
ճառական ազգերի որոշիչ յատկութիւնները. թէ  
փոքրաթիւ հայ վաճառականներ որչափ մեծ ծա-  
ռաչութիւններ են մատուցել Ռուսաստանին, առ-  
ևտուրը և արդիւնադործութիւնը նորա մէջ ծաղ-  
կեցնելու վերաբերմամբ և այլն և այլն, մեզ համար  
պատուաբեր շատ այսպիսի հարցերի պարզաբանու-



Թեան «Армяне» գրքում բաղձաթիւ էջեր են նուիրուած, նամականդ նորա երրորդ բաժնի մէջ «Հայ ժողովրդի մասին» խորագրով \*):

Իդէպ ասած՝ էլ բան չը մնաց, որ չ'արտայայտուէր օր. Նէյմանի «Армяне» աշխատութեան մէջ ի շատագովութիւն և ի խրախօս հայ ազգի, այնչափ առատ և պերճախօս փաստերով: Գրքի առաջին երեք մասերի մէջ վեր հանուեցին հայ ազգի ընտիր յատկութիւնները — նորա պարկեշտութիւնը, ազնութիւնը, մարդասիրութիւնը, արգարասիրութիւնը, ընտանեւսիրութիւնը, վեհանձնութիւնը, պատուազգացութիւնը, աշխարհաշինութեան և քաղաքակրթութեան հողին ու ընդունակութիւնները, քաղաքացիական և զինւորական սխրագործութիւնները, եւրոպական և ասիական զանազան ազգերի պատմութեան մէջ կատարած կուլտուրական և շինիչ դերը, և այլն և այլն: „Армяне“ գրքում հակիրճ, բայց անհերքելի և շախչախիչ փաստերով, պարզ և բանաւոր դատողութիւններով, համարձակ ու անվեհեր խօսքերով ցոյց տրուեց մեր ազգի քառասունհարեան պատմական կեանքի արժանիքը, վեր հանուեցին այդ զարմանալի ազգի պատմութեան մէջ բաղձաթիւ պայծառ կողմեր, լուսաւոր գծեր, հողեկան անստգիւտ արիւթթիւն, անսպառ կորով, մարդասիրութեան, ազատասիրութեան և ազատամտութեան վեհ հողի և շատ այսպիսի յատկութիւններ, \*\*), բայց այդ ամենին մեր դիպրոմաւոր ինտել-

\*) „Армяне“ էջեր 132-197.

\*\*) Վարդա „Армяне“ էջեր 47-67, 67-132.

լիգենցիայի մեծագոյն մասն ո՛չ թէ միայն կարեորութիւն չըտուեց, այլ՝ ընդհակառակն՝ թշնամարար իսկ վերաբերուեց և «Մշակի» թելադրութեամբ, ինչպէս և երկու տէրանց ծառայող ո՛րեէ մի քնձրոտ խրմբազրի և ընկ. գաղտնի հրահանգներով, բոլոր շանք զործ դրեց հայ ժողովուրդը մոլորեցնելու համար, տարածելով ամենուրեք, թէ «Մագդա Նէյմանի զիրքը հայ ազգն ամբողջովին խայտառակուծ է, չաչս ոռու ընթերցողների նորան հողի հետ հաւասար է անուծ, սանդարածեալ խորքն է իջեցնուծ, մահացու հարուած է տալիս» և չըգիտեմ, թէ էլ ի՛նչ:

Բայց ինչո՞ւ և ի՛նչպէս.— անհ, թէ ի՛նչպէս:

„Армяне“ գրքի չորրորդ մասի մէջ, խօսելով ոռուսաց բարձրագոյն դպրոցներն աւարտող հայ ինտելլիգենտների մասին (որոնք հայ ժնդովրդի <sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub> իսկ չեն կաղմուծ), ի միջի այլոց ասուած է, թէ «այդ ինտելլիգենտները ինչ-ինչ պատճառներով այնչափ փչացած արարածներ են դուրս գալիս, որ հայ ժողովրդի կատարեալ հակապատկերն են ներկայացնում: Բացառութիւնները մի կողմ առնելով՝ նորանք ո՛չ պատիւ ունեն, ո՛չ խիղճ, ո՛չ օրէնք և ո՛չ հաւատ. նորանք հայ ազգի ո՛չ կրօնական Պետին են ճանաչում և ո՛չ աշխարհակոմ Պետին. մէկ խօսքով՝ ո՛չ Աստուծուն են ճրագ և ո՛չ սատանային կրակ» \*):

Վարո՞ղ է արդեօք մէկն ասել, թէ այս խօսքերը ճշմարիտ չեն, կամ թէ՛ մերկացնելով մեր դիպրոմաւոր ինտելլիգենցիայի մեծամասնութեան իսկա-

\*) Վարդա „Армяне“ էջեր 199, 203.



կան պատկերը, դորանով «նախատուած և խայտա-  
ռակուած» եղաւ հայ ազգը, որի մէջ ղիպլոմաւոր  
ինտելլիգենցիան, ինչպէս արդէն նկատեցինք, հա-  
րիւրին <sup>1</sup>/<sub>2</sub> տոկոս անգամ չի կազմում և զրեթէ ոչինչ  
առնչութիւն չ'ունի այդ խեղճ ազգի շարնութարեաց,  
տրամութեան և ուրախութեան, մտաւոր և բա-  
րոյական առաջադիմութեան գործի հետ:

Իշխան Վլադ. Աետ. Մեղչերսկին թերևս լի-  
վին իրաւունք ունի նկատելու, թէ մեր ինտելլիգեն-  
ցիան ներկայացնելով մաքուր և ազնիւ (ЧИСТЫЙ  
И ЧЕСТНЫЙ) հայ ժողովրդի հակապատկերը, ամենևին  
մի բացառիկ երևոյթ չի կազմում, այլ նա սոսկ ընդ-  
հանուր և ախուր երևոյթն է արտացոլացնում \*):  
Նոյն բացատրութիւնը տուեց ևս ղինւորական ակա-  
դեմիայի պրոֆեսոր Օւլովը՝ «Նովոյէ Վրեմիայի»  
էջերում «Армяне» գրքի վերաբերմամբ արած իւր  
ընդարձակ և լուրջ քննադատութեան մէջ: Միևնոյն  
կարծիքը յայտնեցին մայրաքաղաքի մեծ թերթերի  
մէջ մի քանի ուրիշ քննադատներ ևս, միաձայն  
ընդունելով, թէ օր. Մագդա Նէյմանի աշխա-  
տութիւնը հայ ազգութեան կորովի և  
հմտաւոր պաշտպանութիւնն է \*\*):

\* Վարդա «Армяне» էջեր 293-295.

\*\* Օր. Նէյմանին հայերի կողմից գրուած նամակների  
մէջ գրեթէ ամենքը միևնոյն կարծեքը յայտնեցին, ասելով՝  
թէ օտարազգիների հետ յարաբերութիւն ունեցող ազգա-  
յինները պարտաւոր են իրանց մօտ ունենալ միշտ այդ  
աշխատութիւնից մի որոշ քանակութիւն՝ օտարազգի բարե-  
կամներին յարմար առիթով մի մի օրինակ նուիրելու համար:

Ճէնց դորա համար էր երևի, որ հայութեան  
շահերի եռանդոտ պաշտպան մի օտար կնոջ հաս-  
ցելին «Մշակի» էջերում «վայելչօրէն և ասպետօրէն»  
այնչափ նախատական խօսքեր կուտակեցին և ազգի  
սիրոյն կեանքը ղնողին էլ «մասնիչ» և «ղաւաճան»  
անունով պատուեցին... Ինչ է թէ՛ իրանց կուռք Գրի-  
գոր Արծրունին զրչի մէկ հարուածով «Армяне» գրքի  
մէջ շարոււփշուր եղաւ \*) և «ամենազօր» համարուած  
այդ կուռքից Գնձղուկի գօրութիւն իսկ չի մնաց \*\*):  
Հաւատացէ՛ք «ազատամիտ» կռապաշտներ և ազգա-  
կործան խաչագողութեան հերոսներ, որ ձեր պաշ-  
տած Գրիգոր Արծրունին՝ տան հինգերորդ յարկի պա-  
տուհանից սալաչատակի վրայ նետած բարակ ապա-  
կու պէս փշուր-փշուր չէր լինիլ, եթէ նա իւր  
մտաւոր և բարոյական յատկութիւններով այդ ապա-  
կու չափ ղիւրաբեկ չի լինէր, այլ ունենար՝ չ'ասնք  
ադամանդի կամ ոսկու յատկութիւն, զոնէ կեղծ  
փիւրիւղի և կլեկախառն մի անարժէք մետաղի...  
«Անխորտակելի» կարծուած Գրիգոր Արծրունու շա-  
րաչար խորտակուիլը և սպառ սպուռ շախշախուիլը  
ցոյց է տալիս այն, թէ ինչպէս որ ապակին սրբե-  
լով և չղկելով ադամանդ չի դառնալ, այնպէս էլ

Վյդ նպատակն են ունեցել, երևի, ունեւոր ոմանք,  
պահանջելով միանգամից 30, 40 օրինակ «Армяне» գրքե-  
րից, վերագիր վճարով:

\*) Վարդա «Армяне» էջեր 204-252.

\*\* Նթէ կարգալ «Армяне», այլ ոչ միայն Լէօի վի-  
պագրական Փանտասմագօրիան Գրիգոր Արծրունու  
մասին:



աղաճանդը կեղտոտելով ու ցեխի մէջ թաթախելով իւր արժէքը չի կորցնիլ և ապակու տեղ չի անցնիլ, բացի միայն երեսանների և պակասամիսների աչքում...

„Армяне“ զրքում Գրիգոր Արծրունուն վերաբերեալ կտորի մասին շատերից լսած ենք, թէ ինչո՞ւ հայերէն չէ զրուել և Գրիգոր Արծրունու կենդանութեան ժամանակ չէ հրատարակուել:

Ահաւասիկ սորա բացատրութիւնը:

1892 թուի սկզբներում, երբ դեռ կենդանի էր Գրիգոր Արծրունին, Պետերբուրգում հայերէն զրեցինք զրեթէ ճիշտ այն, ինչ որ երևաց 1899 թուին («Армяне») զրքի չորրորդ մասի մէջ: Տպագրութեան համար պատրաստուած այդ զրութեան վերնագիրն էր «Իմ չիշոյութիւնները և «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին»: Աշխատութեան հրատարակութիւնը սակայն չըջաջողուեց մի անձի կամայականութեան շնորհիւ և զորա համար էլ այդ անձը արժանացաւ «Մշակի» ղեկավարների առանձին համակրութեան և փառաբանութեան: Զուրն ընկած վերոյիշեալ աշխատութեան պատճէնը, ինչպէս և նորա հրատարակութեան վերաբերեալ մի երկու պաշտօնաթղթերի պատճէնները մնացել են մեզ մօտ իբր սպացոյց: Պատճէնի բովանդակութիւնը մեր օգնութեամբ թարգմանելու ժամանակ յարգելի օր. Նէյմանը բաւական բան հանեց, բայց մնացածի լեզուն և ոճը թողեց անփոփոխ:

Իսկ թէ ի՞նչ հարկ կար Գրիգոր Արծրունու և նորա նորագոյն կուսակիցների ազգուեր գործունէութեան մասին հայերէն կամ ռուսերէն գրելը, զորա պատասխանն էլ կարելի է գտնել նոյնիսկ ազգաւեր բառի մէջ...



Յ Ա Ն Կ

Էջեր

Պ. Աւետիս Հախումեանցի նամակը օր. Մազբա Նէյմանին (ռուսերէն) . . . . .	3
Յառաջաբան . . . . .	5 - 18
I. Նահապետական հայ կնկայ խրատները, առաջները և հայեացքները . . . . .	18 - 68
II. Միջանկեալ նկատողութիւններ . . . . .	69 - 85
III. Հարեանցի հայեացք մեր ազգի քաղա- քական կեանքի վրայ . . . . .	86 - 92
IV. Հայ ազգը մահմետական տիրապետու- թեան տակ: Նորա մէջ առաջ եկած յատկութիւնները . . . . .	93 - 98
V. Հայութիւնը քրիստոնէայ տիրապե- տութեան տակ . . . . .	98-107
VI. Այլասերուած (չբռ) ռուսահայերի մի տիպարը . . . . .	108-135

Տպագրական սխալներն անուշադիր են թողուած:





« Ազգային գրադարան »



NL0194369



